Azg
Ազգ
5 ԱՊՐԻԼ 2008 ՇԱԲԱԹ 65 (3959)

«Կարմիր շան ոռնոց» դրաման Հոլիվուդում

Հոլիվուդի էլ Պորտալ թատրոնում մայիսի 14-ին տեղի կունենա «Կարմիր շան ոռնոց» դրամայի համաշխարհային պրեմիերան: Այն 20-րդ դարասկզբին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մասին է եւ ներկայացնում է մի ընտանիքի պատմության միջոցով: Մինչեւ հունիսի 13-ը բեմադրվելիք ներկայացման գլխավոր դերակատարն է կեցլին Չալֆանտը:

Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տարեդարձը Լոս Անջելեսում

Հարավային Կալիֆորնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի 3-րդ տարեդարձի կապակցությամբ մայիսի 18-ին Լոս Անջելեսում կկայանա նշանավոր համայնային ղեկավարների մեծ հավաք: Միջոցառման նպատակն է արժեւորել Կալիֆոռնիայի հայ համայնքի ձեռքբերումները վերջին հիսուն տարիների ընթացքում:

Ռոբերտ Քոչարյան. «Սկզբունքային հարցերում խոսք անգամ չի կարող լինել զիջումների մասին»

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Արգենինկենսբանկի» նոր գլխամասային գրասենյակի բացմանը նախագահ Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց Հայաստանի արտաքին եւ ներքին քաղաքականության վերաբերյալ տրված հարցերին:

Պատասխանելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Արդբեջանի արգործնախարարի վերջին հայտարարությանն առնչվող հարցին, Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ Արդբեջանը վերջին ժամանակներում սկսեց օգտագործել Հայաստանի ներքաղաքական իրավիճակը՝ ազդելու համար ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների վրա: Սա, ըստ նախագահի, պետք է ստիպի Հայաստանին պատասխանել դիրքորոշման խստացման ձեւով, եւ սկզբունքային հարցերում ու մոտեցումներում, բնականաբար, խոսք անգամ չի կարող լինել զիջումների մասին: Արդբեջանը փորձելու է օգտագործել այդ վիճակը, եւ պետք է գիտակցել, որ Հայաստանի կայունությունն ու տնտեսական զարգացումը լավագույն երաշխիքն են Լեռնային Ղարաբաղի հարցում ամուր դիրքեր ունենալու համար:

Միաժամանակ, Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ չի բացառում Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը եւ, որ Հայաստանի իշխանությունները այդ քայլին կարող են գնալ ամեն պահի: Հայաստանի նախագահն ընդգծեց, որ Արդբեջանի կեցվածքը եւ վերջին քայլերը ստիպում են հայկական կողմին ավելի վճռական լինել: Այն հարցին, թե Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչումը չի բերի բանակցությունների դադարեցմանն ու պատերազմի վերսկսմանը, Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց, որ 10 տարվա ընթացքում երկու նման իրավիճակներ եղել են, եւ եթե ինքը կարողանար դրսեւորում չցուցաբերեր, բանակցությունները կարող էին Հայաստանի համար անցանկալի զարգացում ունենալ: Սակայն, եթե անգամ իրադարձություններն այդ ընթացքն ունենան, ապա, նախագահի կարծիքով, չպետք է վախենանք դրանից եւ գնանք ինչ-որ զիջումների:

Տես էջ 3

Հուբ-երեկո՝ նվիրված Խորեն Ա կաթողիկոսին

Մարտի 6-ին, ժամը 17:45-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունենալու «Նահապետ Հայրապետը» խորագրով հուբ-երեկո՝ նվիրված երանաբանոռ Տ.Տ. Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի նահապետության 70-րդ տարելիցին:

Հուբ-երեկոյի ընթացքում կլինի նաեւ արխիվային փաստաթղթերի եւ նյութերի ցուցադրություն:

Հրավիրում ենք զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներին մասնակցելու միջոցառմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊՀԱՅԻՆ ԱՌԻԹՎ

Պարզաբանում

Մարտի 4-ին «Հայկական ժամանակ» եւ «Չորրորդ իշխանություն» թերթերում տեղ են գտել հրապարակումներ՝ կապված Երեւանում մարտի 1-ին լույս 2-ին տեղի ունեցած բախումների հետեւանքով զոհվածների մահվան փաստաթղթերի հոգեհանգստյան արարողության կատարման հետ:

Պարզաբանում ենք, որ ընկալալ ավանդույթի համաձայն՝ մահվան յոթնօրեքի, քառասնօրեքի, տարելիցի առիթներով հոգեհանգստյան արարողությունները եկեղեցիներում կատարվում են հիշյալ թվականներին մերձավոր կիրակի օրերին, հավատս Սուրբ Պատարագի: Միակ բացառությունը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրն է՝ մարտի 24-ը, երբ, անկախ շաբաթվա օրվանից, բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ եւ կատարվում հոգեհանգստյան արարողություն:

Անընդունելի եւ դատապարտելի է զոհերի մահվան քաղաքական շահարկումը, ինչպես նաեւ՝ հրապարակումների ոճն ու բնորոշումները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԽՍՄԱԿԱՐԳ

Ագոն գնաց, Վենետիկը գալիս է

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչներն ապրիլի 15-ին կամ 16-ին կժամանեն Երեւան՝ քննարկելու «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքում կատարված փոփոխությունների վերաբերյալ որոշ հարցեր: Նախատեսվում են հանձնաժողովի անդամների հանդիպումները քաղաքական բոլոր ուժերի հետ՝ քննարկելու փոփոխությունների վերաբերյալ հարցերը: Հաշվի առնելով ինչպես հանձնաժողովի, այնպես էլ խորհրդարանական ուժերի տեսակետները՝ կկատարվեն անհրաժեշտ փոփոխություններ:

Հացադուլը շարունակում է 13 բանտարկյալ

Հայաստանի արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության մամլո քարտուղար Արմեն Բաբայանն այսօր «Ազատություն» ռադիոկայանին հայտնել է, որ արդեն 11-րդ օրը հացադուլը շարունակող «Հանրապետություն» կուսակցության խորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցի առողջական վիճակը բավարար է: Երեկ Սուրենյանցի տիկնոջ պատգամավոր Հուլիկ Ասատրյանը ասել էր, որ Սուրենյանցի առողջական վիճակը մտահոգիչ է: Միաժամանակ, Արմեն Բաբայանը փոխանցել է, որ այս շաբաթ հացադուլ հայտարարած կալանավորներ Խաչիկ Գասպարյանը, Ռաֆա Պետրոսյանը եւ Արամ Բարեղամյանը հացադուլը դադարեցնելու մասին հայտարարություններ են տվել:

ՀԱՍԱՐԱԿ

Կոտմիլա Պուտինան կմասնակցի Երեւանում Ռուսական գրքի կենտրոնի բացմանը

Մարտի 7-ին մեկօրյա այցով Հայաստան կժամանի Ռուսաստանի առաջին տիկին Լյուդմիլա Պուտինան: Նրա այցելության հիմնական նպատակը Ռուսական գրքի կենտրոնն է, որի բացման արարողությունը տեղի կունենա հենց երկուշաբթի օրը: Ռուսաստանի առաջին տիկինը կայցելի նաեւ Երեւանում Մոսկվայի տուն, կլինի Հայաստանի նախագահի հյուրը:

Ա. Հ.

Երկու կին փոխնախագահ՝ աջուահյակ կողքերին

Ըստ տեղյակ աղբյուրի՝ ՕԵԿ-ին առաջարկվող պատգամավորների մեծ մասն արդեն որոշակի է: Նրան են առաջարկվելու բնապահպանության, գիտության (առանձին) եւ երիտասարդության (առանձին) նախարարությունները: Չնայած Աժ փոխնախագահի պատգամավոր ընտրվի է, սակայն առաջարկվելու է ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիւրարյանին, բնականաբար Աժ մեծամասնությունը կոալիցիոն առաջարկը քվեարկությամբ կհաստատի, որից հետո Աժ ղեկավարության տեղերում Տիգրան Թորոսյանի աջուահյակ կողքերին կնստեն երկու կին փոխնախագահներ:

Մ. Խ.

8-րդ երեխան ունեցած Ժենյա Շիրինյանին «Վիվասել»-ը 1 միլիոն դրամ նվիրեց

Սյունիքի մարզի Աղվան գյուղի 43-ամյա բնակիչ Ժենյա Շիրինյանին 8-րդ երեխային լույս աշխարհ բերելու կապակցությամբ երեկ «Վիվասել» ընկերությունը նվիրել է 1 միլիոն դրամ: Ընկերության հաղորդագրության տեղեկացմամբ, բացի մեկ միլիոն դրամ նվերից, սյունեցի տիկինը ստացել է նաեւ 15 հազար դրամ խոսելաժամանակով «Այո մամ» կանխավճարային քարտ, որն ընկերությունը տրամադրում է մարտի 8-ից ապրիլի 7-ը հայտարարված կանանց եւ մայրության տոնի ընթացքում:

Ի դեպ, այսքիսի քարտեր ստացել են նաեւ ծննդատան մյուս մայրերը: Ընկերությունից հայտնում են, որ կանանց միաժամյակը կավարտվի հատուկ խաղարկությամբ, որին կմասնակցեն «Այո մամ» քարտեր ստացած բոլոր մայրերը, իսկ հաղթողները կստանան որոշակի գումար պարունակող նվեր-կտրոններ: Տոնական միաժամյակ «Վիվասելն» անցկացնում է արդեն երրորդ տարին:

Գ. Գ.

Ընտրակեղծիքների մասով դատական գործերը շարունակվում են

Վճռաբեկ դատարանի մամուլի կենտրոնից հաղորդում են, որ 9/31 ընտրատեղամասի նախագահ Էդուարդ Աղաջանյանը դատապարտվել է 2 տարվա ազատազրկման, իսկ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի ընտրատարածքի թիվ 22/22 տեղամասի հանձնաժողովի քարտուղար Անժիկ Նորիկի Դաբաղյանը՝ 3 տարվա ազատազրկման: Լոռու մարզի դատարանի մարտի 21-ի դատավճռով ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Սոֆյա Քալանթարյանը մեղավոր է ճանաչվել «Ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը» հոդվածով եւ դատապարտել 300 հազար դրամ տուգանքի: Նույն մարզում Լեւոն Տեր-Պետրոսյանի մեկ այլ վստահված անձ՝ Էդմոն Գեւորգյանը մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել 500 հազար դրամ տուգանքի: Իսկ Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը մարտի 19-ի դատավճռով Արմեն Միրզոյանին եւ Գեղամ Հակոբյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ («Խուլիգանություն») եւ յուրաքանչյուրին դատապարտել տուգանքի 100 հազարական դրամի չափով: Հյուսիսային քրեական դատարանն իր 2008 թվականի մարտի 12-ի դատավճռով Հարություն Ուռուբյանին (Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ) մեղավոր է ճանաչել («Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը» հոդվածով) եւ դատապարտել ազատազրկման 7 տարի ժամկետով:

Կանխիկ գործառնությունները կսահմանափակվեն

Կառավարության երեկ հաստատած «Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Կենտրոնական բանկի խորհրդի անդամ **Վահե Գաբրիելյանը** լրագրողներին տեղեկացրեց, թե ինչպիսի գործարքներ եւ գործառնություններ պետք է իրականացվեն անկանխիկ՝ բանկային հաշիվների միջոցով: Օրենքն ընդունվելուց հետո կսկսի գործել 2009-ի հունվարի 1-ից: Այդ ժամանակից սկսած՝ անկանխիկ վճարման նվազագույն չափը կլինի 3 միլիոն դրամ, 2010-ին՝ 2 միլիոն, 2011-ից 1 միլիոն դրամը գերազանցող բոլոր գործարքները պետք է կատարվեն անկանխիկ ձեւով: 2009-ի սկզբից Երեւանում, ապա՝ մարզկենտրոններում, 2011-ից մյուս բնակավայրերում 60 հազար դրամը գերազանցող աշխատավարձերը պետք է վճարվեն անկանխիկ: Անշարժ գույքի առուվաճառքը եւս 2009-ի հունվարի 1-ից պետք է լինի անկանխիկ: Անկանխիկ վճարումներ կատարելու հնարավորություն ստեղծելու համար խանութներում պետք է տեղադրվեն պլաստիկ քարտերը սպասարկող սարքեր:

Ըստ Վահե Գաբրիելյանի, օրենքը միտված է սպեղային տնտեսության դեմ պայքարին: Նա գնահատականով, Հայաստանում կանխիկ շրջանառությունը 50 տոկոսից ավելի է եւ այդ ցուցանիշն անհամեմատ մեծ է այլ երկրների համեմատ: Կանխիկ գործառնությունների մեծ մասը սպասարկում է սպեղային տնտեսությունը:

Եռամսյակային մուտքերն անգամ գերակատարվել են

Սերժ Սարգսյանը երեկ կառավարության նիստում տեղեկացրել է, որ որեւէ խնդիր՝ կապված առաջին եռամսյակի մուտքային մասի ապահովման հետ, չի եղել, ավելին՝ 5,7 մլրդ դրամով գերակատարվել է եռամսյակային ծրագիրը:

Ա. Ա.

ԱԶԳ

Մեկնաբան

Հայաստանը գաղափարական ճգնաժամի մեջ

Մարտիմեկյան ողբերգությունից հետո Հայաստանը գտնվում է քաղաքական, գաղափարական եւ բարոյական ճգնաժամի մեջ: Ու եթե հարցի քաղաքական կողմը լուծելը հնարավոր է, առա գաղափարական ու բարոյական ճգնաժամից դուրս գալը բավականին դժվար խնդիր է: Պարզ է, որ իշխանության համար նախկինների ու ներկաների միջեւ առկա առճակատման հետեւանքով տուժեց ողջ հայ ժողովուրդը՝ Հայաստան պետությունը: Ու խնդիրն այստեղ միջազգային հեղինակության ու մեր, այսպես կոչված, միջազգային վարկանիշի հարցը չէ, ավելի դեռում դա երկրորդական է, քանի որ մենք կանգնած ենք ավելի մեծ որոբլեմի՝ պետականության կորանման խնդրի առջեւ: Ու չեմ կարծում, որ նման մոտեցումը չափազանցություն է, ամեն մի պետություն հզոր է պետականության ստեղծման ջատագով գաղափարական հասարակության առկայության դեպքում, մի հասարակություն, որի լիակատար բացակայությունը փաստ դարձավ հենց այս օրերին: Անկախ Հայաստանի գոյության 17 տարիների ընթացքում այդպես էլ մեծամասնություն չկազմեցին նրանք, ում համար հայկական պետականության գոյությունը լիներ գաղափարական հենք, որից ելնելով էլ կառուցեին իրենց մոտեցումները երկրում առկա զարգացումների նկատմամբ:

Մի բան պարզ է, որ քաղաքական նման զարգացումների պատճառը Հայաստանում առկա հավատի, գաղափարի պակասի ու քաղաքական իրական դաշտի բացակայության հետեւանք է: Տարիներ շարունակ մենք զբաղվել ենք ազգային պետության ստեղծման իմիտացիայով: Եթե նախկին իշխանությունների համար ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա էր, ապա նրանց հաջորդածների համար այդ հասկացությունը ընդհանրապես գոյություն չուներ: Մենք փորձում էինք ստեղծել պետություն անդեմ ու անգաղափար, պետություն, որի քաղաքական կառուցվածքը վերցված է Արեւմուտքից, տարածվող արժեքները նույնպես արեւմտյան են, մենք նույնիսկ մեր կուսակցությունները էինք հարմարեցնում արեւմտյան սանդարտներին: Ու այդպես էլ ոչ մեկի մտքով չանցավ տարրական մի բան, հայկական պետությունը գոնե ինչ-որ բանով, ինչ-որ ձեւով պետք է ունենա հայկական, ազգային նկարագիր-դիմագիծ: Տարիներ շարունակ մենք ձեւավորել ենք կոսմոպոլիտ, աղոտազգային, անսկզբունք զանգված, բնակչություն անվանմամբ, որի անտարբերությունը երկրում ընթացող գործընթացների նկատմամբ բավականին ծեռնտու էր իշխանություններին, թե՛ նախկինում եւ թե՛ ներկայում: Գաղափարի ու բարոյականության պակասը քաղաքականության մեջ հանգեցրեց այն բանին, որ որեւէ գաղափար առաջադրողը, եթե նույնիսկ դա կործանման, ոչնչացման, կազմաքանդման գաղափար էր, կարողացավ իր շուրջը համախմբել համախոհների հսկայական բանակ, որոնք պատրաստ էին ամեն քայլի իրենց ձայնը լսելի դարձնելու համար: Այս մթնոլորտից առաջին հերթին օգտվեցին հենց նրանք, ովքեր ժամանակին հիմնել էին աղազգային-անբարոյական այդ հենքը ու լավ էին հասկանում, թե ինչ են ցանել եւ որոնել էին, որ արդեն հնձելու ժամանակն է: 1998-ի իշխանափոխության արդյունքում փաստորեն ազգային ամեն մի հարց կեղծ կատեգորիա հայտարարողներին փոխարինելու եկավ նույն այդ ազգայինի հանդեմ անտարբեր մի զանգված, որը նախկիններից ժառանգեց կոռուպցիոն համակարգ եւ կատարելագործեց այն: Իշխանության եկած կոսմոպոլիտ, անողնաշար մտավորականությանը փոխարինելու եկավ մականունավորների մի բանակ, որն ընդունեց նախկինների հիմնած խաղի կանոնները ու փորձեց այդպես էլ կառավարել:

Առողջ հասարակության մեջ ազգը պառակտողներն ու միմյանց դեմ հանողները, ի սկզբանե կարժանանային ժողովրդի, մտավորականության պարսավանքին: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ ազգիս քաղաքական էլիտայի միտքն այն ասիճան սնանկ է, որ մենք ոչինչ չունեցանք առաջադրելու կազմաքանդելու կողմնակիցներին, իսկ իշխանությունները, զրկված մտավոր կարողությունից, այդպես էլ չկարողացան ոչինչ առաջադրել ոչնչացման քաղաքականության դեմ:

Մարտիմեկյան ողբերգության կրկնությունը հետագայում բացառելու համար հարկավոր են ազգային մտածելակերպի, նոր որակի քաղաքական ու գաղափարական գործիչներ, որոնք քաղաքականությանը չեն վերաբերում որպես կեղտոտ խաղի, որտեղ նպատակին հասնելու համար ընդունելի են բոլոր մեթոդները, այլ պատրաստ են իրականացնել հասարակության առողջացման լուրջ գործընթաց: Կարող ենք միայն ավելացնել, որ մարտի 1-ին ժողովրդին իրար դեմ հանած մարդիկ չեն կարող լինել երկրի ու հասարակության առողջացման գաղափարական գեներատորները, իրենց իսկ բարոյական կերպարի խոցելիության եւ ժողովրդի մեծ մասի կողմից այդ մարդկանց նկատմամբ առկա ատելության պատճառով: Հայ ժողովրդին նոր գաղափարներ ու առաջնորդներ են պետք, մարդիկ, որոնց համար հայկական պետության կառուցման համար որպես հենք կարող է լինել միայն ազգային՝ հայկական արժեքային համակարգի ստեղծումը:

ԱՐՄԵՆ ՄՈՒՇԵԼՅԱՆ

Գերատեսչության ստեղծումը որպես ուղիղ ճանապարհ

ԼՂՀ խորհրդարանի արտաքին հարաբերությունների եւ սոցիալական ոլորտի հարցերի մշտական գրասենյակ հանձնաժողովներն օրերս նախաձեռնել էին խորհրդարանական լսումներ՝ «Գրահրաժարակչությունը եւ մասնակը ԼՂՀ-ում 2000-2007 թվականներին» թեմայով:

Պետությունը գրահրաժարակչությունում պետք է շեշտադրված լինի. այս միտքն արտահայտեցին երկար ունեցողները: Միեւնույն ժամանակ, ըստ նրանց, պետք է տրագրել միայն այն գրքերը, որոնք իրոք արժանի են հրատարակման: Նկատենք, որ Արցախում պետությունով ստեղծված միջին 20 անուն գիրք է հրատարակվում՝ հիմնականում տեղաբնակ հեղինակներից: Այս առումով գրահրաժարակչության բնագավառում վիճակը բարելավ է: Իսկ ահա մասնավոր աշակցության հարցում վիճակն այլ է, որի շուրջ էլ հիմնականում ծավալվեց բանավեճը:

Ինչպես տեղեկացրեց Աժ արտաքին հարաբերությունների ու լրատվության հանձնաժողովի նախագահ Վահրամ Աբրահամյանը, սկզբնական շրջանում Արցախում մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների ու լրատվամիջոցների տվյալ էին տարբերակներ, որն առաջացրած էր նաեւ պետությունում: Սակայն սկսել են բորոտներ հնչել, թե այնտեղ խտրականություն է դրսեւորվում, եւ այս հիմքը էլ կառավարությանն առիթ տեղիք է հրատարակական կազմակերպությունների խորհուրդ, որն էլ զբաղվել է ՊԿ-ների ու լրատվամիջոցների ֆինանսավորման հարցով: Նոր ձեւաչափով կառավարությունն էր միանձնյա որոշում, թե ում ինչ չափով պիտի ֆինանսավորել, որը եւս բողոքների առիթ դարձավ: Սկսած այս տարվանից՝ նախկինում տարբերակվող որոշ լրատվամիջոցներ դրսից են մնացել պետական աջակցությունից: Փաստորեն, պետությունն ներկայումս սնում է միայն պետական լրատվամիջոցներին եւ կուսակցական թերթերին, ինչպես նաեւ մի հանի ՀԿ-ների:

Չկա որեւէ չափանիշ, որով կարելի է առաջնորդվել. մտահոգություն հայտնեցին բանախոսները: Աժ պատգամավոր Գեղամ Բաղդասարյանի կարծիքով՝ մամուլի գրաբեմական չափանիշ ձեւավորում է տուկան, եթե լրատվամիջոցը պահանջարկ չունի տվյալում, արդա անիմաստ է նրա լրատվությունը:

Պատգամավորի այս կարծիքը հակադարձողները նշեցին մի հանի պատճառներ: Մասնավորապես, Արցախում սոցիալ-տնտեսական ներկա պայմաններն ուղիղ համեմատական են տեղեկատվական տուկայի վիճակին: Բացի այդ, թերթերը չեն առաքվում գյուղական բնակավայրեր, որտեղ ընթերցող զանգվածը շոշափելի մաս է կազմում: Սակայն նաեւ պարբերականության խնդիրը՝ թերթերը հիմնականում լույս են տեսնում ամիսը մեկ կամ երկու անգամ, որի դեպքում թարմ լրատվությունը բացակայում է:

Ինչ է նշանակում պետական եւ ոչ պետական մամուլ, պետք է դրանց սահմանազատմանը պայմանականորեն վերաբերվել: Հարց հարուցողը Արցախի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սոկրատ Խանդամիրն էր: Տարբերելով նրա այս միտքը, բանախոսներից մեկը տեսակետ հայտնեց, որ Ղարաբաղում ընդդիմադիր մամուլ գոյություն չունի, որովհետեւ չկա ընդդիմադիր քաղաքական ուժ, եւ այս համատեքստում պայմանականորեն կարելի է հասկանալ նաեւ պետական ու ոչ պետական լրատվամիջոցների ֆինանսավորման հարցը: Գոնե այնքան ժամանակ, մինչեւ ԼՂՀ-ում տեղեկատվական դաշտը լիարժեք կայանա:

Առաջարկ եղավ պետականորեն աջակցել առկա էլեկտրոնային լրատվամիջոցներին ու նորերի ստեղծմանը: Այսօր Ղարաբաղն ունի տեղեկատվության արտաքին սպառման խնդիր, իսկ դա կարելի է իրականացնել ամենից առաջ էլեկտրոնային ՁԼՄ-ների ու արբանյակային կապով հեռարձակվող եթերային լրատվամիջոցների միջոցով: Ներկա դրությամբ Ստեփանակերտում գործում է մեկ էլեկտրոնային թերթ (չհաշված տպագիր թերթերի կայքերը), իսկ ԼՂՀ-ում միակ՝ Արցախի հանրային հեռուստատեսությունը ոչ միայն չի հեռարձակվում արբանյակային կապով, այլեւ նույնիսկ մաստելի չէ հանրապետության ծայրամասային շատ բնակավայրերի:

Ռադիոեթերի առումով վիճակն ավելի անմխիթար է: Լաչինի գծերի վերացումից հետո Արցախի հանրային ռադիոյի լսարանը նվազագույնի է հասցվել, իսկ Ստեփանակերտում գործող երեք մասնավոր ռադիոկայանները հիմնականում երաժշտական-ժամանցային բնույթի են: Դա է պատճառը Արցախում նոր ձեւավորվող գրագրային բնախնդիր շուկան: Հարց առաջացավ. իսկ ինչո՞ւ չստեղծվել նաեւ մասնավոր ռադիոկայաններին, չէ՞ որ նրանք հանրության որոշակի հասվածի պահանջմունքը բավարարող տեղեկատվություններ են մատուցում:

Հարցադրումներին ու առաջարկություններին կոնկրետ պատասխաններ չեղան: Հանձնաժողովը, որ թեման տարողունակ է, եւ մեկ լսումների շրջանակում հնարավոր չէ սպառել: Աժ սոցիալական ոլորտի հանձնաժողովի նախագահ Արայս Ավանեսյանը հորդորեց բանախոսներին՝ իրենց նկատառումներն ու առաջարկությունները գրավոր ներկայացնել խորհրդարան:

Լսումների արդյունքը գնահատելով, Աժ նախագահ Ասոն Ղուլյանը խոստացավ առաջիկայում նման հնարավորություններ ստեղծել, մասնավորապես հիշատակելով մայիս ամսին Արցախում կայանալիք միջազգային գիտաժողովը, որտեղ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները կարող են իրենց տեսակետները արտահայտող ելույթներով հանդես գալ:

Անշուշտ, դրվատելի է խորհրդարանական հանձնաժողովների այսպիսի նախաձեռնությունը, սակայն տեղեկատվական քաղաքականությանն առնչվող խնդիրների արդյունավետ լուծումը միայն հավանական է, որպիսի ԼՂՀ-ում առ այսօր չկա տեղեկատվության խնդիրները կարգավորող գործարար կառույց՝ տեղեկատվության նախարարություն կամ համատեղ այլ գերատեսչական մարմին, որն էլ շահագրգիռ ու իրավասու կլինի զբաղվելու նման հարցերով:

Թեմայի հաջորդ քննարկումը պետք է սկսել թերեւ դրանից:

ԿԻՄ ՊԱՐԳԵՎՅԱՆ
Անկախ

ՎԱՐԵՑՈՒՄ

Ամերիկայում Հայոց ցեղասպանության թանգարանի կառուցումը հավանության արժանացավ

Մարտի 27-ին տեղի ունեցած հրապարակային լսումների ժամանակ Մ. Նահանգների «Պատմական հուշարձանների պահպանման վարչությունը» (ՊՀՊՎ), որի պարտականությունների մեջ են մտնում Կոլումբիայի օկրուգի պատմական, մշակութային եւ գեղագիտական արժեք ներկայացնող կառույցների պահպանումն ու հետագա ճակատագիրը, միաձայն հավանություն է տվել Վաշինգտոնում նախատեսված Հայոց ցեղասպանության թանգարանի կառուցման նախագծին, տեղեկացնում է այդ առթիվ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրությունը:

Նախագիծը տարաբաշխային պահպանման եւ զարգացման այլ կառույցների հավանությանն էր արժանացել նախապես: Նրանք գրավոր կարծիք էին տալել նախկին Ազգային բանկի շենքը հիմնովին վերանորոգելու ծրագրի հասցեին: Բացի ներքին եւ արտաքին ձեւափոխումներից, նախատեսվում է շենքին կից բարձրացնել ապակեպատ մի նոր կառույց, որի որոշ հատվածները կերեսպատվեն հայկական քարերով:

Թանգարանի գործադիր հանձնաժողովի նախագահ Վան Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել ինչպես ՊՀՊՎ-ի անդամներին, այնպես էլ ծրագիրը մշակողներին, եւ ավելացրել, որ թանգարանը պատմական այդ շենքին նոր շունչ է հաղորդելու:



«Դա հենց այն է, ինչին մենք հետամուտ ենք լինում», իր հերթին նշել է ՊՀՊՎ-ի նախագահ Թերզ Բեզբերը:

ՊՀՊՎ-ի հանձնակատարներին նշանակում է Կոլումբիայի օկրուգի քաղաքապետը: Թանգարանի նոր նախագծի ներկայացումը պատրաստել է «Մարտինեզ էնդ Գոնսոն» ճարտարապետական ընկերությունը: Նրան աջակցել են «Գալեգոր էնդ ասոշիեթս» թանգարանային նախագծման ընկերությունը, «Հայկական ազգային ինստիտուտը» եւ «Ռեգան ասոշիեյթեդ» մենեջերական ընկերությունը: Թանգարանը զբաղեցնելու է շուրջ 20 հազար քառ. մետր տարածք եւ ունենալու է «Մուսիմեդիա ծրագրի» բաժին:

Այս եւ այլ մանրամասնությունների մասին երկու լրագրողների հետ զրուցեց Հանգուստի երեւանյան գրասենյակի տնօրեն Արփի Վարդանյանը:

Հ. ՕՀԱՆԻՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հանրապետության մի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թել՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՍՈՆ ԱԲԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՍՈՆՅԱՆ / հեռ. 529221
Հաշվապահություն (գրպազ) / հեռ. 582960
Լուսագրների վենտակ / հեռ. 581841
Հանձնարար. ծառայություն / հեռ. 582483
Շտաբային լրահոսի ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարական ծառայություն
«Ազգ» թերթ
Թերթի նիստերի անբողջական թե մասնակի արտադրումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսության առանց խմբագրության գրավոր հաստատության խստիր արգելվում են հանձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիստերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
Գ տառով յուրաքանչյուր գրվագրային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Մարտի մեկի դեպքերի համար պատասխանատու են այն ուժերը, ովքեր ժողովրդին անծրագիր հավաքել էին հրապարակում»

Մարտի 31-ին Բրյուսելում տեղի է ունեցել Քրիստոնեա-ժողովրդավարական եւ ժողովրդական կուսակցությունների համաշխարհային ինտերնացիոնալի խորհրդի նիստը եւ որոշում է կայացվել այդ կառույցին «Օրինաց երկիր» կուսակցության անդամակցության մասին: ՕԵԿ-ի անդամակցությունը որոշես Հայաստանում գործող ժողովրդական քաղաքական ուժի, երաշխավորել են Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, Սլովենիայի ժողովրդավարական կուսակցությունը եւ բազմաթիվ այլ երկրների կուսակցություններ: Քրիստոնեա-ժողովրդավարական եւ ժողովրդական կուսակցությունների ինտերնացիոնալը ներկայումս գործող 3 խոշորագույն համաշխարհային կուսակցական միություններից մեկն է, որին անդամակցում են ավելի քան 82 երկրների աջ կենտրոնամետ կուսակցություններ:

«Անդամակցությունը համարում ենք չափազանց կարեւոր եւ հնարավորություն՝ Հայաստանի առջեւ ծառացած տարաբնույթ խնդիրները միջազգային ամբիոններում ներկայացնելու: Անդամակցության գործընթացը տեւել է հինգ տարի, եղել ենք դիտորդ անդամ, եւ որոշում է կայացվել, որ կուսակցությունը դառնում է լիաժամ անդամ:

Հաշվի առնելով Ադրբեջանի ոչ կառուցողական եւ ոազմատենչ հայտարարությունները՝ այս կառույցին անդամակցելը նույնպես կարեւոր է», երեկ ՕԵԿ գրասենյակում լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրեց **Արթուր Բաղդասարյանը**:

Արթուր Բաղդասարյանը նաեւ խոսեց Հայաստանի ներքաղաքական իրավիճակից եւ նշեց. «Պետք է ներքաղաքական վիճակը զարգանա քաղաքական հանդուրժողականության ու հաշտարարության հենքի վրա: Լինեն փոխընդունելի լուծումներ քաղաքական դաշտում»:

ՕԵԿ նախագահի պնդմամբ՝ մարտի մեկի դեպքերի համար պատասխանատվություն պետք է կրեն այն ուժերը, ովքեր 10 օր շարունակ ժողովրդին անծրագիր հավաքել էին Ազատության հրապարակում:

Նա կարեւոր համարեց Հայաստանում պատշաճ մակարդակով անցկացվելիք ՏԻՄ ընտրությունները, որ հարցվածների գերակշիռ մասը կողմ է կոալիցիային:

Իսկ թե ո՞րն է լինելու Արթուր Բաղդասարյանի առաջին քայլը՝ դառնալով Անվտանգության խորհրդի քարտուղար, ընդգծեց, որ նոր նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո կլինեն լայնաբավալ փոփոխություններ քաղաքական ու սոցիալական ոլորտներում, իսկ երբ կլինի համապատասխան իրավիճակ, այն ժամանակ էլ կխոսի դրանից բխող գործողությունների մասին:

Ըստ Բաղդասարյանի՝ առ այսօր կոալիցիոն կառավարության կադրային հարցեր չեն քննարկվել, դրանք կլինեն նոր նախագահի պաշտոնանստից հետո: Բաղդասարյանի կարծիքով՝ կոալիցիոն համաձայնության հասնելու ընթացքում կադրային հարցեր չքննարկելը իրենք գնահատում են դրական, եւ առաջնայինը համարել են քաղաքական հարցերի, նպատակների ու առաջնահերթությունների համաձայնությունը. «Եվ կարեւորը կոալիցիոն հուսագրում դրանց նշելն է, ոչ թե պաշտոնները»:

Իսկ թե կադրային ո՞ր ոլորտներին է նախապատվություն տալիս ՕԵԿ նախագահը՝ նշեց, որ քանի դեռ այդ հարցերը չեն քննարկվել, ինքը չի ցանկանում դրանք բերել հրապարակային դաշտ՝ համարելով անշնչաստեղծարար: Խոսելով նոր վարչապետի թեկնածության մասին, նկատեց, որ նոր վարչապետը պետք է ունենա բարի համբավ, լինի քաղաքական դաշտին ծանոթ, փորձառու:

Ինչ վերաբերում է Հերինե Բիշարյանի ԱԺ փոխնախագահի պաշտոնում նշանակվելուն, ապա Արթուր Բաղդասարյանը ընդգծեց, որ այդ լուրերը սուտ են:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

«Արդշինինվեստբանկի» բաժնետոմսերը կգնանվեն եվրոպական բորսաներում

Նոր գլխամասային գրասենյակի բացման ժամանակ հանդիսավոր հայտնեց բանկի վարչության նախագահը

«Արդշինինվեստբանկի» գլխամասային գրասենյակի (նախկին քաղաքապետարանի շենքը) երեկ տեղի ունեցած հանդիսավոր բացմանը մասնակցեց Հայաստանի պետական ղեկավարության եւ բիզնեսի ամբողջ էլիտան: Խոշոր գործարարներ, նախարարներ, քաղաքապետ, բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց միացան երկրի գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ նորընտիր նախագահ ու գործող վարչապետ Սերժ Սարգսյանը:

Գլխամասային գրասենյակի բացման ժամանակ բանկի վարչության նախագահ Արամ Անդրեասյանը նշեց, որ «Արդշինինվեստբանկն» ունեցել է ածի բարձր տեմպեր, ինչը պայմանավորված է Հայաստանի ներքաղաքական կայունությամբ, տնտեսական զարգացմամբ եւ կենտրոնական բանկի կողմից տարվող կոշտ քաղաքականությամբ: Նա տեղեկացրեց, որ մոտ ապագայում բանկը պատրաստվում է դառնալ բաց բաժնետիրական ընկերություն, որի բաժնետոմսերը կգնանվեն եվրոպական բորսաներում: «Մենք ցանկանում ենք ստեղծել համահայկական բանկի գաղափարը եւ գործնականում իրականացնել «Մենք ուժեղ ենք միասին» կարգախոսը», ասաց բանկի վարչության նախագահը:

Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը «Արդշինինվեստբանկի» նոր գլխամասային գրասենյակի բացումը նշանակալից համարեց մեր բանկային համակարգի համար: Նա ներկաներին հիշեցրեց, որ երբ 5 տարի առաջ հայտարարվեց բաց մրցույթ եւ հաղթող ճանաչվեց Կարեն Սաֆարյանը, բանկը ստեղծվեց ընդամենը 3 մլրդ դրամ ակտիվներով: Այժմ արդեն բանկի ակտիվները կազմում են 105 մլրդ դրամ: Իսկ ինչպես լրագրողներին հայտնեց Արամ Անդրեասյանը, նախատեսվում է տարեվերջին ակտիվները հասցնել 150 մլրդ դրամի:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը «փայլուն» որակումը տվեց «Արդշինինվեստբանկի» նոր գլխամասային գրասենյակին, ասելով, որ այդ տիպի հզոր գլխամասային շենք չունի ոչ մի բանկ եւ որ դա խթան կլինի մյուս բանկերի համար եւս: Նախագահը նույնպես հիշեց 2003-ին կնքված նախկին «Արդշինբանկի» ձեռքբերման գործարքը, ասելով, որ դրանից շահեցին բոլորը՝ քաղաքը, քաղաքապետարանը, մասնավոր ընկերությունը, բանկը եւ նրա հաճախորդները:

Ա. Մ.

Ստեփան Դեմիրճյան. «Ճգնաժամը պետք է հանգուցալուծել նոր ընտրությունների միջոցով»

Իշխանությունների եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմի միջեւ երկխոսություն սկսելու առաջին նախապայմանները հետընտրական իրադարձությունների ծերբակալվածներին ազատ արձակելն է, քաղաքական հետապնդումը դադարեցնելը, ինչպես նաեւ հանրահավաքներ եւ երթեր կազմակերպելու փոփոխված օրենքը վերանայելը: Երեկ Մաքսիմ ազգային ակումբում այս մասին հայտարարեց Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) ղեկավար **Ստեփան Դեմիրճյանը**՝ շեշտելով, որ առանց այս նախապայմանների իրականացման, որեւէ երկխոսություն չի կարող լինել կողմերի միջեւ: Ակումբի հյուրի խոսքով, ներքաղաքական արտաքուս հանգիստ, բայց լարված, ավելին՝ պայթյունավտանգ իրավիճակը փոխելու համար իշխանությունները պետք է առարկայական քայլեր անեն, ինչն, ըստ նրա, առայժմ չի արվում:

Թե ինչը պիտի լինի կողմերի երկխոսության թեման, Ստեփան Դեմիրճյանի կարծիքով, շատ տարբերակներ կան, որոնցից մեկն, օրինակ, խորհրդարանական նոր ընտրությունների անցկացումն է. «Երկխոսությունը չպետք է ինքնանպատակ լինի, պետք է լինի երկխոսության հստակ օրակարգ: Ընտրությունների արդյունքում առաջացած ճգնաժամը պետք է հանգուցալուծվի ընտրությունների միջոցով: Այսօրվա խորհրդարանը չի արտահայտում հասարակական տրամադրությունները»:

Մարտի 1-ի եւ 2-ի իրադարձությունների քաղաքական պատասխանատվությունը Ստեփան Դեմիրճյանը իշխանություններին հասցեագրեց՝ նշելով, որ նրանք են ուժ գործադրել ժողովրդի նկատմամբ: Նրա խոսքով, իշխանությունները պետք է շահագրգռված լինեն ժողովրդի վստահությունը ձեռք բերելու համար եւ գիտակցեն, որ «ռեպրեսիաների» միջոցով ներկա ճգնաժամը հնարավոր չէ հաղթահարել. «Մարդիկ վրդովված են, վիրավորված, եւ պետք է իրական քայլերի գնալ»:

Ստեփան Դեմիրճյանը ապրիլի 9-ին կայանալիք նոր նախագահի երդմնակալության արարողությանը մասնակցելու հրավեր չի ստացել: Իրենք այդ օրը ակցիաներ չեն կազմակերպում, սակայն ՀԺԿ առաջնորդը նշեց, որ հնարավոր է լինեն ինքնաբուխ ակցիաներ. իր տեղեկություններով, մի շարք հասարակական կազմակերպություններ այդ օրը սգո երթ են կազմակերպելու Մյասնիկյանի արձանի ուղղությամբ:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռոբերտ Քոչարյան. «Սկզբունքային հարցերում խոսք անգամ չի կարող լինել...»

1-ին էջից

«Քրեորեն պատժելի արարք կատարողները պետք է պատժվեն օրենքով»

Մարտի 1-ի իրադարձությունների առնչությամբ տրված հարցին Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց, որ այսօր արդեն ակնհայտ է, որ անկարգությունները կազմակերպված բնույթ են կրել, եւ այդ ամբողջն արդեն վերականգնված է ժամ առ ժամ, ոտք առ ոտք: Այն մարդիկ, ովքեր այսօր փորձում են շահարկել հաղթանակելիների թեման, ըստ նախագահի, խոր հիասթափություն են արտելու, երբ ճնշական խմբի կողմից դատարան ուղարկված նյութերին ծանոթանան, տեսնելով, թե ում են նրանք պատշտպանել եւ ինչ հանցագործություններ կատարած մարդիկ են դրանք:

Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ երկխոսության կոչերի առնչությամբ տրված հարցին երկրի նախագահը պատասխանեց, որ չի կարծում, թե այդ կոչերն իրեն են ուղղված եւ որ հեռուն պատժելի արարք կատարողները պետք է պատժվեն օրենքով: Սակայն նա չբացառեց, որ հաջորդ նախագահն ու հաջորդ կառավարությունը կարող են «ինչ-ինչ պատճառներով ճնշարկել այդ երկխոսությունը»:

Նախագահը անընդունելի է համարում նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնելու առաջարկն, ասելով, որ դրա անհրաժեշտությունը լինում է, երբ խորհրդարանը չի աշխատում: Պատասխանության փոխնախարար Մանվել Գրիգորյանի ազատման պատճառների մասին խոսելով, Ռոբերտ Քոչարյանն ասաց, որ դա պետք է դիտարկել իրադարձությունների ընդհանուր կոնտեքստի մեջ: Նա հայտնեց, որ փոխնախարարն ազատվել է ձերբակալումից վերադառնալուց հետո:

Ժողովրդի տարբեր հատվածների միջեւ ատելության սերմանումը հեռուն պատժելի արարք համարելու իր առաջարկը Ռոբերտ Քոչարյանը հետեւողականորեն պատասխանելու է եւ փորձելու է, որ խորհրդարանական քաղաքական ուժերի եւ գործիչների կողմից այն ներկայացվի: Նա հարց բարձրացրեց, թե ինչո՞ւ ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է պատասխանվեն, ասասյական խտրականությունը համարվի հեռուն դատապարտելի, իսկ ատելության սերմանումը հայ ժողովրդի տարբեր հատվածների միջեւ՝ ոչ:

Հայաստանի տնտեսությունը ինչ վիճակում է Ռոբերտ Քոչարյանը փոխանցում իր հաջորդին հարցին վերջինս պատասխանեց, որ նկատի ունենալով անցած տարվա ցուցանիշները՝ կայուն զարգացման վիճակում: Այս տարվա մարտին ոչոչ անկում է արձանագրվել միայն առեւտրի ծավալների հետ կապված, ինչը կապված է ներքաղաքական իրավիճակի հետ: «Սակայն ակնհայտ է, որ այս ամենը հաղթահարվում է, եւ ես կասկած չունեմ, որ մենք այս տարին եւս շատ լուրջ ցուցանիշներով փակելու հնարավորություն ունենք», ասաց նախագահը, ավելացնելով, որ խորհրդային առումով մոտակա ժամանակներս Հայաստանի համար որեւէ խնդիր ինքը չի տեսնում:

Որոշե՞լ է, թե ինչով է զբաղվելու Ռոբերտ Քոչարյանը ապրիլի 9-ից հետո՝ «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի տված հարցին նախագահը հրաժարվեց պատասխանելուց, ասելով, որ ինքն «առավել եւս չի ցանկանում պատասխանել «Ազատություն» ռադիոկայանի հարցին», քանի որ վերջինս տանում է Հայաստանի պետականության հայրենական հարազատություն:

Բաց նամակ

Հայաստանի Հանրապետության հաղթաթղթերին,
ՀՀ նորընտիր նախագահին, ՀՀ ԱԺ խմբակցություններին,
Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններին,
զանգվածային լրատվական միջոցներին, կուսակցություններին

Մտահոգված 2008-ի փետրվարի 19-ից հետո Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակով,

չհարելով որեւէ հաղթական ուժի կամ հոսանքի,

ցավով փաստելով, որ մեր հասարակությունը կանգնել է իր համար կենսական նշանակություն ունեցող հարցի՝ միասնականության եւ մասնատվածության երկընտրանքի առջեւ (մասնատվածություն, որն ուղղակիորեն կվնասի մեր երկրի զարգացումը, հավատարմությունը ժողովրդավարական արժեքներին, ներքին կայունությունը, անվտանգությունն ու մեծ զոհողությունների գնով ձեռք բերված խաղաղությունը),

ընդգծելով, որ ստեղծված իրավիճակում հասարակական-քաղաքական ողջ համակարգը, առավել քան երբեւէ, ունի հասարակությանը միավորելու, ազգայնության շուրջը համախմբվելու եւ սեփական հիմնախնդիրներին լիարժեք նայելու անհրաժեշտություն,

կարեւորելով մեր երկրում քաղաքական հասարակության ձեւավորումը՝ որպես ժողովրդավարության ձեռքբերում եւ արժեք,

նպատակ ունենալով ակտիվացնել մասնակցությունը Հայաստանում սոցիալական առաջադիմության հասատածն, մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների ամրապնդման եւ զարգացման, խաղաղության, կայունության, համերաշխության, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձեւավորման գործում՝ սույն թվականի մարտի 21-ին, հայաստանյան 10 հասարակական կազմակերպություններ ստորագրեցին «Խաղաղ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնության հիմնադրման մասին հուշագիր:

Ամրագրվեց, որ նախաձեռնությունը բաց է շահագրգիռ բոլոր կողմերի համար:

Հաջորդող օրերին նախաձեռնության ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան երեւանում եւ ՀՀ բոլոր մարզերում: Գործընկերների հետ քննարկումների ընթացքում ամրագրվում էին այն հիմնական ուղղություններն ու գործելաոճը, որոնք հիմք պիտի դառնան նախաձեռնության արդյունավետ աշխատանքի համար: Որոշվել է սույն թվականի ապրիլի 7-ին երեւանում նախաձեռնության կողմից հրավիրել ֆորում, որին կմասնակցեն նախաձեռնությանը միացած կազմակերպությունների ղեկավարները (նախաձեռնությանն արդեն իսկ միացել են Հայաստանում գործող շուրջ 250 հասարակական կազմակերպություններ), որտեղ ուղղորդով կարտահայտվեն ֆորումի դիրքորոշումը, առաջնահերթ լուծման ենթակա հիմնախնդիրները եւ երկարաժամկետ ծրագրերը:

Տեղի ունեցած քննարկումների արդյունքում նախաձեռնությանը միացած կազմակերպությունները դյուրարձակել ու անքննարկելի են համարել.

▼ ազգային եւ պետական շահերի ու անվտանգության ստորադասումն անձնական, ներխմբային կամ կուսակցական շահերին,

▼ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ոտնահարումը,

▼ յուրահատուկ գործողություն, որը կարող է խաթարել քաղաքացիական համերաշխության փխրուն մթնոլորտը,

▼ ՁԼՄ-ների միակողմանի եւ ապակողմնորոշող տեղեկատվությունը,

▼ ազգի բարոյական ոգին ջլատող երեւույթները:

«Խաղաղ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնության մասնակիցները երկրի նորընտիր նախագահից, քաղաքական եւ պետական գործիչներից ակնկալում են մի շարք հիմնախնդիրների անհետաձգելի եւ արդյունավետ լուծումներ, մասնավորապես.

1. Մարտի 1-ին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների համակողմանի ուսումնասիրություն եւ հանցամանքների ամբողջական բացահայտում, նեռռելով այնպիսի հասուկ միջոցառումներ, որոնք կնպաստեն գործընթացի նկատմամբ վստահության ամրապնդմանը, հանրությանը լիարժեք տեղեկատվության տրամադրմամբ՝ տալով տեղի ունեցածին իրավական ու քաղաքական գնահատական,

2. «ՀՀ-ում երբեր, ցույցեր, զանգվածային միջոցառումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունների վերանայում,

3. Հանրային հեռուստաընկերության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի եւ «Հ1»-ի հասարակական քաղաքական, լրատվական բաժինների գործունեության սկզբունքների ու ղեկավար կազմերի վերանայում,

4. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի բարեփոխում, արդյունքում՝ ինստիտուտի աշխատանքներում ընդդիմության եւ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավում, հրապարակայնության եւ թափանցիկության ապահովում,

5. ՀՀ-ում զենքի ապօրինի շրջանառության բացառում, այսպես կոչված, «թիկնազորների» զենք կրելու իրավունքի հետ կապված իրավական դաշտի հստակեցում, վերջինիներս ապօրինի գործողությունների ու անպատեհ վարքի նկատմամբ իրավական ու հասարակական զրկական հանդուրժողականության միջավայրի եւ մեխանիզմների ստեղծում,

6. Քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներգրավմամբ Հայաստանի հանրային խորհրդի ստեղծում (համապատասխան՝ օրենքի եւ իրավական ակտերի ընդունմամբ):

Ֆորումը կլինարկի եւ առանձին ուշադրություն կանդրադառնա նաեւ մոտ ապագայում լուծման կարիք ունեցող հիմնախնդիրներին:

Վստահ ենք, որ նշված, ինչպես նաեւ՝ ֆորումի ընթացքում ներկա խնդիրների ուսումնասիրությունը, արդարացի եւ ոչ դեկլարատիվ լուծումը կպարզի լավագույնը եւ հասարակության բոլոր շերտերի միջեւ իրական ու արդյունավետ երկխոսության հնարավորություններ կստեղծի: Երկխոսության՝ հանուն ժողովրդավարական, ուժեղ, առաջադեմ եւ խաղաղ Հայաստանի:

Ելնելով վերոհիշյալից եւ կրկին կարեւորելով երկխոսության անհրաժեշտությունը, կանխավ հայտնելով, որ Ձեր բազմաբաղ օրակարգում հնարավորություն չեմ գտնելու մասնակցել ֆորումի աշխատանքներին, այնուամենայնիվ հավատում ենք Ձեզ՝ Հայաստանի նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին, մասնակցելու ֆորումի աշխատանքներին:

«ԽՈՂՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ»
Քաղաքացիական
նախաձեռնության կազմկոմիտե

«Հայաստանի բնական հումքից նոր հատկություններով օժտված նյութերի ստացում» նպատակային ծրագրի մասնակիցների հայտարարությունը

«Հայաստանի բնական հումքից նոր հատկություններով օժտված նյութերի ստացում» նպատակային ծրագրի մասնակիցները հայտարարում են, որ «Առավոտ» օրաթերթի 28.03.08 համարում Հ. Կարապետյանի «Մվ է մեղավոր բլեֆի համար» եւ «Новое Время» թերթի 29.03.08 համարում նույն հեղինակի «Научная конференция, или вакханалия обмана» հրապարակումները սադրանք են եւ Հայաստանում գիտատար տեխնոլոգիաների զարգացման համար մեծ նշանակություն ունեցող գիտական ուսումնասիրությունների մասին բացասական հասարակական կարծիք ձեւավորելու փորձ:

Ծրագիրը սկսվել է 2004 թվականից: Նրա շրջանակներում կազմվել է կիրառական մակարդակներին վերաբերող փաթեթ, որը վերաբերում է մասնավորապես.

- բնական հումքի վերամշակմանը,
- պոլիմերային նանոկոմպոզիտային թաղանթների ստացմանը, որոնք կոմպոզիտային հավելում, օգտագործվում է տեղական հումքը (պոլիբդենի դիսուլֆիդ, դիատոմիտ, բենտոնիտ եւ այլն),
- հակավիրուսային եւ ճառագայթաշրջապատային միջոցների ստեղծմանը, որոնց արտադրությունը Հայաստանում կազմակերպելու դեպքում որպես հիմնական հումք կծառայի կոհարի վերամշակման արդյունքում ստացվող ացետիլենը:

Ուսումնասիրությունների արդյունքները 150 գիտական հոդվածների տեսքով տպագրվել են հայրենական եւ արտասահմանյան գիտական այնպիսի ամսագրերում, ինչպես օրինակ՝ «Journal of Materials Processing Tehnology», «Nuclear Instr.& Methods in Phys. Res.», «Jappaness Journal of Applied Physics», «IEEE Transactions on Applied Supercond»: Ստացված արդյունքները ներկայացվել են նաեւ հանրապետական եւ միջազգային տարբեր գիտաժողովներում:

Սինթեզված նոր նյութերի համար ստացվել է երեք արտոնագիր:

Այս ծրագրի արդյունքների վերաբերյալ լայն քննարկումներ են անցկացվել 2005 եւ 2007 թվականների հաշվետու գիտաժողովներում:

Կարծում ենք, որ բացասական եւ վարկաբեկող տեղեկատվություն հրատարակելու դեպքում լրագրողական բարոյականության կանոնները պահանջում են ներկայացնել նաեւ մյուս կողմի կարծիքը, հատկապես այն դեպքերում, երբ մասնավոր անձի քննադատությունը վերաբերում է այնպիսի գիտական ուսումնասիրություններին, որոնցում ներգրավված են 59 մասնագետներ, այդ թվում՝ 3 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 14 դոկտոր եւ 29 գիտությունների թեկնածու, որոնք ներկայացնում են 4 ակադեմիական ինստիտուտներ, 2 բուհ եւ 2 գիտարտադրական կազմակերպություններ:

ՀՀ ԳԱԱ ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

Նամակ, որը մտորումների տեղիք է տալիս

Որպիսեր «անտիսեմիտիզմի» որոնումներում ակամա խրախուսում է հայատյացությունը

«Ազգի» խմբագրություն են բերել մի նամակ: Ա. Հարությունյան ստորագրությամբ այդ նամակը հասցեագրված էր անձամբ ինձ, ոչ թե խմբագրությանը, ուստի եւ կարելի էր չպատասխանել, եթե հեղինակը չգրեր. «Ի դեմս Ձեզ ես մեկ մտավորական եկավ լուացնելու ճորտերի բանակը, որը կոչված է ծառայելու սին ու չարիին՝ «ի փառս աթոռի»:

Ինչպե՞ս եմ ծառայել սին ու կեղծիին: Այդ հարցին ոչ Հարությունյանը պատասխանում է. «Ուստարությամբ ընթերցեցի մարտի 27-ին «Հայոց աշխարհում» տպագրված հարցազրույցը Ձեզ հետ: Ձեզ ուղղված «Ժառանգություն» կուսակցության կողմից Տեր-Պետրոսյանին պատասխանելը, Ձեր կարծիքով, կաղ ունի՝ արտաքին ինչ-ինչ ազդեցությունների հետ հարցին Դուք պատասխանում եք. «Ժառանգություն բառը անգլերեն «heritage» է, իսկ այդ անվամբ բոլոր կառույցները՝ ԱՄՆ-ում թե Եվրոպայում, առհասարակ, հրեական կառույցներ են»:

Եթե հրեական կառույցների հետ «heritage» հիմնադրամների առնչության մասին արտահայտվելը սին եւ չարիին ծառայել է, ապա ծառայում է նաեւ նամակի հեղինակը, որպիսեր ինձ ենթադրելիս ակամա ընդունում է այդ փաստը, գրելով. «Նույն տրամաբանությամբ կարելի է հետեւություն կատարել, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Ժողովրդական կուսակցությունը... եւ այլն Մ. Նահանգներում, Ֆրանսիայում, Կանադայում եւ աշխարհի բազմաթիվ այլ երկրների նույն անունը կրող կուսակցությունների գործակալներ են, որոնց մեջ հրեաները փիչ թիվ չեն կազմում»:

Հաստատական է, որ հեղինակն անձամբ ընդունելով հանդերձ աշխարհի բազմաթիվ երկրներում նույն անունը կրող կուսակցությունների մեջ ոչ փիչ թվով հրեաների առկայությունը, ինձ է մեղադրում. «Ի դեմ, ասեմ, որ ամենեփին չեմ ընդունում Ձեր անհիմնիզմը»: Մինչդեռ ես հարցազրույցում ընդամենը արձանագրել եմ «heritage»-ի կարգը հրեական կառույցների հետ, առանց մյուս կուսակցություններին՝ առավել եւս, նամակագրի վկայությամբ, նրանց կազմում ընդգրկված հրեաներին անդրադառնալու: Հասկանալի դեպքում չեմ կարող ընդունել Հայաստանի եւ հայերի նկատմամբ ինչպես Իսրայելի, այնպես էլ ԱՄՆ-ի հրեական որոշ կառույցների բացասական դիրքորոշումը: Չեմ ընդունում նաեւ, անկախ էթնիկ ծագումից, հայի ազգանուն կրող եւ Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող, առավել եւս ապրիլի 24-ին միմյանց «с геноцидом» արտահայտությամբ շնորհավորող թափփուկների հայտարարությունը, որքան էլ դա, ի տարբերություն «անտիսեմիտիզմի», չդատապարտվի:

Ի դեմ, Մեծ եղեռնի 1,5 միլիոն զոհերի հիշատակը լքելիաբար անարգող այս թափփուկները եւս Լեւոն Տեր-Պետրոսյանին են պատճառում, իսկ վերջինի խոստովանությամբ դարձած «Հայկական ժամանակի» պես թերթեր հոլոքոստի բացառիկությունն ապահովելու առաջադրանքով ողջամտորեն շրջանցում կամ հեգնանքով են նշում ապրիլի 24-ի մասին: Այս թափփուկներին ոչ ոք չի դատապարտում, ընդհակառակը, խրախուսում են, որպիսեր հայատյացությունը «անտիսեմիտիզմի» կատեգորիա չէ:

Պրն Հարությունյանը ենթադրելուց զատ հարցնում է. «Երբ Դուք աշխատում էիք Ռաֆֆի Հովհաննիսյանի Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում, արդյոք Ձեր ստացած աշխատավարձը հրեական կառույցներից եկող գումարներ էին եւ եթե այդպես էր, ապա ինչո՞ւ այն ժամանակ այդ հարցը Ձեզ չէր մտահոգում»: Չէր էլ կարող մտահոգել, որպիսեր ես կենտրոնում ընդամենը երկու անգամ աշխատել եմ 1994-ից մինչեւ 1997-ի փետրվարը, հարցազրույցում կենտրոնի անունը չեմ տվել, իսկ «Ժառանգություն» կուսակցությունը ստեղծվել է 2002-ին: Կենտրոնի անունը տալիս է նամակագիրը եւ հրեական կառույցների հետ կապն ակամա վերագրում է նաեւ Ռաֆֆի Հովհաննիսյանի կենտրոնին:

Ինչ վերաբերում է Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտպանելու որոշման ընդունմանը Ռաֆֆի Հովհաննիսյանի ԱՄՆ-ից վերադառնալուց անմիջապես հետո, որի համար որոշ հարությունյանն ինձ մեղադրում է «միսուսնավոր ապատեղեկատվության» մեջ, եթե «Ժառանգություն» կուսակցության ղեկավարը ԱՄՆ-ում չի եղել, թեեւ ինչ հավանական է թվում, ԱՄՆ-ի հրեական կառույցների ձեռքերը երկար են, դրանք կհասնեն եւ Սրապսբուրգ, եւ Երեւան: Համենայն դեպս Տեր-Պետրոսյանին պաշտպանելու որոշումը ուշ երեկոյան ընդունելու մասին, կարծեմ փետրվարի 13-ին, հեռուստաէկրանից հայտարարել են «Ժառանգություն» կուսակցության պատգամավորները:

Նամակագիրն ինձ մեղադրում է նաեւ Թուրքիայի նախագահի պաշտոնում ընտրվելու առնչությամբ Արդուլլահ Գյուլին նամակով շնորհավորելու, առավել եւս այդ նամակում Հայոց ցեղասպանությունը «Great Armenian Dispossession» բառակապակցությամբ նենգափոխելու պատճառով Ռաֆֆի Հովհաննիսյանին ենթադրելու համար: Ավելին, նամակում հեղինակը բացատրում է, թե «հայերի մեծ ունեզրկումը» պարունակում է ոչ միայն «ցեղի ֆիզիկական ոչնչացման, կյանքից զրկելու, այլեւ մարդկանց հողից, հայրենիքից, մշակույթից, ազատությունից, արժանապատվությունից զրկելու իմաստներ»:

Նշենք, որ «հայրենազրկումը» «dispossession» բառի բառարանային 4-րդ իմաստն է, ընդ որում այդ իմաստը նշված բառին տալիս է համապատասխան ենթատեքստը միայն: Այնուամենայնիվ ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար պատժելու» կոնվենցիան կատարած «dispossession»-ի համար ոչ մի պատիժ չի սահմանում, որպիսեր զանգվածային տեղահանությունն անգամ ցեղասպանություն համարող միջազգային այս փաստաթուղթը նույնիսկ հարկ չի համարում մարդկության դեմ կատարված հանցագործությունների մեջ հիշատակել նշված բառից բխող գործունեությունը: Եթե Հայոց ցեղասպանությունը ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայում չիրականացվող «dispossession» բառով փոխարինելը նենգափոխություն չէ, ապա դա ինչպե՞ս անվանել:

Հետեւաբար «սին եւ չարիին ծառայելու կոչված ճորտերի բանակը» լրացնում են նրանք, ովքեր «ի փառս հայատյացության», պատճառանում եւ տուրք են տալիս հայատյաց տակնմներին: Ի դեմ, որքան էլ Ռաֆֆի Հովհաննիսյանը, լինելով 1991-ին ՀՀ արտգործնախարար, առնչվում էր աշխարհի տարբեր երկրների ղեկավարների եւ քաղաքական գործիչների հետ, այնուամենայնիվ, Թուրքիայի նախագահի պատճառում Արդուլլահ Գյուլի թեկնածությունն առաջադրած «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը հիմնադրվել է 2001-ի օգոստոսին: Հետեւաբար Գյուլին հղած նրա շնորհավորական նամակը չէր կարող բխել անձնական ծանոթությունից:

ՀԱԿՈԲ ՇԱՀԲԱԶՅԱՆ

5 ԱՊՐԻԼ 2008 ԷՋ Ա

ԼՈՒՅՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նախագահական ընտրայքարը Մ. Նահանգներու մէջ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Հայասանը տակաւին ենթակայ կը մնայ փեսուար 19-ի Նախագահական ընտրութեանց գալարումներուն, ինչպէս նաեւ մարտի 1-ի բախումներէն յառաջացած վէճերուն: Ստեղծուած է նեռամփոփ կացութիւն մը, որ կարելի ափսարհի անցուդարձերը ոչ մէկ առնչութիւն կամ անդրադարձ կրնան ունենալ Հայասանի ճակատագրին վրայ:

Սփիւռքը իր կարգին կլանուած է Հայասանի իրադարձութիւններով, մոռնալով յաճախ, որ Ամերիկայի Նախագահական ընտրայքարին ելքը կրնայ ուղղակիօրէն անդրադառնալ-յատկապէս Միացեալ Նահանգներու մէջ իր արտաքին, արտուսին ու ճակատագրին:

Մինչդեռ Ամերիկայի Նախագահական ընտրայքարը նշանակալից նորոգութիւն մը պիտի ունենայ միջազգային հաղթական կեանքի վրայ, եւ անխուսափելիօրէն՝ Հայասանի իրավիճակին վրայ:

Այս տարուան ընտրայքարը վաղուց սկսած էր արդէն: Նախագահ Բուշի վերընտրութեան յաջող օրն իսկ հակադիր ճակատները սկսած էին յարդարուիլ: Նախնական ընտրութեանց ընթացքին երկու կուսակցութեանց թեկնածուներու գտումները կատարուած են եւ գրեթէ յայտնի դարձած է, թէ որո՞ւ պիտի հանդիսանան Հանրապետականներու եւ Դեմոկրատներու նախագահական թեկնածուները:

Հանրապետական թեկնածուները շատ արագ թափթփեցան նախնական ընտրութեանց օրերուն եւ միակ վերապրողը մնաց Արիզոնայի ծերակուսական Ջան Մըքէյնը: Մեթ Համնի, որ Մեսեչուսեց նահանգի անուանի կառավարիչն էր եւ յաջող առեւտրական մը, շուտով հեռացաւ հրապարակէն. պատճառները բազում են, սակայն կը թուի թէ անոր մոռոն աղանդին պատկանիլը ունեցաւ իր դերը: Ամերիկայի մէջ թեկնածուի մը կրօնը կրնայ շատ ճակատագրական ըլլալ: Նախագահ Բուշ, որ բուժուած ալիոլամոլ մըն է, յաճախ կոգեկոչէ երկնատրին անունը, որ իբրեւ թէ իրեն ուղղութիւն կուտայ իր ռազմական որոշումներուն մէջ... պարզապէս հանրապետականներու աջակողմեան թեւին հաճոյ երեւնալու համար:

Հանրապետական թեկնածու Մայք Հաքաբիի, որ Աւեսարանը շալկած կը մղէր իր ընտրայքարը, Միջին Ամերիկայի Բայբըլ Բելթէն (Աւեսարանի գօտի) դուրս յաջողութիւն չունեցաւ:

Տակաւին խորհողներ կան, որ Միթ Համնի կրնայ կրկին հրապարակ ելնել իբրեւ փոխնախագահութեան թեկնածու, եթէ Մըք Քէյնի վերջին պահուն անակնկալ մը ընելով այդ պաշտօնին թեկնածու չներկայացնէ Քընեթիքըթ նահանգի ծերակուսական, դաւանափոխ նախկին դեմոկրատ Ջո Լիբըրմէնը, որ 2000 թուին Ալ Գորի փոխնախագահութեան թեկնածուն էր: Ան կրնայ Մըք Քէյնը աւելի մօտեցնել հրեայ հաւատացեալներուն:

Մըք Քէյնը յարգուած պեսական անձնաւորութիւն մըն է, որ պատերազմի հերոսի կոչում ունի եւ 5 տարի բիրեւ ռազմագերի բանտարկուած է Վիէթնամի մէջ:

Հանրապետական շրջանակներու մէջ Մըք Քէյնի ճանչցուած է իբրեւ միանձնեայ անկախ խորհող պեսական գործիչ, իր վարքով չի ցոլացներ ծայրայեղ աջակողմեաններու կարծիքները: Այդ պատճառով ալ սկսած է սիրաբանիլ ծայրայեղ աջակողմեան աւեսարանիչներու հետ, որոնք լոգունգ դարձուցած են իսլամական կրօնը խանդելու առաքելութիւնը:

Սակայն, Մըք Քէյնի եւ ընդհանրապէս հանրապետականներու խոցելի կողմը Իրաքի արիւնալի պատերազմն է. մինչ դեմոկրատ թեկնածուներ Օբաման եւ Քլինտոնը կը յայտարարեն, թէ ընդունելու պարագային վերջ պիտի տան այդ պատերազմին, Մըք Քէյնն կը յայտարարէ, թէ հարկին պատրաստ է պատերազմը շարունակելու... տակաւին «հարիւր տարի եւս»:

Հարցախոյզները ցոյց կուտան, թէ Ամերիկայի ժողովուրդը իր մեծամասնութեամբ դէմ է պատերազմին, սակայն այս երկրին մէջ զանգուածային լրատուութեան միջոցները այնպիսի նուրբ միջոցներով կարող են առկախողմնորոշել ժողովուրդը, որ կրնայ իր հանգուցները իսկոյն փոփոխութեան ենթարկել: Իրաքի պատերազմի ակնյայտ ձախողումներուն պատճառաւ կը խորհուէր, որ Մ. Նահանգներու գործող Նախագահը չի վերընտրուիր, սակայն ան յաջողեցաւ վերընտրուիլ, որովհետեւ իր կողմնակիցները կրցան հասարակական կարծիքի փխրուն խմորը կաղապարել իրենց ցանկութեան համապատասխան, եւ զարմանալի չէր, որ լրատուական ցանցերուն մեծ մասը Նախագահ Բուշին ի նպաստ քուէարկողները որակեց «57 միլիոն յիմարներ», առաջին էջի մեծ վերտառութեամբ մը:

4000 ամերիկեան զինուորներու սպանութենէն եւ 30.000 ալ վիրաւորուելէն եսէ տակաւին մամուլը համապատասխան լրջութեամբ չի ճնշեր Իրաքի պատերազմը, եւ հետաքրքրութեան գլխաւոր ցանցերը ոճիր-արկածներով կամ աւելի անհեթեթ նիւթերով կը զբաղեցնեն ժողովուրդը: Որեւէ ամերիկացի ափսարհի անցուդարձերուն մասին լուրջ եւ հիմնական տեղեկութիւն ունենալու համար պէտք է յաջողի հասնիլ լրատուութեան եւրոպական աղբիւրներուն, որոնք այնքան ալ մատչելի չեն սովորական հաղթացիին համար:

Իրաքի պատերազմի լրատուութիւնը արտօնուած են հաղորդել ամերիկեան բանակէն լիազօրուած եւ անոր հովանիին ներքեւ գործող ամերիկացի լիազորները միայն:

Հակառակ որ 30.000 զինուորով յաւելում կրեց Իրաքի մէջ կռուող ամերիկեան բանակը, սիւնին ընդդիմադիրներուն համար առաջ կաւառի դրութիւն մը հաստատուեցաւ Իրաքի մէջ, որպէսզի սիւնին ցեղապետերը ամերիկացի զինուորներուն վրայ չկրակեն ու նաեւ «ապահովութեան ուժեր» անուան տակ վարձկան զինուորներ եւ խումբեր դրկուեցան անխնայ եւ արտառաքսական միջոցներով ջարդարարութիւններ իրականացնելու հոն, այս բոլորէն եսէ զօրավար Փեթրասուս, Իրաքի պատերազմին ամերիկացի հրամանատարը, կը վկայէ, թէ Իրաքի դրածոյ կառավարութիւնը ի վիճակի չէ պաշտպանելու երկրին կառոյցը:









Ըստ լաւատեղեակ աղբիւրներու, Իրաքի պատերազմը պիտի արժէ 3 տրիլիոն դոլար ամերիկացի հարկատուներու համար:Նոբելեան մրցանակատու տնտեսագէտ Ջոզէֆ Սթիգլից կը սպասի, թէ մասնագէտներու համար իսկ այդ գումարին տարողութիւնը հասկնալը անհնար է:

Միւս կողմէ երկրին տնտեսութիւնը առաջարկ կը վաթարանայ, իսկ կարգ մը ռազմաոչեաներ ալ կը ջանան դրական երեւոյթ նկատել երկրին ռազմական արդիւնաբերութեան աճը, ուրկէ բնակչութեան մէկ մասը կ'օգտուի իր աշխատանքը:

Նախագահ Քլինթըն պաշտօնավարութեան աւարտին խանի մը միլիարդ դոլարի յատկացումով մը հետաքրքիր պատճառ եղաւ նախագահ Բուշի 8 տարիներու երկրի բիւջէին մէջ ստեղծած բացը լրացուցիչ խանի մը սերունդներու ճիշդ պարտքը պիտի մնայ:

Հիմնականին մէջ Մըք Քէյնը - շատ մակերեսային տարբերութեամբ- պիտի շարունակէ նախագահ Բուշի խաղաքաղաքականութիւնը, որ, ըստ «Նիւ Եորք Թայմզ» թերթի մնայուն աշխատակից Մորին Դաւիդի, «երկիրը մխրճած է խրամատի մէջ»:

Գալով հայութեան եւ Հայասանին, նախագահ Բուշի տարիներուն շարունակաբար նուազեցաւ Հայասանին տրուած օժանդակութիւնը՝ աւելցնելով Ադրէյճանինը: Նոյնպէս, նախագահական մենաշնորհի վերածուեցաւ Freedom Support Act-ի 907 յաւելուածը, որ կարգիլէր ամերիկեան ուղղակի օժանդակութիւնը Ադրէյճանի կառավարութեան:

Գալով Ցեղասպանութեան ճանաչման հարցին, նախագահ Բուշ իր ընտրութենէն առաջ գրատոր կերպով խոստացած էր իրականացնել այդ ճանաչումը, սակայն անցնող 7 տարիներուն ոգի ի բռին աշխատեցաւ խափանել զայն, ճնշելով կոնգրեսականներու եւ ծերակուսականներու վրայ:

Այս մարդին մէջ եւս Մըք Քէյնի հաղթականութիւնը չի կրնար տարբեր ըլլալ-տակաւին ան պաշտօնական դիրքորոշում չէ յայտնած Ցեղասպանութեան ճանաչման առնչութեամբ, սակայն անգամ մը հարցումի մը պատասխանելով ըսած է, թէ իմ չի կրնար զբաղիլ այդպիսի «ժամանակավրէպ» հարցերով: Սակայն հակառակ այս բոլորին, դեռ պիտի գտնուին ամերիկահայեր, որոնք պիտի քուէարկեն Մըք Քէյնի օգտին, պահպանելու համար հանրապետական կուսակցութեան հանդէպ իրենց հաւատարմութիւնը...

Մէք Քէյնն առողջութեամբ տկար է, չի թուիր թէ յաղթահարած է խղճկեղի հիւանդութիւնը եւ ընտրելու պարագային պիտի հանդիսանայ Ամերիկայի պատմութեան ամէնէն տարեց նախագահը: Այսօր արդէն ան 71 տարեկան է:

Դեմոկրատներու կողմը մնացած են երկու թեկնածուներ: Ծերակուսական Ջան Էդուըրդսը երկարդ անգամ փորձեց թեկնածու դառնալ, սակայն դարձեալ դուրս մնաց ընտրայքարէն:

Դեմոկրատներու ցանկին վրայ կը մնան Նիւ Եորքի ծերակուսական Հիլըրի Քլինթընը եւ Իլլինոյզի ծերակուսական Բարաք Օբաման: Այս վերջիններուն պարագային ալ պատմական անկիւնադարձ մը պիտի նշէ անոնց ընտրութիւնը, որովհետեւ Ամերիկան ցարդ չէ ունեցած կին կամ սեւամորթ նախագահ:

Ամերիկայի 50 նահանգներուն մէջ կատարուող նախնական ընտրութիւնները փոխն ի փոխ յաջողութիւններ կընծայեն երկու թեկնածուներուն ալ, որոնցմէ ոչ մէկը ցարդ տարադրութիւն ունի գիջելու:

Բարաք Օբաման Քենիացի սեւամորթ հօր եւ սպիտակամորթ մօր մը զաւակն է, Հաւայի համալսարանի փայլուն շրջանաւարտ եւ տիմանադրական իրաւաբանութեան նախկին դասախօս, որ ութ տարիներ ի վեր Իլլինոյզ նահանգը կը ներկայացնէ ամերիկեան ծերակոյտին մէջ:

Հիրլի Քլինթընն նոյնպէս փայլուն իրաւաբան ու յարգուած ծերակուսական մըն է Նիւ Եորք նահանգէն: Իր գրաւականը ութ տարի իր ամուսնոյն՝ նախագահ Բիլ Քլինթընի հետ Սպիտակ տան իր փորձառութիւնն է: Երկու թեկնածուներն ալ կախարդող հետեւորներ են: Դէպքառակ որ նախկին նախագահ Բիլ Քլինթընն որոշ հեռատրութիւն մը կը պահէ իր կնոջ ընտրայքարէն, սակայն անոնց կողմնակիցները յաճախ կը յիշեցնեն քուէարկողներուն, որ մէկ նախագահի ընտրութեամբ երկու նախագահ պիտի ստանան Սպիտակ տուն:

Այսօր ամերիկացի ընտրողին համար ամէնէն կարեւոր հարցերէն մէկը տնտեսութեան բարելաւումն է, որուն մասին երկու թեկնածուներն ալ իրարու մօտ դիրքորոշումներ կը խոստանան:

Միւս կենսական հարցը բժշկութեան մատչելիութեան խնդիրներն են, որոնց շուրջ եւս որոշ տարբերութիւններ կան հրապարակի վրայ: Տիկին Քլինթընն այս հարցին մէջ աւելի իրապէս առաջարկներ կը ներկայացնէ՝ երկար ատեն այդ մարզին մէջ իր ունեցած փորձառութեան բերումով:

Արտաքին քաղաքականութեան գլխաւոր հարցը Իրաքի պատերազմն է, եւրոպայի դաշնակիցներուն հետ յարաբերութիւնները բարելաւելու կողմին: Այս հարցին շուրջ տիկին Քլինթընի գրուագ մը ունի, որ բնականաբար հիմնուին կը տարբերի Բուշ-Մըքէյն քաղաքականութենէն: Ան կը խոստանայ սպայակոյտի պետերուն հետ խորհրդակցելով ընտրութենէն մինչեւ վեց ամիս եսէ Իրաքի պատերազմը վերջացնելու եւ ամերիկեան զօրքը տուն կանչելու առաջարկ մը ներկայացնել: Տիկին Քլինթընի իրաքեան քաղաքականութեան խոցելի կէտը

Շարունակութիւնը՝ էջ 8

ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՐԴԻ ԲԻԶՆԵՍԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐԸ

ԽՍՀՅԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

2008 թ. ՀՀ նախագահական ընտրությունների խառգարաշի ընթացում առաջա նախագահ Սերժ Սարգսյանը բազմիցս հայտարարում էր. «Իմ ծրագրի ողնաշարը համայն հայության ողջ ներուժը հայտնաբերելն ու օգտագործելն է»: Մեր հողվածաշարը միտված է հայտնաբերելու՝ ներկայացնել հայության մեկ հատվածի՝ ռազմավարական դաշնակից Ռուսաստանում բնակվողների տնտեսական ներուժը: Ուսումնասիրել ենք Ռուսաստանի 57 բնակավայրերում ապրող 205 անձանց կենսագրությունը: Ընդ որում, ընտրել ենք առաջին դեմքերին՝ ընկերությունների, ձեռնարկությունների, ֆիրմաների, կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ որոշ մարդկանց, որոնք անվանապես զբաղեցնելով նվազ պատասխաններ, այդուհանդերձ արձանագրել են անհերքելի հաջողություններ: Տանկի թվաբանական պարզ հաշվումը ի ցույց է դնում հայկական բիզնես-նախաձեռնությունների 6 հիմնական խումբ. ա) բանկային եւ ֆինանսավարկային (36 հոգի), բ) էներգառաջացում (կառուցում, շինարարություն եւ վաճառք՝ 17 հոգի), գ) ճանապարհային եւ գազային բիզնես (արդյունահանում, վերամշակում եւ վաճառք՝ 14 անձ), դ) տեղեկատվական տեխնոլոգիաներ (17 հոգի), զ) արտահանում, որը չնայած ներկայացված է ընդամենը 9 անձով, սակայն ֆինանսական հատույցի ցուցանիշով զիջում է միայն առաջին խմբին եւ է) զանգվածային լրատվամիջոցների ոլորտ (11 հոգի): Մյուսները տնտեսության գրեթե բոլոր ոլորտների ներկայացուցիչներ են:

Հավելենք նաեւ, որ 77 հոգի ծնունդով Հայաստանից է, 17-ը՝ Վրաստանից, 9-ը՝ Ադրբեջանից, մյուսները ծնվել են Ռուսաստանում:

Հողվածաշարը, բնականաբար, սկսում ենք ամենաճանաչելի հայով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՒՆՃԱՐԸ

Այս տարվա մայիսի 25-ին կբոլորի Ռուսաստանի բիզնես-սերուցքի ներկայացուցիչներից մեկի՝ «Տրոյկա դիալոգ» ներդրումային ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ Ռուբեն Կարլենի Վարդանյանի 40-ամյակը: Նա ոչ միայն անկախ Ռուսաստանի արդյունք է, այլեւ այդ երկրի նոր տնտեսության հենասյուն-կառուցողներից , եւ նրա մասին ցանկացած լրագրային հոդվարկում դասարկված է լինելու սոսկ մի հոդանցիկ, աղոտ ակնարկ:

Երգումնցի տարեկան Համո Վարդանյանը 7-ամյա հասակում փրկվել էր ցեղասպանությունից, գաղթել Երեւան ու դարձել տաքսագիտության դոկտոր: Ճարտարագիտության դոկտոր հայը երկար տարիներ դասավանդել էր Երեւանի գրիտեխնիկական ինստիտուտում: Մայրական ճյուղը թիֆլիսյան առաստներ ունի. մեծ տատը լեռնային ճարտարագիտություն էր ուսանել Սոբրոնի հաճալսարանում, տատը՝ իշխան Մելիք-Մինասովն էր, իսկ տատը սերում էր Ղարաբաղից: Եվ ահա իր երակներում հայի հավակական արյուն կրող Ռուբենը 1985թ. ոսկե մեդալով ավարտեց Երեւանի թիվ 20 միջնակարգ դպրոցն ու, որպես «ազգային կադր», գործուղվեց Մոսկվայի ռեհաբիլիտացիայի տնտեսագիտության ֆակուլտետ: Ավարտեց 1992-ին, որովհետեւ սիրվեց եղավ 2 տարի ծառայել բանակում: Բայց դեռեւս 1991-ին ուսանողի անցավ «Տրոյկա դիալոգ» ընկերությունում, իսկ մեկ տարի անց դարձավ ֆիրմայի գլխավոր տնօրենը: Ի դեմ, Ռ.Վարդանյանի դիտողական աշխատանքը ճանաչվեց լավագույնը շրջանավարտների մեջ, եւ նրան գործուղեցին Իտալիա՝ «Banca CRT»-ում դրակտիկա անցնելու:

«Ես հասկացա, որ հայտնվել եմ միանգամայն այլ երկրում»:

Նոր Ռուսաստան, նոր մարտահրավերներ, նոր հնարավորություններ: Նախկին կայսրության ամենախոշոր բեկորը դեռեւ է հիմնովին վերափոխվեր, դիմակայեր ծանր փորձություններին:

Մինչ 1991 թ. Ռուսաստանում գոյություն չուներ ֆոնդային շուկա, եւ Ռ.Վարդանյանն առաջիններից մեկն էր, որ ձեռնամուխ եղավ դրա ձեւավորմանը: Այսօր, 16 տարի անց, կարելի է փաստել, որ նա ոչ միայն հաջողել է, այլեւ ռուսաստանյան ֆոնդային շուկա հասկացությունը նույնացվում է Ռ.Վարդանյանի անվան հետ: Տնտեսագիտական բարդ եզրաբանությունից, տարաբնույթ բիզնես-ընթացքներից խուսափելու համար փորձենք դարձյալ դյուրացնող տալ, թե ինչով է զբաղվում Ռ.Վարդանյանը. նա ռահվիրաբերության հենքի վրա կառավարում-տնօրինում է ռուսաստանյան խոշորագույն ընկերությունների ու հաղորդագրությունների ֆինանսները, ինչպես նաեւ ամերիկյան ներդրումները Ռուսաստանում: Դա անելու համար նա ինքն է անվրեպ որոշում այն ուղղությունները ու ոլորտները, որտեղ նպատակահարմար է ֆինանսական ներդրում կատարել: 2006 թ. «Տրոյկա դիալոգի» դրամաշրջանառությունը կազմեց 160 մլրդ դոլար, իսկ զուտ եկամուտը՝ 200 միլիոն: 2007 թ. ընկերության անմիջական կառավարման ներքո գտնվող միջոցները զերազանցեցին 4,5 մլրդ դոլարը: «Տրոյկա դիալոգի» սեփականատերերն են ավելի քան 70 մենեջերներ, իսկ Ռ.Վարդանյանի փայաբաժինը կազմում է 65%: Հավելենք նաեւ, որ ընկերությունը կառավարում են 10 տնօրեններ, որոնց թվում առաջնակարգ դերակատարություն ունեն նախկին ֆրանսահայ Ժակ Տեր-Մկրտչյանն ու նախկին երեւանցի Գոռ Նահապետյանը:

Բարձր դրոֆեսիոնալիզմի համար «Տրոյկա դիալոգը» նվաճել է ուրջ վեց տասնյակ մրցանակներ, իսկ Ռ. Վարդանյանն անձամբ արժանացել է «Տարվա մարդ» տիտղոսի՝ «Ներդրումային բանկատեր-2003» անվանակարգում, «Դարին» ազգային մրցանակի՝ «Բիզնես-ռազմավարություն» անվանակարգում (2004 թ.), «Ernst&Young» միջազգային մրցանակի՝ «Ռուսաստանի 2004թ. ձեռնարկատեր» անվանակարգում, «Արիսնու-2006» մրցանակի՝ «Ռուսաստանյան բիզնեսի զարգացման գործում ունեցած առանձնակի վաստակի համար» անվանակարգում: Ի վերջո, նա միակ հայն է, որ վերջին երկու տարում տեղ է գտնվում Ռուսաստանի 22 առաջատար ձեռնարկատերերի ցանկում (ամենահեղինակավոր այդ վարկանիշային աղյուսակը գլխավորում է Օ. Դերիպասկան՝ շուրջ 40 մլրդ դոլար անձնական ունեցվածքով):

Ռ. Վարդանյանը եւ Ռուսաստանի նորընտիր նախագահ Դ. Մեդվեդեւը:

Դժվար է ասել՝ Ռ. Վարդանյանը ծանոթ է հայոց ազգային կոմիտաների բազմադարյա ավանդույթներին, թե՝ ոչ, բայց նա ճիշտ ու ճիշտ կրկնում է նախնյաց ուղին՝ բիզնեսի արդյունքը ծառայեցնելով երկու հիմնական նպատակի՝ կրթական-լուսավորչական եւ բարեգործական:

Ռ. Վարդանյանի համար կրթությունն առաջնային նշանակություն ունի, նա իրավացիորեն համարում է, որ բիզնեսում ետ չմնալու, մրցակցությանը դիմակայելու, բարձր արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է տիրապետել ժամանակակից համաշխարհային տնտեսագիտական մտքի նվաճումներին: Դա է պատճառը, որ իր բոլոր գործունեությանը զուգընթաց նա անընդհատ կրթություն է ստացել՝ ավարտել է «Մերիլ Լինչի» (նյու Յորք) զարգացող շուկաների դասընթացները, 2000 թ.՝ «Value Based Managment» եւ «Negotiations Dynamics» ուսումնական ծրագրերը (Ֆոնտենբլո, Ֆրանսիա), 2001 թ.՝ Հարվարդի բիզնես-դպրոցի՝ բարձրագույն ղեկավարության համար նախատեսված «The General Manager Programm» կրթական ծրագիրը: Եվ հենց արտասահմանում կրթություն ստանալու փաստը Ռ. Վարդանյանին դրդեց հանդես գալու նոր նախաձեռնությամբ. գիտակցելով, որ անհրաժեշտ են երկրի տնտեսության առանձնահատկություններին համապատասխանող նոր սերնդի երիտասարդ մասնագետներ, նա դիմեց Ռուսաստանի 13 խոշորագույն ձեռնարկատերերին՝ առաջարկելով հիմնել բիզնես-դպրոց: Եվ ահա 2006 թ. սեպտեմբերի 21-ին մերձմոսկովյան Սկոլկովո վայրում տեղի ունեցավ «Կառավարման մոսկովյան դպրոցի» հիմնարկեք. գեներալ-մեջինի 14 հիմնադիրների անվանական թափանցիկ հիմնադրամը, իսկ 15-րդը սեռագրել էր ՌԴ նախագահ Վ. Պուտինը: «Սկոլկովո» բիզնես-դպրոցում, որի նախագահն է Ռ. Վարդանյանը, ուսուցումն արդեն սկսվել է 2007 թ. աշնանից, իսկ առաջին ընդունելությունը կկատարվի այս տարի:

Բացի այդ, բանիմաց կադրեր պատրաստելու համար «Տրոյկա դիալոգը» սերտորեն համագործակցում է Պետական հաշվապահա-Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի հետ եւ աջակցում է «SIFE-Russia» կրթական ծրագրին:

Մոտ հաշվարարային բիզնեսի նվաճումներին հաղորդակից դարձնելու համար «Տրոյկա դիալոգը» հրատարակել է օտարերկրյա առաջատար մասնագետների 21 անուն գիրք, որոնցից շատերի ռուսերեն հրատարակությունների առաջաբանները գրել են Ռ.Վարդանյանն ու Ժ.Տեր-Մկրտչյանը:

Մեր ազգակցի ու նրա ընկերության գործունեության մեջ առանձնակի տեղ է գրավում բարեսիրությունը. «Տրոյկա դիալոգում» ստեղծվել է Բարեգործական կոմիտե, որը մշակում է ծրագրեր ու մեկենասությամբ ֆինանսական միջոցներ հատկացնում: Այսպես, ավելի քան 7 տարի ընկերությունն օժանդակում է Մոսկվայի թիվ 11 մանկատանը, ընդ որում՝ ընկերության աշխատակիցներն իրենց անձնական միջոցների հաշվին ամեն տարի կրկնապատկում են հատկացվող գումարի չափը: Բացի այդ, «Տրոյկա դիալոգի» աջակցությամբ 30 առավել տաղանդաշատ երաժիշտ-երեխաներ կատարելագործում են իրենց վարպետությունը, երեխաների համար խաղահրապարակներ են կառուցվել Նիժնի Նովգորոդ եւ Ջավոլժիե քաղաքներում եւ այլն, եւ այլն:

Կուզենայինք անդրադառնալ Ռուբեն Վարդանյանի՝ անդադարագիտորեն լռության մատնված եւս մեկ նվիրվածությանը՝ հայասանանոպաս, ազգասիրական գործունեությանը:

Մենք հիմա բացառիկ հնարավորություն ունենք՝ դարեր անց մենք, որպես հայ ազգ, հայկական պետություն կարողենք մտածել մեր ապագայի մասին, ոչ թե օտար լծի տակ մի կերպ ինքնապահպանվելով, այլ իրատեսորեն մտածելով, թե ինչպիսի երկիր ենք ուզում կառուցել: Մենք հարթել ենք դարաբաղյան պատերազմում եւ այժմ պետք է սովորենք արդել հարթածի, այլ ոչ պարտվածի մտայնությամբ, այդ իսկ պատճառով հիմա մեզ պետք է զարգացման նոր տեսլական:

Ահա այս տեսլականը նախանշելու համար Ռ.Վարդանյանը նախաձեռնեց «Հայաստան-2020» հիմնադրամի ստեղծումը, դարձավ Ազգային մրցակցային խորհրդի եռանդուն անդամ, հիմնովին ուսումնասիրեց Հայաստանի ողջ տնտեսությունը եւ մատնացույց արեց զարգացման ուղղությունները՝ Սփյուռքի ներուժ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, առողջապահություն, զբոսաշրջություն: Սակայն են այն ճյուղերը, որոնք մեր երկրին հնարավորություն կտան դեռեւ մեկնել աշխարհի առաջատար պետությունների հետ:

Մեր ժողովրդի հազարամյա պատմության ընթացքում մշտապես եղել են դրամատերեր, ովքեր ազգ են պահել՝ եկեղեցի ու դպրոց են կառուցել, գիրք են հրատարակել ու զենքը ձեռքին կռվել: Ռուբեն Վարդանյանն այդ փաղանգից է: Նա XXI դարի նոր հայն է, որը բոլոր հնարավորություններն ունի շարունակելու Հովսեփ Սիրիանյանի, Հարություն Պեզճյանի, Ալեքսանդր Մանթաշյանցի, Պողոս Նուբարի, Գալուստ Գյուլբենկյանի, Ալեք Մանուկյանի, Քրիստ Քրեդոյանի, Արշակ Կարապետյանի, Լուիզ Մանուկյան-Սիմոնի, Արա Աբրահամյանի եւ հազարավոր այլ նվիրյալների ավանդույթները եւ մնալու մեր ժողովրդի պատմության մեջ:

Հ.Գ. Ըստ ռուսական հեղինակավոր «Ֆինանս» շաբաթաթերթի, 2007 թ. Ռ.Վարդանյանի անձնական ունեցվածքը կազմել է 1,5 միլիարդ դոլար:

Ս էջից

Նախագահական ընտրությունները Մ.Նահանգներում

այն է, որ ան իբրեւ ծերակուտական նախագահ Բուշին պատերազմ յայտարարելու որոշման մէջ կողմ հուէարկած է: Եւ ամէն անգամ, որ այդ մեղադրանքը գլուխ ցցէ, ան կը յայտարարէ, թէ այն ինչ որ գիտէ Իրաքի մասին այսօր, չէր գիտեր իր դրական հուէն տուած օրերուն: Եթէ գիտնար ամբողջ ճշմարտութիւնը՝ դէմ կը հուէարկէր: Սակայն իրականութիւնն այն է, որ այդ օրերուն ապրելու դժուար էր ամերիկացի հուէարկողներուն բազկերակը յանձել եւ փոխնախագահ Դիք Չէյնիի եւ «նոր պահպանողականներու» (Նէոքոն) յեղիւռնները այնքան տարածուած էին մամուլի մէջ, որ պահու մը համար առդարգուած կը նկատուէր իրաքեան արշաւանքը:

Միւս կողմէ, Օբամայի կեցուածքը խնամ եղած է. ան առաջին օրէն դէմ հուէարկած է պատերազմին եւ այժմ կը յայտարարէ, թէ նախագահ ընտրուելուն յաջորդ օրն իսկ պիտի սկսի ամերիկեան բանակը դուրս բերել Իրաքէն:

Ինչ կը վերաբերի ամերիկացի ժողովուրդը հետաքրքրող հիմնական միահարցերուն՝ երկու դեմոկրատները իրենց հայեցակէտերուն ու խոդակականութեան մէջ մեծ տարբերութիւններ չունին. այդ պատճառաւ ալ մամուլը սկսած է մանրակաչ եւ մանրամասնով զբաղիլ: Օրինակ, տիկին Քլինթընի կողմնակից նախկին կոնգրեսական եւ նախկին փոխնախագահական թեկնածու Տերալդին Ֆերարոյ անուղղակի ակնարկութիւն մը կատարած էր սեւամորթներու մասին, որ պահ մը փոթորկեց մամուլը: Իր հերթին, Օբամայի պատկանած եկեղեցւոյ հովիւը, որ վերջերս անցած է թոշակի, վիրատուական անուանարկումներ կատարած է Չիկագոյի իր եկեղեցւոյ խորանէն սոփիսակոմորներու եւ տիկին Քլինթընի հասցէին: Այս օրերուն ալ մամուլը կը փորձէ այդ եկեղեցականին՝ Տերեմիա Ռայթի գայթակղութիւնը փաթթել Օբամայի վզին:

Վերջին օրերուն Օբամայի ի նպաստ դեմոկրատ պատգամաւորներուն թիւը զերակշիռ դարձած է, ինչպէս նաեւ դրամական նուէրներ ընծայողներուն:

Երկու դեմոկրատ թեկնածուներու հակամարտութիւնը սկսած է վնասել կուսակցութեան միասնութեան: Այդ պատճառով ալ կարգ մը վասակատր դեմոկրատներ խորհուրդ կուտան ընդհատել այդ պայքարը եւ կերպով մը համոզել տիկին Քլինթընը, որ գոհայ փոխնախագահի պատասխանով: Սակայն, ինչպէս Հարվրդ համալսարանի դասախօս եւ Օբամայի նախկին խորհրդական Սամանթա Փաուըրզ խորհրդաբահորէն մամուլի նարկայացուցիչի մը յայտնած էր՝ «Տիկին Քլինթընն հրէ մըն է, որ կուզէ ամէն գնով յաղթանակել»:*

Պեռլին, ԷՄՆ

*** Սամանթա Փաուըրզ այդ յայտարարութեան վրայ հրաժարեցաւ: Ի դէմ, անհասկնալի էր տիկին Փաուըրզի հրաժարման լուրը Հայաստանի 31 հեռատեսութեան «Հայլուր» ծրագրէն այնքան ցնցագին ծանուցանելը: Տիկ. Փաուըրզ հայոց ցեղասպանութեան մասին ամէնէն հզօր գիրքերէն մէկը հրատարակած է վերջերս եւ Օբամայի ընտրութեան պարագային թեկնածու էր (եւ հաւանաբար՝ դեռ կը մնայ) պետքարտուղարի պատասխանին: ■**

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գաղթօջախներ

Նոր գիրք Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի մասին

Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը միջնադարի ներսում ունի հայ հոգեւոր ու մշակութային արժեքների հարատեւման ապարեզում: Նրա ստեղծած մշակույթը, աղանդը, գրականությունն ու գիտությունը դարեր ի վեր դուրս են եկել տեղական շրջանակներից եւ սացել համազգային կարեւորագույն նշանակություն: Այդ գաղթօջախի պատմության ուսումնասիրությունը, հետեւաբար, կազմում է ազգի մշակութային ու հոգեւոր մշակույթի զարգացման պատմության բաղկացուցիչ մասը՝ արժանանալով ուսումնասիրողների չդադարող ուշադրությանը: Դրա վկայություններից է Ալբերս Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV-XVII դդ.» (Երեւան, 2007, 471 էջ) աշխատությունը, որը լույս է տեսել Գալուստ Կիւլբենկյան հիմնարկության հայկական մասնաճյուղում: Իր ընդգրկումներով եւ առաջադրած հիմնահարցերի կարեւորությամբ այս գիրքը լրացնում է Կոստանդնուպոլսի գաղթօջախին նվիրված՝ Հ. Ասատուրի, Հ. Ճ. Սիրունու, Հ. Պետրոսյանի, Գ. Բամբուճյանի եւ այլոց գործերի շարքը: Միաժամանակ, իր ժամանակից հարցադրումներով ու առաջադրած հիմնահարցերով այս աշխատությունը նոր շերտեր է հայագիտության գաղթօջախի պատմության մեջ, հիմնավորում կամ փորձում հիմնավորել իր նոր լուծումները, որի մեջ էլ, կարծում եմ, կայանում է գրքի գիտական ու արդիական արժեքը:



Կ. Պոլսում հայերն ապրել են դեռեւս Բյուզանդական կայսրության ժամանակներից: Մինչեւ հաղթի գալովը թուրքերի կողմից, այստեղի հայկական հավաքների կոնկրետ դեկավարությունը գտնվում էր երկու եռիսկոպոսների ձեռքին՝ Հովհաննես, որն առաջնորդել է Թռակիայի, Հունաստանի եւ Կ. Պոլսի շուրջը եղած հայերին եւ Եսայու, որի հովանավորության տակ էր գտնվում միայն Կ. Պոլսի հայությունը:

Կ. Պոլսում եւ նրա շուրջը գտնվող հայության համար անշահ ծառայություն էր մայրաքաղաքի գալուստը, որի ժամանակ հաղթում սպանվեցին, կողոպտվեցին եւ աքսորվեցին բնակիչների հսկայական զանգվածներ, այդ թվում նաեւ մեծ քանակությամբ հայեր: Ժամանակակից հայ ողբերգակ տաղերգուներից մեկը՝ Աբրահամ Անկյուրացին իր յափաղ «Ողբի» մեջ նկարագրել է Կ. Պոլսի անկումը եւ հիսունյա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի կրած ծանր տառապանքները: Անավոր այս ողբերգության ժամանակ փաստորեն ոտի տակ տրվեցին, ոչնչացան Կ. Պոլսի եւ նրա շրջապատի երբեմնի հարյուրաց օջախների վերջին բեկորները:

Թուրք նվաճողները, սակայն, շուտով զգացին ամեն ինչ ոչնչացնելու իրենց հաղթականության՝ սեփական շահերի համար անհրաժեշտությունը: Գրավելով Կ. Պոլիսը, սուլթան Մեհմեդ Երկրորդը, նոր մայրաքաղաքում բնակեցրեց հայ, հույն եւ հրեա շինարար վարպետների, որոնց շնորհիվ գեղեցկություն եւ փայլ հաղորդեց իր նոր հաղթին: 1461 թ. Կ. Պոլսում հաստատվեց հայոց պատրիարքությունը: Առաջին պատրիարք Հովակիմ եռիսկոպոսին սուլթանը տվեց որոշ եկեղեցական-հասարակական իրավունքներ: 1478 թ. արդեն Կ. Պոլսում բնակվում էր 1000 տուն հայ: Ալբերս Խառատյանը իր մենագրության մեջ ցույց է տալիս, որ թուրքական տիրապետության առաջին ավելի քան երկու դարերի ընթացքում պոլսահայերի թիվը բազմապատկվել է նախ բռնագաղթերի, առյա կամավոր եկած եւ աշխատանքի որոնող պանդուխտների հաշվին: Ա. Խառատյանը հատկապես ուշադրություն է դարձրել գաղթօջախի կազմավորման առավել ամբողջական պատկերին, եկեղեցիների պատմությանն ու պատրիարքական ինստիտուտին, գաղթօջախի բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված իրողություններին, Կ. Պոլսի հույն հանրության հետ նրա տնտեսական ու կրոնադավանական փոխհարաբերություններին: Սրա հետ առնչված՝ փորձ է արվում ուսումնասիրել առհասարակ կայսրության մայրաքաղաքի միջավայրը, օտար ազդեցությունների եւ փոխառնչությունների այն պայմանները, որոնց մեջ ապրել, գործել եւ իր պատմությունն ու մշակույթն է ստեղծել քաղաքի հայ բնակչությունը՝ իր հոգեւոր կերտվածքը: Միաժամանակ, իր ժամանակից հարցադրումներով ու առաջադրած հիմնահարցերով այս աշխատությունը նոր շերտեր է հայագիտության գաղթօջախի պատմության մեջ, հիմնավորում կամ փորձում հիմնավորել իր նոր լուծումները, որի մեջ էլ, կարծում եմ, կայանում է գրքի գիտական ու արդիական արժեքը:

Կ. Պոլսում հայերն ապրել են դեռեւս Բյուզանդական կայսրության ժամանակներից: Մինչեւ հաղթի գալովը թուրքերի կողմից, այստեղի հայկական հավաքների կոնկրետ դեկավարությունը գտնվում էր երկու եռիսկոպոսների ձեռքին՝ Հովհաննես, որն առաջնորդել է Թռակիայի, Հունաստանի եւ Կ. Պոլսի շուրջը եղած հայերին եւ Եսայու, որի հովանավորության տակ էր գտնվում միայն Կ. Պոլսի հայությունը:

Կ. Պոլսում եւ նրա շուրջը գտնվող հայության համար անշահ ծառայություն էր մայրաքաղաքի գալուստը, որի ժամանակ հաղթում սպանվեցին, կողոպտվեցին եւ աքսորվեցին բնակիչների հսկայական զանգվածներ, այդ թվում նաեւ մեծ քանակությամբ հայեր: Ժամանակակից հայ ողբերգակ տաղերգուներից մեկը՝ Աբրահամ Անկյուրացին իր յափաղ «Ողբի» մեջ նկարագրել է Կ. Պոլսի անկումը եւ հիսունյա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի կրած ծանր տառապանքները: Սրանք հետ առնչված՝ փորձ է արվում ուսումնասիրել առհասարակ կայսրության մայրաքաղաքի միջավայրը, օտար ազդեցությունների եւ փոխառնչությունների այն պայմանները, որոնց մեջ ապրել, գործել եւ իր պատմությունն ու մշակույթն է ստեղծել քաղաքի հայ բնակչությունը՝ իր հոգեւոր կերտվածքով, իր ազգային նկարագրով: Համապատասխան իր բնույթին՝ աշխատությունն ընդգրկում է Կ. Պոլսի հայ գաղթօջախի պատմության մի շարք հանգուցային խնդիրներ: Գրքի խորագրերում եւ ենթախորագրերում ընդգրկված բազմաթիվ հարցերը սերտորեն փոխկապակցված են եւ հանդիսանում են միմյանց տրամաբանական շարունակությունը: Այդպիսի հիմնահարցեր են Կ. Պոլսի պատրիարքությունը, նեռիակությունները, Օսմանյան Թուրքիայի հայոց կաթողիկոսության խնդիրները, Կ. Պոլսի երեցները եւ պատրիարքական իշխանությունը, սոցիալ-տնտեսական կյանքը՝ արհեստավորական-առեւտրական եռանդը, հայ վաճառականությունը եւ այլն: Հեղինակի հետաքրքրությունների շրջանակում են նաեւ հարկային համակարգը Կ. Պոլսում, Կ. Պոլսի հայ հանրությունը եւ օսմանյան ավանդական հասարակությունը, գերության համակարգը Օսմանյան կայսրությունում, հայ-հունական եկեղեցական հարաբերությունները: Սրա այս եւ այլ երեսպտերներ ու իրադարձություններ ընդգրկող երկուսուկես դարյա պատմական ժամանակաշրջանի հենքի վրա հեղինակն ստեղծել է գաղափարաբանությամբ եւ պատմական մեթոդով ամբողջական մի աշխատություն, որի բոլոր բաժինները ծրագրված նպատակալացությամբ արտացոլում են ոչ միայն գաղթօջախի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքը, այլեւ պատմական բարդ ու հակասական կացության մեջ տեղի ունեցող ազգապահպանման համար ձեռնարկումների խառն ու խորին միջավայրը: Հեղինակին հաջողվել է բոլոր անհրաժեշտ մանրամասնությունների հնուս խմբավորմամբ ներկայացնել գաղթօջախի հայության սոցիալական կյանքը եւ մտածողության կերտը, կեցության ողջ համալիրը:

Մենագրությունում կան գիտական բանավեճի ուշագրավ դրվագներ: Ընդամենը, հեղինակը բանավեճը վարում է օտա խաղակիցք ձեռով՝ կռվանները փաստակալած են, եզրահանգումները՝ հիմնավոր: Այստեղ, բարձր գնահատելով գաղթօջախի տնտեսական, ազգային-եկեղեցական եւ մշակութային իրականությունը խոր վերլուծության ենթարկելու ուղղությամբ Հակոբ Անասյանի աշխատությունները՝ սկսած սկզբնաղբյուրների արժեքավորումից, Կ. Պոլսի անկմանը նվիրված նրա հետազոտություններից եւ վերջացած XVXVII դարերի առանձին գործիչների դիմաստվերներով ու ողբասիայ հանձնի եկեղեցական, ազգային իրականության վերաբերյալ մնայուն դրույթներով, կարեւորելով նրա վերլուծությունները վաճառականության երկու նեռիակ հատվածների (խոջայական, առաջադիմական եւ վաշխառական՝ չելեբիական) վերաբերյալ, հեղինակը միաժամանակ կատարում է ճշգրտող դիտողություններ: Նա կարծում է, որ ձգտելով պատմել իր ազդեցությունը կայսրության հայության վրա եւ ամրապնդելով իր առաջնորդությունները ու նվիրակությունները, էջմիածինը, փաստորեն, հոգեւոր համախմբման դրոշով փորձում էր պահպանել ազգային միասնությունը: Այս գործընթացում նա հենվում էր ոչ թե Կ. Պոլսի առեւտրավաշխառական վերնախավի՝ չելեբիական շերտի, այլ Հայաստանի տարբեր հատվածներից Կ. Պոլիս, Նիկոմեդիա, Ղրիմ եւ այլուր XVII դարի սկզբներից ի վեր գաղթած հայ բնակչության սեւար հատվածների վրա: Կ. Պոլսում չելեբիական դասն անգիջում պայքար էր մղում բնակչության հետ այս հատվածների դեմ՝ ձգտելով կեղեքել գաղթականներին եւ նրանց ուսերին բարձել հանձնի ընդհանուր պարտի մի մասը՝ առաջացնելով նրանց դժգոհությունը:

Մենագրության հեղինակը Կ. Պոլսի հայոց պատրիարքության պատմության զարգացումները, դրա յուրահատկություններն ու ընթացքը իրավագիտակցությամբ է հայ կրոնական կենտրոնների՝ էջմիածնի, Սսի եւ երուսաղեմի փոխհարաբերություններին ու կարգերին, դրանք դասակարգում ոչ միայն հայ իրականության, այլեւ օսմանյան պետության ու նրա միջազգային կացության բարդ ու հակասական գործոններով: XVII դարից սկսած էջմիածինը, հատկապես Սուլթան կաթողիկոսի ժամանակներից, ձգտում էր վերականգնել նախորդ դարում կորցրած իր դիրքերը, առարկայորեն՝ թեմերն ու վիճակները օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում: Այս ասպարեզում հանդես գալով իր համազգային եւ ընդհանրական հոգեւոր կենտրոնի գերակայության դրոշով, էջմիածինը ամենից առաջ պետք է հակադրվեր Կիլիկիայի աթոռի մրցակցական ակտիվությանը: Այս մրցակցության առանցքն ու կենտրոնը, ինչպես ցույց է տալիս Ա. Խառատյանը, դառնում է Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը: Ուշագրավ է նրա մոտեցման հիմքում ընկած այն հիմնախնդիրը, որ եթե Սիսը եւ համապատասխանաբար, սսական կղերական ու աշխարհիկ հայ հասանը ակնհայտորեն հակադրվում էր դեռի կաթոլիկական եկեղեցին եւ եվրոպական հզոր տերությունները, ապա էջմիածինը գլխավորաբար փորձում էր հենվել օսմանյան պետության քաղաքակրթի վրա՝ ի հարկին դիմելով նաեւ կաթոլիկ պարին եւ եվրոպային: Իր հերթին, սսական հոսանքը մեծապես սատարում էր Հռոմի եկեղեցին, որը դավանական զիջումների շատ ավելի հակամետ այդ հոսանքի միջոցով փորձում էր նվաճեցնել էջմիածնի տեղն ու դերը Արեւելյան Հայաստանի նվիրակություններում եւ առաջնորդական վիճակներում: Եվ Օսմանյան կայսրությունում հայոց անկախ կաթողիկոսություն ստեղծելուն հետամուտ Սահակ վարդապետը, եւ նույն նպատակով էջմիածնից անկախ արեւմտահայոց կաթողիկոսության հիմնելուն նախաձեռնող Երդիազար Այնթապցին մի հայտնի չափով սատար եւ օգնություն են գտել Հռոմի եկեղեցու կողմից: Ա. Խառատյանը մերժում է Երդիազար Այնթապցուն ազատագրական շարժման մեջ ներգրավելու մտայնությունը եւ պատասխանում է Երդիազարին տված հայ ավանդական պատմագրության (Ե. Քյոսեմրճյան, Մ. Չամչյան, Մ. Օրմանյան եւ ուրիշներ) բնութագիրը, ըստ որի, Երդիազար Այնթապցին իր գործունեությամբ մերժում էր հայ եկեղեցու միասնությունը, որը, հեղինակի կարծիքով, «ոչ այլ ինչ էր, եթե ոչ ազգային եկեղեցու՝ որպես ազգապահպանման կարեւորագույն գործոնի դեմ ուղղված սպառնալիք» (էջ 35):


Դպրոցական սրահ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Մենագրության նորությունները պետք է համարել օսմանյան տնտեսական հաղթականության, թերեւ, կարելի կլիներ ասել՝ ավանդական տնտեսական հաղթականության համառոտ, բայց եւ հիմնական կողմերի տրավորիչ վերլուծությունները: Հիրավի, սոլթանները տեղի տալով եվրոպական ազդանտնտեսական ճնշումներին եւ նրանց տանարելով առեւտրական զիջումներ (XVI դ. վերջերից սկսած, հանրահայտ «կապիտուլյացիաները») օտարերկրյա առարկաների առջեւ լայն բանալով թուրական շուկայի դռները մասնային զիջումների մի ամբողջ համակարգով, այս ամենը հիմնավորում էին մոնեսարիզմի հայեցակետից: Դրամական զանգվածը, որ մնում էր երկրում՝ եվրոպացիներին գերազանցարար գյուղատնտեսական հումք վաճառելուց հետո, նրանք համարում էին երկրի բարեկեցության եռափիւ, որ, ի դեմ, բացառում էր արտաքին եւ ներքին հաշվեկշռի վերաբերյալ ամեն մի պատկերացում: Մենագրության մեջ այսպիսի մատեցումը ցույց է տվում Երուսաղեմ-Կոստանդնուպոլիս-էջմիածին մտնելական առնչությունների եւ առհասարակ առեւտրի նկատմամբ օսմանյան իշխանական դրսեւորումների վերլուծությամբ:

Օսմանյան տնտեսական հնարավորությունների, հատկապես այդ հնարավորությունների սահմանափակմանը՝ կապված թիմարի խնդրանքի հետ՝ Ա. Խառատյանը ներկայացրել է աշխատության տարբեր հատվածներում, որոնք, սակայն, լրացնում են մեկը մյուսին: Իսկ ամենից առաջ այն ի մասին, որ թիմարի հատատեսությունը եւ առյա փլուզումը իր հերթին կախում ուներ օսմանյան ռազմական նվաճումներից կամ հաջողություններից: Վերջիններիս ձախողումը եւ օսմանյան հզորության ակնհայտ անկումը XVI դարի վերջերից՝ պետք է թողներ հակադարձ եւ անխուսափելի հետեւանք: Ռազմաբենեֆիցիարության եւ թիմարի թուլացումը պետք է առավել խստացներ գյուղական բնակչության եւ հաղթի արհեստավորության շահագործումը՝ կոչված ելամուտները ինչ-որ չափով փոխհատուցելու տրամաբանությամբ: Նշված շահագործումը զգալի էր հատկապես ոչ մահմեդական հոգեւորականների, այդ թվում եւ հայերի տնտեսական ու կրոնական հարստահարումների ու իրավազրկության աստիճանը՝ XVII-XVIII դարերում: Աշխատության հեղինակն այս գործընթացներին ի հայտ է բերում հատկապես Կ. Պոլսի հայ արհեստավորության տնտեսական կացության եւ համայնքում նրա տեղի ու նշանակության բացահայտումներով:

Անկասկած նորույթ պետք է համարել նաեւ Կ. Պոլսի պատրիարքության պատմության մեջ աթոռակալների ինստիտուտի հայտնության ու նշանակության արժեքավորումը գրքում: Պատրիարքներին փոխարինած աթոռակալների խումբը (թեկուզ եւ ժամանակավորապես, բայց եւ մինչեւ՝ Բ. դրան հաստությամբ) փաստորեն արտացոլում էր պատրիարքական իշխանության թուլությունը ամբողջ XVII դարում եւ դրան հակակշռող՝ աշխարհիկ վերնախավի զորեղացումը պոլսահայ հանրության մեջ: Այստեղ ուշագրավ է այն, որ օսմանյան իշխանավորները հարկերի եւ միջերների կրոնական կառույցների միջեւ ընտրություն անելիս մեկ անգամ չէ, որ նախապատվությունը տվել են նյութական կողմին՝ հարկահանության արդիականությանը: XVI-XVIII դարերում Կ. Պոլսի հայոց (ինչպես նաեւ հույների) պատրիարք էր դառնում, փաստորեն այն հոգեւորականը, որը համայնքի հարկերը վճարելու երաշխիքներ էր ներկայացնում: Աթոռակալների խմբերը, հիրավի, հայտնվում էին հենց այն ժամանակ, երբ օսմանյան իշխանությունների աչքին չէին երեւում այդպիսի երաշխիքներ տվող հոգեւորականների, ուստի եւ պատրիարքի աշխարհիկ ու կրոնական գործառույթները սահմանում էին «այթը ջնջաթի»՝ Կ. Պոլսի հայկական վեց թաղերի աշխարհիկ երեսելիները:

Աշխատությունը գրված է սկզբնաղբյուրների՝ միջնադարի հայ հեղինակների, հիշատակարանների, օսմանյան վավերագրերի (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն թարգմանությունների), օտարազգի ճանապարհորդների եւ համապատասխան հայերեն եւ օտար լեզուներով հարուստ գրականության հենքի վրա: Այս ամենը հեղինակը գիտական շրջանառության մեջ է մտցրել հիմնավոր շառադարումով, իր ճոխ եւ տրավորիչ հայերենով:

Նկատելի են նաեւ որոշ ոչ կարեւոր վրիպումներ, հնչդիպիր են ինչ-ինչ կրկնություններ, չմասնավորված ընդհանուր դատողությունները, որոնք կարելի էր վերացնել առավել ուշադիր խմբագրման միջոցով: Անկախ դրանից, Ա. Խառատյանի գործը Կ. Պոլսի հայ գաղթօջախի XV-XVII դարերի պատմությանը նվիրված լավագույն ուսումնասիրություններից մեկն է, որի գիտական արժեքն ավելի է մեծանում այն իրողությամբ, որ այն հանդուրժի է բերում այս թեմային նվիրված հայ պատմագրության նվաճումները՝ դրանց միացնելով սեփական լուրջ ներդրումը: ■

Հայրենադարձությանն առնչված մի քանի հասկացություններ եւ 20-րդ դարի հայկական հայրենադարձության պատմության ուրվագծեր

ԳԵՎՈՐԳ ՅԱՔԸՃՅԱՆ

Հայկական հայրենադարձությունն անմիջականորեն առնչվում է մի խումբ հասկացությունների հետ, որոնք հայկական հասարակական-հաղորդակցական եւ ոլորտագիտական մտքում աւ այսօր չունեն վերջնական, հստակ սահմանումներ: Ստեղծվել է ահավոր մի շփոթ այնպիսի կարեւորագույն հասկացությունների շուրջ, ինչպիսիք են «Հայրենիքը», «սփյուռքը», «Հայ դաշը», «հայկական ինքնությունը», «հայրախոյանումը», «արտագաղթը»: Այսպես, օրինակ, եղել են կամ այսօր էլ հանդիպում են «մեծ հայրենիք», «փոքր հայրենիք», «միակ հայրենիք», «զույգ հայրենիք», «երկու հայրենիք», «երկրորդ հայրենիք», «նոր հայրենիք», «վերջին հայրենիք», «վերջնական հայրենիք», «նախնիների հայրենիք», եւ այլ հասկացություններ: «Հայրենիք» հասկացությունը հաճախ նույնացվում է «ծննդավայր», «ապրավայր», «կեցության հիմնական վայր», «հաղորդակցության երկիր» եւ այլ իմաստների հետ: Շփոթ կա նույնիսկ «հայրենադարձություն» հասկացության մեկնաբանման մեջ, որի պատճառը հենց «Հայոց հայրենիք» սահմանման ամենասարբեր մեկնաբանումներն են: Այսպես, պատմական գիտությունների դոկտոր Հակոբ Հակոբյանը գտնում է, որ հայրենադարձությունն ու Ներգաղթը տարբեր հասկացություններ են (այս խնդրին նա նվիրել է մի ամբողջ մենագրություն): Ըստ նրա, ծագումով արեւմտահայերի եւ կիլիկահայերի վերադարձը խորհրդային Հայաստան կամ Հայաստանի Հանրապետություն՝ հայրենադարձություն չէ, այլ՝ Ներգաղթ: Հայրենադարձություն կլիներ եթե նրանք վերադարձին այն վայրերը, որոնցից բռնագաղթի են ենթարկվել են նրանց նախնիները: Մի խոսով՝ հայոց մեկ, միասնական եւ անփոխարինելի հայրենիքի՝ հայկական լեռնաշխարհի գաղափարը փոխարինվում է նախնիների բնօրանքներով:

Սփյուռհայ եւ հայրենաբնակ որոշ գործիչներ տարբեր կերպ են հասկանում «Սփյուռքը»: Այսպես, Վարդան Մաթեոսյանի համար, Սփյուռքն սկսում է 1950-ական թվականներին միայն, իսկ Գեւորգ Բարդակչյանը «Սփյուռք» (Diaspora) հասկացությունը սիալ է համարում՝ առաջարկելով «Տրվում» (Dispersion) եզրը: Որոշ հեղինակներ էլ ավելի անդին են գնում, եզրակացնելով, թե հայությունն այսօր, փաստորեն, բաղկացած է երկու ազգերից...

Նմանօրինակ շփոթ է առաջացած «Հայ դաս» հասկացության տարբեր սահմանումների հետեւանքով: Մինչ շատ շատեր «Հայ դասը» հասկանում են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, որպես նաեւ՝ դրան իր հետեւանքի հատուցումները, ուրիշներ (ՀՅԴ, նախկին ՍՍՍԼՄ-ականներ եւ այլն) գտնում են, որ «Հայ դաս» հասկացության անբաժան մասն է կազմում հայրենադարձությունը, ավելի ճիշտ՝ ազգաիավաքը հայրենի հողի վրա:

Հայկական մտքի սխալներից մեկն է 20-րդ դարի հայրենադարձությունները սահմանափակել միայն ԽՍՀՄ-ից դուրս գտնվող երկրներից հայերի վերադարձով: Սա հետեւանք է «մեծ հայրենիք» (ԽՍՀՄ) եւ «փոքր հայրենիք» (խորհրդային Հայաստան) հասկացությունների ստեղծած շփոթին: Այս խոցը կրկ տալով, հայ պատմագիտությունը պատշաճական տեսանկյունից է դարձել այն, որ խորհրդային ժամանակաշրջանում ոչ միշտ է եղել հայրենադարձություն, այնինչ գտնում եմ, որ այդ երեւույթը շարունակվել է անխափան, թեեւ պարբերաբար եղել են հայրենադարձության մեծ ալիքներ՝ կապված ոչ խորհրդային երկրներից կատարված հայրենադարձությունների հետ:

Հայ պատմագիտության ուրիշ սխալներից է հայոց հայրենիքի մի մասից մի այլ մաս տեղափոխումը հայրենադարձություն համարելը: Այս սխալը հաճախ է հանդիպում 1828թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Պարսկահայից այսօրվա ՀՀ եւ ԼՂՀ տարածք տեղափոխված հայերի մասին պատմագիտական աշխատություններում:

Մեկ ուրիշ սխալ է հայադիտանման գործում Հայրենիք վերադարձի գաղափարի արհամարհումը կամ անտեսումը, նույնիսկ Հայրենիքի գործոնի վճռորոշ նշանակությունը այս խնդրում: Օրինակի համար, ՀՀ ԳԱԱ արեւելագիտական անդամ Հայր Լեւոն Զեքիյանի համաձայն, նույնիսկ վտանգավոր է հայերի մեկտեղումը «իդեալական մի կենտրոնում» (նա նկատի ունի այսօրվա Հայաստանի Հանրապետությունը), քանի որ բնական կամ տեխնոլոգիական աղետի պարագայում, ամբողջ ազգի վերացման վտանգ է սպառնում: Հայոց հայրենիքից դուրս հայ ազգի պահպանումը գերիվեր խնդիր են համարում նաեւ սփյուռքում հանրահայ գիտնականներ Խաչիկ Թեոդոսյանը, Խաչիկ Տեր-Ղուկասյանը, Վարդան Մաթեոսյանը, Գրիգոր Պըլտյանը, Ռազմիկ Փանոսյանը, Արա Սանճյանը եւ ուրիշներ:

Հետեւաբար, հայրենադարձության թեմայի ուսումնասիրությունը անհրաժեշտ է կատարել վերոհիշյալ եւ հարակից հասկացությունների ուսումնասիրության ու դրանց սահմանումների վերջնական հստակեցման հաճատեխում: Այլապես, աշխատանքը կլինի թերի եւ հրի հետագա բարդություններով: Մեր կարծիքով, այսպիսի շփոթն ու սոցիալ հոգեբանական ու մասնավորաբար էթնոհոգեբանական առանձնահատկություններն ոչ պատշաճ հաշվառումը մեծապես պայմանավորեցին 1946-1949 թթ. Մեծ հայրենադարձության ոչ այնքան բարենպաստ արդյունքը:

▼▼▼

Կարելի է ասել, որ 20-րդ դարում հայոց հայրենադարձության թեման հայ պատմագիտության մեջ ընդհանրապես չի ուսումնասիրվել: Որոշ վերապահությամբ՝ կարելի է բացառել Հովիկ Միքիթարյանի 1985-ին Երեւանում հրատարակված «Հայրենիք-սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը 1920-1980 թթ.» մենագրությունը: Վերջինս, հասկանալի պատճառներով, չէր կարող օբյեկտիվ լինել: Ներկայացված են հայրենադարձության երեւույթի դրական կողմերը միայն, այնինչ հաշվառված 1946-1949 թթ. հայրենադարձները այնպես էլ չկարողացան լիովին մեղմել նոր միջավայրին, որի դրսեւորումն եղավ «ախտար» հեգնական երգն ունեցող ենթաբնակիչ խմբի առաջացումը: Հայաստանցի ազգաբանագրի եւ ազգագրագետների վերջին հրապարակումներում բազմաթիվ անդրադարձներ կան այս խմբի էթնոհոգեբանական եւ սոցիալ հոգեբանական բարդությունների մասին: Այնուհանդերձ, չուսումնասիրված է մնում մի շատ կարեւոր կողմ եւս. այս ենթաբնակիչ խմբի ողբերգությունը խորացել էր նաեւ այն պատճառով, որ նրա անդամների մեծագույն մասը, նոր միջավայրում խորթ մնացած լինելու իրողության հարցում այդպես էլ չհասկացված մնաց հենց իրենց՝ արտասահմանում մնացած հարազատների ու բարեկամների համար: Հիշյալ շրջանակները մեծ մասամբ սլիքներով դիմավորեցին հետագայում արտագաղթած հայրենադարձներին, ինչը էլ ավելի օտարեց նրանց՝ հայկական միջավայրից, առագացնելով նրանց ձուլումը արեւմտյան երկրներում (հոգեբանական այս բարդագույն երեւույթների ուսումնասիրման հիանալի աղբյուր են 1966-1970 թթ. հայրենադարձ, այժմ Լիբանան արտագաղթած Սիմոն Հովհաննիսյանի «Սրբազ խոստովանություններ եւ զգաստության հրատեր արտասահմանի իմ եղբայրներուս եւ քոյրերուս» գիրքը, վերջին տարիներին Երեւանում լույս տեսած՝ 1946-ին հայրենադարձված գրող եւ թարգմանիչ Կարոլիս Սուրենյանի եւ 1962-ին հայրենադարձված ժողովրդական նկարիչ Հակոբ Հակոբյանի խոհագրություն-հուշագրությունները):

▼▼▼

Հետեղեռնյան ժամանակաշրջանում առաջին զանգվածային հայրենադարձությունը եղել է 1919 թվականին՝ Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին: Հայ պատմագրության մեջ ընդհանրապես անտեսված է այս փաստը, եւ համարառած է այն թյուր կարծիքը, թե հայրենադարձությունն սկսվել է խորհրդային իշխանության առաջին տարիներին:

Խորհրդային ժամանակաշրջանում առաջին զանգվածային հայրենադարձությունը եղել է 1921-ի դեկտեմբերին՝ Իրաքի Նահր Օմար գաղթակայանից՝ Բաքումիի վրայով: Մինչեւ 1931-ը, հայրենադարձությամբ զբաղվող պետական հատուկ մարմին գոյություն չուներ խ. Հայաստանում: Այդ գործի կազմակերպումը դրվել էր 1921-ին իշխանությունների ստեղծած Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) վրա, որը անվանապես հասարակական կառույց էր: Հայրենադարձությունները կարգավորվում էին կառավարական որոշումներով: Մինչեւ խորհրդային Միության փլուզումը, այդպես էլ օրենք չընդունվեց հայրենադարձության մասին, եւ այդ գործընթացները կարգավորվում էին Կենտրոնի՝ Մոսկվայի եւ Հայաստանի Կոմկուսի կենտրոնի եւ կառավարության համաձայնեցված որոշումներով: Այդուհանդերձ, հայրենադարձության կազմակերպման, հայրենադարձների բնակարանով եւ աշխատանքով ապահովման համար 1931-ի օգոստոսի 10-ին, կառավարական որոշմամբ հիմնվեց «Արտասահմանյան հայերի ընդունման եւ տեղավորման պետական կոմիտե», որն առավել ծանոթ է «Ներգաղթի կոմիտե» անունով (վերակազմակերպվեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1945-ի նոյեմբերի 21-ի որոշման 2-րդ կետով): Այս պետական մարմինն էր զբաղվում այդ կոնկրետ հարցերով: Սակայն, հայրենադարձության առնչված հարցերով զբաղվում էին նաեւ Պետական անվտանգության կոմիտեն, Հայաստանի Կոմկուսի կենտկոմը, «Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ մշակութային կապերի կոմիտե» (ԱՕԿՍ), 1964-ին հիմնված «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» (Սփյուռքի կոմիտե): Արտասահմանում, հայրենադարձության աշխատանքների հիմնական ֆինանսավորողն էր Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Հայրենադարձությանն օժանդակում էին առաջադիմական համարվող կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները՝ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունը, Ռամկավար ազատական կուսակցությունը, արտասահմանյան երկրների կոմկուսների հայկական հաստվածները եւ այլն:

▼▼▼

20-րդ դարի զանգվածային հայրենադարձությունները կարելի է հետեւյալ կերպ պարբերացնել.

1. - **1920-1930-ական թվականներ.-** Ինչպես նշեցինք, խորհրդային ժամանակաշրջանում հայրենադարձության առաջին կարավանը եղել է 1921-ի դեկտեմբերին, վերջինը՝ 1936-ին: Նույն տարվա հուլիսի 21-ին Մոսկվան, հանձնիս Համկ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ի. Ստալինի եւ ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Վ. Մոլոտովի, ընդունեց անանխադեմ մի որոշում՝ «Ներգաղթող հայերին Հայկական ԽՍՀ-ում տեղավորելու միջոցառումների մասին»: Սակայն, 1930-ական թթ. երկրորդ կեսին խորհրդային Միության մեջ ծավալված բռնությունների հետեւանքի պատճառով, արտասահմանյան երկրներից խ. Հայաստան հայրենադարձությունը կանգ առավ: Մյուս կողմից, խ. Հայաստանն էլ պատրաստ չէր մեծաքանակ հայրենադարձներ ընդունելու եւ նրանց համար տանելի կենսապայմաններ ապահովելու:

Այս տարիներին հայրենադարձվեց շուրջ 77 հազար հայ:

2. - **1946-1949 թթ. կամ Մեծ հայրենադարձությունը.-** Երկրորդ աշխարհամարտի ընթացքում եւ նրա ավարտին, խորհրդային Միությունը պահանջ դրեց վերադարձել 1920-ականների սկզբին հաստատված խորհրդային-թուրքական սահմանագիծը եւ որոշ հողեր վերադարձել խորհրդային Հայաստանին ու խորհրդային Վրաստանին: Այս նպատակի իրագործմանը ծառայելու էր Մեծ հայրենադարձությունը: Անշուշտ, կային նաեւ այլ նպատակներ, ինչպես որոշ չափով բարելավել պատերազմի պատճառով վատթարացած ժողովրդագրական վիճակը խ. Հայաստանում: Միջազգային նոր իրադրության, մասնավորապես Տրումենի դոկտրինի պատճառով թեեւ Ստալինը չկարողացավ իրականացնել սահմանների կանոնների սկսվեց հակառակ ուղղությամբ զանգվածային շարժումը՝ արտագաղթը, որը հատկապես ուժեղացավ խ. Միության 1975-ին ստորագրած Հելսինկիի հռչակագրի ընդունումից հետո: Արտագաղթի շարժումը վարակեց նաեւ տեղաբնակ (ոչ հայրենադարձ) տարրին՝ այդպիսով նոր շերտեր ավելացնելով դասական սփյուռքի առանց այն էլ խայտաբղետ սոցիալ հոգեբանական կազմում:

3.- **1960-ական թվականներ.-** Եթե նախորդ երկու փուլերում հայրենադարձությունը կատարվում էր նաեւ արեւմտյան երկրներից, այս երրորդ փուլն առանձնանում է իր արեւելյան ուղղվածությամբ: Հայրենադարձների հիմնական բոլորը այս տարիներին գալիս էին նրանից եւ արտաքին ռազմական ու քաղաքական ցնցումներ ապրող մերձավորարեւելյան երկրներից՝ Իրան, Սիրիա, Եգիպտոս, Իրաք, Թուրքիա եւ այլն: 1970-ականների երկրորդ կեսին փոքրաքանակ հայրենադարձություն եղավ Լիբանանից, որին մղում էր երկրում 1975-ի ապրիլին սկսած քաղաքացիական պատերազմը:

Եթե հաշվի չառնենք 1979-ին իսլամական հեղափոխությունից հետո Իրանից խ. Հայաստան հայրենադարձության անընդհատ ծավալը, կարելի է ասել, որ հայրենադարձությունն ընդհանրապես կանգ առավ 1980-ականներին, թեեւ «Ներգաղթի կոմիտեն» շարունակում էր անվանապես գոյություն ունենալ:

4.- **1988-1990 թթ.-** Մի՞թե զանգվածային իսկական հայրենադարձություն չէր 1988-1990 թթ. խորհրդային Արցախից հարյուր հազարավոր հայազգի անձանց հանգանումը խ. Հայաստանում, որը հասարակության եւ պետության կողմից որոշ այդպիսին չընկալվեց եւ դեռեւս շարունակում է չընկալվել:

Ցավոք, ազգի այս հասվածը բնորոշվեց իբրեւ «փախստական»՝ նրանց նկատմամբ խտրականության որոշ դրսեւորումներով, որոնց շարքում՝ նրանց նկատմամբ նույնիսկ «թուրք» վիրավորական պիտակավորումով: Լեզվական, ազգագրական եւ այլ զգալի տարբերությունների առկայության ու դրանց հաղթահարմանն ուղղված պետական լուրջ ծրագրերի չգոյության պատճառով, այս ենթաբնիկ խումբը եւս հիմնականում չհամարվեց ՀՀ հասարակությանը, եւ հնարավորության դեպքում, արագացրեց Ռուսաստան, ԱՄՆ ու այլ երկրներ:

5.- **Անկախության ժամանակաշրջան.**- Հայաստանի անկախության վերականգնումը վերացրեց խորհրդային ժամանակաշրջանում հայրենադարձներին ներկայացվող հիմնական պահանջը՝ հայրենադարձների հոժարումը Դաշնակցությունից կամ այդ կուսակցությանը համակրելուց: 1990-ականների սկզբին ՀՅԴ-ն արտասահմանում հոչակեց «Ոեռի Երկիր» կարգախոսը: Սակայն, կուսակցությունը չգբաղվեց հայրենադարձության կազմակերպմամբ: Հետեւաբար, Երկիր՝ Հայրենիք վերադարձողների քանակը չգերազանցեց մի քանի տասնյակ ընտանիքի ու լավագույն դեպքում, մեկ հարյուրյակ չամուսնացած երիտասարդները, որոնցից ոմանք մարտնչեցին արցախյան ազատամարտներում, եղան զոհեր:

90-ական թվականների երկրորդ կեսին ՀՀ կենսաթոշակառուների բարելավումը, ներքաղաքական որոշակի կայունությունը, արտասահմանյան մի շարք երկրներում պատերազմներն ու ներքին եւ արտաքին անհարմար պայմանները, համաշխարհայնացման հետեւանքով ձուլման ընթացքի արագացումը եւ այլ գործոններ նպաստեցին, որ 90-ականների կեսերից սփյուռքահայեր կայք հասատեցին ՀՀում եւ նույնիսկ ԼՂՀում: Հայրենադարձության այդ գործընթացը հատկապես թափ ստացավ վերջին տարիներին՝ իսլամական արտաքսականության ուժեղացման հետ:

Մեր գնահատականներով, վերջին տասնամյակում ՀՀ եւ ԼՂՀ հայրենադարձված, ժամանակավոր (տարին մի քանի ամիս) կամ մշտապես ապրող սփյուռքահայերի քանակը հասնում է 10 հազարի:

▼▼▼

Վերջին տասնամյակի հայրենադարձների փաստը, ինչպես նաեւ գաղթօջախներում հայրենադարձության գաղափարի օրեցօր ժողովրդականացումը ՀՀ պետական մարմինների առաջ խնդիր են դնում օրենսդրորեն կանոնակարգել ազգային հույժ կարեւորություն ունեցող հայրենադարձության երեւույթը: Մեր կարծիքով, դրան անպայման պետք է նախորդի հետազոտեն զանգվածային դարձող հայրենադարձության մերօրյա ալիքի համակողմանի, մասնավորապես սոցիալ հոգեբանական, էթնոհոգեբանական կտրվածքներով ուսումնասիրությունը՝ երեւան հանելու նման ալիքի հավանական բացասական հետեւանքները, դրանք կանխելու կամ դրանց ազդեցությունը նվազեցնելու ուղղված միջոցառումներ նախաձեռնելու նպատակով: ■

ԵՐԲ ՄՐՑՈՒՄ ԵՆ ՀԵՐՈՍԸ ԵՎ ԱՅԴ ՀԵՐՈՍԻ ՄԱՍԻՆ ԳՐՎԱԾ ԳԻՐՔԸ

ՎԱՀԵ ՔԱԲՈՒՅՅԱՆ

Հրապարակի վրա է Vahan Cardashian: Advocate Extraordinaire for the Armenian Cause գիրքը: Այն պատրաստվել ու հրատարակվել է ամերիկահայ հանրաճանաչ իրավաբան, New York Life եւ AXA ապահովագրական հսկա ընկերությունների դեմ՝ եղեռնից զոհվածների իրավահաջորդների դատերի նախաձեռնող, եւ այդ դատերը հաղթական ավարտին հասցնող Վարդգես Եղիայանի կողմից:

Նշված գիրքը իր տեսակի մեջ եզակի գործ չէ: Այն «Հայկական հիշատակության կենտրոն» հասատության կողմից հովանավորվող եւ իրականացվող՝ «Հայկական ցեղասպանությունը եւ Հայոց դատը» մատենաշարի հերթական հրատարակությունն է: Նշված մատենաշարի կողմից ընթերցողներին առեղծ ներկայացվել են «Սողոմոն Թեյլերյանի գործը», «Բրիտանական արտաքին գործերի նախարարության թղթապանակները թուրք պատերազմի հանցագործների վերաբերյալ», «Հայկական ցեղասպանությունը եւ երիտ-թուրքերի դատավարությունը», «Միսակ Թոռլաքյանի գործը», «Բրիտանական տեղեկագրերը 1919-1922 թվականներին Անատոլիայում իրականացված էթնիկ մաքրագործումների մասին» գրքերը:

Ներկայումս մատենաշարը հրատարակության է պատրաստում Genocide տերմինի հեղինակ, լեհ իրավաբան Ռաֆաել Լեմկինի՝ «Ցեղասպանակ հայկական ցեղասպանության մասին», ինչպես նաեւ՝ «Գերմանական բանկը եւ հայկական ցեղասպանությունը» ատենախոսությունները:

Այս շարքում առանձնահատուկ տեղ ունի «Վահան Քարաջյան. Հայ դատի արտակարգ դատապաշտպանը» գրախոսվող գիրքը: Բանը նրանումն է, որ եթե շատերին է հայտնի Սողոմոն Թեյլերյանի հերոսական գործը, ավելի էջերին հայտնի է հերոս Միսակ Թոռլաքյանի գործունեությունը, ապա նույնը չենք կարող ասել Վահան Քարաջյանի մասին: Քչերը գիտեն, որ նա անդրադարձել է մայիսյան մղեռ ամերիկյան երեք հրահանգորդ վարչակարգերի հետ, պատերազմելու համար հայկական շահերը. պայքարեց միայնակ, որպեսզի Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատը չվավերացնի Լոզանի դաշնագիրը, դաշնագիր, որը տանում էր չի դարձնելու հայ ժողովրդի պատմական ադար պահանջները: Ինչպես գրել է Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն, «Քարաջյանը այն մեկ մարդուց բաղկացած բանակն էր, որ Լոզանի անավար դաշնագիրը Ամերիկայում տարալելու համար արեց ավելին, քան որեւէ ամերիկացի, կամ ամերիկացիների որեւէ խումբ»: Նա ամերիկյան պետական մարմինների եւ բարձրաստիճան անձնավորությունների հետ իր անվախ դիվանագիտական գործունեության ջրի երես հանեց Լոզանի դաշնագրի նկատմամբ նրանց շահագրգռվածության բուն շարժառիթը: Հայտնի է, Լոզանի կոնֆերանսը տեղի ունեցավ 1922-ի նոյեմբերի 20-ից մինչեւ 1923-ի ապրիլի 23-ը. դաշնակից պետությունները այն ստորագրեցին 1923-ի հուլիսի 24-ին, իսկ ԱՄՆ-ը՝ 1923-ի օգոստոսի 6-ին: Այդ օրերից մինչեւ 1927-ի դեկտեմբերը, ԱՄՆ-ի պետական քարտուղարությունը կտրուկ հերքում էր Թուրքիայի հետ կայացած հաղթականության մեջ նավթի գործոնի որեւէ դերակատարություն ունենալը: Սակայն, ուժեղ ճնշումների, այդ թվում Քարաջյանի ջանքերով, իրականությունը պարզվեց: 1927 թվականի նոյեմբերի 5-ին New York Times-ը գրեց. «Որոշակի համաձայնություն է կայացված, ըստ որի ամերիկյան 5 առաջատար ընկերություններ պիտի ստանան Թուրքական նավթային ընկերության շահույթների 25 տոկոսը»: Պետական քարտուղարությունը 1927-ի դեկտեմբերին հարկադրված էր խոստովանել, որ միջնորդել էր որոշագի Մոսուլի նավթի շահույթի քառորդի չափով բաժին հանելի Standard Oil Company-ին:

Այս գիրքը ընթերցելուց հետո բուռն ցանկություն ունեցա գրախոսելու. թե ինչո՞ւ, կնշեմ նեղությամբ: Առայժմ խոստովանեմ, որ դրա հետ միաժամանակ, ես ինձ զգա երկդիմի վիճակում, որովհետեւ դժվարանում էի որոշել, թե ո՞րն է գրքի գլխավոր արժանիքը: Գիրքը գրված է Վահան Քարաջյանի մասին, իսկ Վահան Քարաջյանը ազգային հերոս է, ազգային հերոս՝ իր գործունեության, այսինքն՝ հաղթական եւ դիվանագիտական ասպարեզներում. ուստի, գրախոսականում պետք է, բնականաբար, շեշտավորեի Վահան Քարաջյանի հերոսական գործունեության լուսաբանումը: Բայց, մյուս կողմից, չէ՞ որ պետք է գրախոսեի գիրքը:

Համոզված եմ, որ գրքի ընթերցումը ավարտելուց հետո որեւէ անձ պիտի հաստատի ինձ հետ, որ ներկայիս աշխատության արժեքը ո՛չ միայն եւ, թերեւս, ո՛չ այնքան նրանում Վահան Քարաջյանի հերոսական կերպարի վերլուծությունն ու մեծարումն է, ինչքան այն գործնական, այժմեական նշանակությունը, որն ունի գիրքը իր ամբողջությամբ: Ըստ էության, գիրքը Լոզանի դաշնագրին առնչվող փաստաթղթերի, փաստերի, ամենաարժեր աղբյուրներից հաղված տեղեկությունների ու տվյալների, հրատարակությունների եւ թղթակցությունների, նամակագրությունների, ժամանակի բարձրաստիճան պետական գործիչների ելույթներից կատարված հարվածների, աղբյուրագիտական հարուստ նյութերի, Հայոց շահերի պաշտպանության, կոտ տրամաբանությամբ կազմված, Քարաջյանի օրինակելի, գրավոր եւ բերանացի ելույթների մի ժարժեք, chrestomathic գանձարան է: Այն մի յուրահատուկ եւ օգտակար ուղեցույց է հայ դիվանագետների, պատգամավորների, հաղորդավարների, Հայոց նորագույն պատմությամբ զբաղվողների համար:

Ահա թե ինչու գիրքն ընթերցելուց հետո ինձ մոտ բուռն ցանկություն առաջացավ գրախոսելու: Vahan Cardashian: Advocate Extraordinaire for the Armenian Cause գիրքը (350 էջ) բաղկացած է 2 հատվածից. առաջին հատվածը ընդգրկում է նեռաբականներ եւ 8 գլուխներ, իսկ երկրորդ հատվածը կազմված է ծանոթագրություններից:

Առաջաբանում Պրն. Վարդգես Եղիայանը մանրամասնորեն բացատրում է «Հայկական ցեղասպանությունը եւ Հայոց դատը» մատենաշարի ստեղծման անհրաժեշտությունն ու նշանակությունը, իսկ նեռաբականում նա հիմնավորում է որ «ժամանակին Հայկական հարցը անտրամ-աղոտ վիճակում էր. այն զարգացնելու եւ կոնկրետ Հայկական խնդրի, կամ Հայկական դատի վերածելու գործում Քարաջյանի խաղացած դերը չի կարող վիճարկվել»: Սա Վահան Քարաջյանի գործունեության լավագույն գնահատականն է:

Առաջին եւ երկրորդ գլուխներում տրված են հաճառոտ տեղեկություններ Վահան Քարաջյանի կենսագրության մասին՝ Ջոն Մարշիկի եւ Տեյմս Թաչյանի հեղինակությամբ:

Երրորդ գլխում, որը վերնագրված է «Քարաջյանը եւ Հայ դատը. Անավարտ ոդիսականը», Պրն. Վարդգես Եղիայանը ժամանակագրականորեն եւ մանրամասնորեն վերլուծում է Վահան Քարաջյանի հասարակական, հաղորդական եւ իրավական ազգանվեր գործունեությունը:

Չորրորդ եւ հինգերորդ գլուխները ընդգրկում են երկու ազդեցիկ հուշագրեր, որոնք գրել էր ինքը՝ Վահան Քարաջյանը, իր իսկ հիմնադրած՝ Ամերիկյան կոմիտե Հայաստանի անկախության համար (ACIA) կազմակերպության անունից: Հուշագրերից մեկը՝ «1921 թվականի Հուշագիր Հայաստանի մասին» հասցեագրված էր ԱՄՆ-ի Նախագահին, իսկ երկրորդը՝ դիմումնագիր է ուղղված ԱՄՆ-ի Սենատին՝ «Լոզանի դաշնագրի, Մոսուլի նավթի եւ Հայաստանի հարցերով լուսաբանություններ կազմակերպելու մասին»:

Միաժամանակ, Վահան Քարաջյանը կազմեց, խմբագրեց եւ հրատարակեց մի գրքույկ՝ «Լոզանի դաշնագիրը, Թուրքիան եւ Հայաստանը» վերնագրով, որն զբաղեցնում է գրքի 6-րդ գլուխը: Նրանում ընդգրկված են Հենրի Մորգենթաուի, Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Տեյմս Տերարդի, պատվելի Մաննինգի, եւ հենց իրեն՝ Վահան Քարաջյանի հեղինակած ակնարկները:

Յոթերորդ գլխում տեղավորված է «Ուժ եւ դիվանագիտություն» հոդվածը, որը Քարաջյանը գրել էր Լոզանի դաշնագրի ընդունման ճակատագրական օրերին: Վերջին, 8-րդ գլուխը կազմում է Քարաջյանի գրած հուշագիրը հասցեագրված ԱՄՆ-ի պետքարտուղարին՝ «Հայաստանի միջազգային իրավունքների վերաբերյալ կատարված մի հայտարարության մասին»:

Այս ծավալուն գործունեությունը նկատի ունենալով է, որ Տեյմս Թաչյանը առարարեն նշում է՝ «Վահան Քարաջյանը Հայ դատի տիտանն էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում»:

Վահան Քարաջյանի մեծությունը իր ամբողջ հատակով հասնում է, երբ ծանոթանում ես նրա կենսագրությանը: Նա ծնվել է 1883-ին Կեսարիայում, համեստ ընտանիքում: Հորից զրկվել է վաղ հասակում: Սացել է իր հայկական նախնական կրթությունը, ապա ուսումը շարունակել է տեղի ամերիկյան եւ հետո ֆրանսիական դպրոցներում: 1902-ին մեկնում է ԱՄՆ եւ հաստատվում Նյու Յորքում: 1908ին ավարտում է Յելի համալսարանը իրավաբանի մասնագիտությամբ: Արդեն ուսանողական տարիներին, հագուրդ տալով իր հակումներին, նա հրատարակում է «Օսմանյան կայսրությունը 20-րդ դարում» գիրքը եւ «Արեւելյան հարցի համառոտ մեկնաբանություն» գրքույկը: Այդ տարիներին նա թղթակցում էր ազդեցիկ շատ ամերիկացիների հետ, ինչպես նաեւ՝ «The New York Times» թերթին:

Գնահատելով Քարաջյանի գիտելիքները եւ լեզուների իմացությունը (նա տիրապետում էր հայերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ թուրքերեն լեզուներին) թուրքական կառավարությունը նրան աշխատանքի է ընդունում որպես ԱՄՆ-ում իր դեսպանության իրավախորհրդատու եւ, միաժամանակ, որպես ԱՄՆ-ում Թուրքիայի Առեւտրական ներկայացուցչության դեկավար:

1914-1915 թվականներից սկսվեց Վահան Քարաջյանի բուռն գործունեությունը: Հաղորդակից դառնալով թուրական նողկալի վայրագություններին, նա ներկայանում է Ուաշինգտոնում Թուրքիայի դեսպանին, թուրքերին պարսավում որպես վայրագներ, դեսպանի երեսին շպրտում իրեն շնորհված բոլոր պատվանշանները: Այդ պահից սկսած նա նոր մարդ դարձավ, իսկական հայ, եւ ամբողջովին նվիրվեց Հայ դատին: 1915-1917 թվականներին Քարաջյանը Հայ դատի համար միայնակ մարտնչող էր: Նա ելույթներ էր ունենում ամերիկյան լսարանի առջեւ, գիտական եւ կրոնական շրջանակներում, տպված նյութեր էր պատրաստում նրանց համար: Նա սանձեցնց Բոստոնում հիմնադրված Հայկական մասնուի գրասենյակի պատասխանատվությունը, դարձավ Բոստոնում կազմակերպված Հայկական ազգային միության (ANU) պատասխանատու քարտուղարը, աշխատելով առանց վարձատրության: Նա ամեն շաբաթ, կանոնավոր ձեւով մեկնում էր Ուաշինգտոն եւ այնտեղ հանդիպումներ ունենում կառավարական պատասխանատուների հետ:

Հայկական շահերը հետապնդող պայքարում ամերիկացիներին եւս ներգրավելու համար նա կազմակերպեց Ամերիկյան կոմիտեն Հայաստանի անկախության համար (ACIA): Այդ նպատակով նա հենվեց Տեյմս Տերարդի (որի հետ ծանոթացել էր փաստաբանական գործունեության տարիներին) աջակցությանն, ինչպես նաեւ այլ հանրաճանաչ ամերիկացիների բարի կամքի վրա:

Նույն նպատակով նա կազմակերպեց Լոզանի դաշնագրին դիմադրող ամերիկյան հանձնաժողովը (ACOLT), որի գործունեության խիզախ առաջնորդն էր հենց ինքը: Նրա վերջին ջանքը 1933 թվականի սեպտեմբերին ԱՄՆ-ի պետական քարտուղարին հասցեագրված հուշագիրն էր բաղկացած 39 էջից, որտեղ նա, որպես Ֆրանսիայում գործող Հայկական հանրապետության ներկայացուցչության խոսնակ, վերլուծել էր Հայկական խնդրի ամբողջ պատմությունը՝ սկսած Առաջին համաշխարհային պատերազմից մինչեւ 1933 թվականը, պահանջելով, որ ԱՄՆ-ը ճանաչի Հայաստանի հանրապետությունը:

Եռանդագին ու լավագույն գործունեությունը մատել էին Վահան Քարաջյանի առողջությունը: 1934-ին արդեն երրորդ տագնաքը նրան գամեց անկողնին՝ զուրկ կենսական ամենաարարական պայմաններից: Կարճ ժամանակ անց նա վախճանվեց շրջապատված մի քանի ընկերներով:

Գրախոսականը ավարտելու պահին վերացավ իմ երկդիմի զգացումը: Վերացավ, որովհետեւ պարզեցի, որ մրցունը հերոսի եւ այդ հերոսի մասին գրված գրքի միջեւ՝ արժեքների գերակայության ենթարկման շրջանակների մեջ չի տեղավորվում: Վահան Քարաջյանը, ինչպես Տեյմս Թաչյանն է գրում՝ «անկասկած, ամերիկահայ հանդիսանում երբեւիցե գործած ականավոր մարդկանցից ամենաազդեցիկ անձնավորությունն է»: Նա, անտարակույս, ազգային մեծ հերոս է: Եվ Վահան Քարաջյանի կատարած վիթխարի աշխատանքը պատմությանն է փոխանցվում նրա գործունեությունը գիտակցորեն վերլուծող, հանրագիտական բնույթի այս գրքի միջոցով: Սա՝ հրատարակիչների հերոսությունն է:

Այսպիսով, մենք ունենք՝ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՄՐԱԳԱՐԴ

Մարս, 2008, Գլենդել, ԱՄՆ.

ԱՐԴՅՈՒՆԱՐԱԾ

Հայ ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի, իրադարձությունների հրաշալի եւ սրացավ արձագանգն է ներկայացված լրագրող եւ խմբագիր Հասմիկ Գուլակյանի «Դարը մեր մեջ, մենք՝ դարի» քառահատոր ժողովածուներում, որոնք լույս են տեսել երեւանում, 2006-2007 թթ. ընթացքում:

Հատորներն ընդգրկում են Ազգային ռադիոյի երբեմնի «Դարավերջի խորհուրդ» եւ «Վեմ» ռադիոկայանի (FM 101.6) մինչեւ օրս հեռարձակվող «Ամիսներ» եւ «Վեմ» ռադիոկայանի «Ակունք» հաղորդաշարերում լրագրող-հեղինակի վարած հարցազրույցների նյութերը, ինչպես նաեւ ժամուղում լույս տեսած եւ անտիպ նոր մի շարք հրապարակումները:

Հասմիկ Գուլակյանն իր բանասեր-լրագրողի մասնագիտական կրթությունը ստացել է ինչպես երեւանի պետական համալսարանի բանասիրական (1976-1979 թթ.), նույնպես եւ Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի (1979-1982 թթ.) ֆակուլտետներում: Ավարտելով 1983 թվականից ապատանի է անցել Հանրային ռադիոհեռակոմի արտասահմանի հայության համար հեռարձակվող հաղորդումների խմբագրությունում:

2002 թ. մինչեւ օրս Հ. Գուլակյանը վարում է «Վեմ» ռադիոկայանի «Ակունք» հաղորդաշարը:

Հատորներում արտացոլված են հարյուրամյակի ընթացքում հայությանը մշտապես հուզող հրատապ հարցերը՝ հայոց հարց ու հայոց դաս, ազգային իմքնություն ու ազգային անվտանգություն, հոգեւոր ու եկեղեցական, դաստիարակչական ու կրթական, պատմա-լեզվա-մշակութային ու գիտական արժեքների պահպանում եւ այլն, որոնք ժամանակագրորեն ու թեմատիկ առումով խմբավորված եւ տրամաբանական հոլովի մեջ ներկայացված են յուրաքանչյուր հատորում հետելալ բաժիններով՝ «Կորված արժեքներ», «Հայ պատմաբախտահագրություն», «Մեծ եղեռնի 90-ամյա տարելիցը», «Գարեգին Նժդեհի վերադարձը», «Հայրեր եւ որդիներ», «Մենք», «Հայ ազատագրական պայքարը» եւ այլն:

Հ. Գուլակյանի հատորներում ամփոփված հաղորդում-հարցազրույցներում հնչում է հայաստանից եւ Սփյուռքից մեր ազգայիններ՝ հոգեւոր հայրերի, հայագետ պատմաբանի, ժողովրդագետի, բանասերի, ազգագրագետի, վիմագրի, լեզվաբանի, գրականագետի, փիլիսոփայի, մշակույթի գործչի, արվեստագետ-դերասանի, կինոգործչի, երաժիշտ-երգահանի, երգչի, նկարչի, դրամագետի, բնապահպանի, սոցիոլոգի, իրավաբանի, քաղաքագետի, խմբագրի, ռազմագետի, զինվորականի, ճարտարապետի, բժիշկի, ֆիզիկոս-գյուտարարի, տիեզերագետի եւ այլոց մասնագիտական ու փաստակոծված խոսքը: Այնտեղ արծարծված են ինչպես անկախության ժամանակաշրջանում մեր ձեռքբերումները, այնպես էլ՝ հասարակության եւ ազգի առջեւ ծառացած հրատապ խնդիրները, մտահոգությունները, թերիները, արատները, ձեւավորված տուկայական հարաբերությունների եւ համընդհանուր գլոբալիզացիայի պայմաններում հոգեւոր-բարոյական, ազգային-մշակութային կյանքում օրեցօր նկատվող նահանջը, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ցգիտության ու ապազգայինի «հաղթարշավը»: Հարցեր, որոնք տասնամյակներ անց անգամ շարունակում են հուզել մարդկանց եւ նրանք արդարության, պատասխանության ակնկալիքով եթերով շարունակ բարձրաձայնում են, բողոքում, ընդվզում, սակայն նրանց խոսքը մեծամասամբ մնացել եւ տակավին շարունակում է մնալ որպես անտարբերության մեջ պարտված «ձայն բարբառոյ յանապատի»: Այնինչ, ինչպես երեւում է հրատարակված նյութերից, մտավորականներից յուրաքանչյուրն առանձին-առանձին եւ հավաքականորեն, որպես ստեղծագործող միտք եւ հասարակության խիղճ, թեեւ շատ հաճախ՝ անտեսված ու ըստ արժանվույն չգնահատված, խոցված ու վիրավորված, այնուամենայնիվ շարունակել ու շարունակում է արարել եւ իր ապրված կյանքի փորձառությունն ու իմաստությունը փոխանցել մեզ:

Հատորներում ընդգրկված են նաեւ մեզանից անդարձ հեռացած արժեքավոր հայորդիների մասին ժամանակակիցների եւ հաջորդ սերունդների կարծիքներն ու գնահատականները:

Այնպես որ, Հասմիկ Գուլակյանը կաթիլ առ կաթիլ, հաղորդում առ հաղորդում, հատոր առ հատոր վերարծարծում, վերաիմաստավորում է հանրագումարի է բերում մեր անցյալն ու ներկան՝ այն հանձնելով սերունդներին:

▼▼▼

Ստորեւ ներկայացնում ենք, Հ. Գուլակյանի «Դարը մեր մեջ, մենք՝ դարի» ժողովածուներում տպագրված հայազգի որոշ մտավորականների ժամանակին արտահայտած մտորում-ասույթներից հատվածներ, որոնք առավել քան այժմեական են նաեւ այսօր.

ՄՏՔՎՈՐԿԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎՔԱԿԱՆ ՁԱՅՆՆ ԻՐ ԱԶԳԻՆ

Հասմիկ Գուլակյանի քառահատորյակի առիթով

ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆ

«Մեր կրպետության պետականությունը հաստատ է մեր պետականության կոլտուրային: ...Չկա հաղթականություն՝ առանց հաղթակրթության եւ չկա հաղթակրթություն՝ առանց մշակույթի: Նախապատվության ասպարեզն անոյշման պետք է տալ մեր հոգեւոր եւ մտավոր ունակություններին: Սրանք պետք է լինեն մեր գոյության բարձրակետում, ինչպես, ասենք, գլուխը պետք է լինի ուսերի վրա եւ ոչ թե ոտքերի տակ: ...Չկա ժողովրդավարություն՝ առանց հաղթակրթության: ...Մինչեւ առաջնահերթությունը չդարձնեն մշակույթն ու մեր հոգեւոր առողջացման առաջընթացը, սնեսատես չենք բարգավաճի: Հակառակը երբեմ տերի չի ունենա: ...Առհասարակ, ամեն մի արվեստագետ, մտավորական, անհատ պարտավոր է ունենալ դիրքորոշում, հայեցակարգ, կեցվածք եւ պետք է ապրի ժողովրդի շահերով: ...Երբ երկրում գերիշխում է գավառամտությունը, անկախությունը վերածվում է իր հակառակներին: Ցավոքաբերները շրջվում են գլխիվայր: Սանձազերծվում է անօրինությունը: Կեղեքվում է ժողովուրդը: Հարստանում են հափշտակիչները: Սարսիկ լիում են իրենց հայրենիքը, ուր պատասխանատու չեն հոգեպես, բարոյապես, ֆիզիկապես: Պետականորեն ձեւավորվում է նոր հայի կերպարը՝ կիսագրագետ, կիսագրագիտական, բութ, մեծամիտ, կաշառակեր, մեծավորի հանդեպ՝ սարկահաճ, փոքրավորի հանդեպ՝ անգութ ու դաժան: Անարդարությունից դառնացած հանրությունը դառնում է ոճրագործության հանդեպ անտարբեր, վախկոտ, պատեհապաշտ ու անկամ: Հասարակությունը հափշտակվում է, հուսահատվում, պարտվում հնին եւ նորի մեջ: Ցանկանում, որպեսզի ամենաշատ ինքն իր

ՄԵՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵՀԱԿԱՆ ԷՋԵՐԸ

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանում Պենդերեցկու օրերին (7-12-ը ապրիլի, 2008) վերջին կենդանանում են հայ-լեհական եւ անձամբ իմ երաժշտական ջիւմբերի էջերը: Կուզենայի անդրադառնալ մեր ժամանակի կարկառուն կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու հետ կապված հանդիպումներին:

Քշիշտոֆ Պենդէրէցկին (աջից) երաժշտագէտ Քշիշտոֆ Դորբայի հետ:

20-րդ դարի հայ-լեհական երաժշտական ոլորտի տարվորիչ էջերից մեկը դարձավ Լեհական երաժշտության տասնօրյակը Հայաստանում (6-14-ը դեկտեմբերի, 1968): Երեւանում, Կիրովականում (Վանաձոր), Իջեւանում անցկացվեցին սիմֆոնիկ եւ ակմերային երաժշտության յոթ համերգ, հանդիպումներ Հայաստանի կոմպոզիտորների միությունում եւ «Դիլիջան» ստեղծագործական տանը: Լեհաստանի մշակույթի նախարարության երաժշտական վարչության տնօրեն տիկին Իրինա Շուբերտովայի (հայկական մշակույթի վաղեմի երկրպագուի) գլխավորությամբ առաջատար լեհ կոմպոզիտորների եւ կատարողների մի մեծ խմբի (25 մարդ)՝ այդ ժամանակվա խորհրդային երաժշտության եւ ամբողջ մշակույթի համար աննախադեպ այցելությունը վերածվեց ժամանակակից երաժշտության անմոռանալի տոնի:

Պատվիրակության կազմում կային բոլոր սերունդների կոմպոզիտորներ. Եժի Մլոձեկի (ի դեմ, Ե. Չարենցի եւ Գ. Էմինի խոսքերով գրված «Ararat»- վոկալ-նվագախմբային բալլադի հեղինակն է), Անջեյ Դորբրովոլսկի, Գրաժինա Բացեւիչ, Ֆլորիան Դոմբրովսկի, Յան Ասարեաբ, Տադեուշ Բեռդ, Վոյցեխ Կիլար (որի երաժշտությունը զարդարում է Ռ. Պոլանսկու եւ Ք. Ջանուսիի ֆիլմերը), Ֆրանցիշեկ Վոզնյակ, Կրիստինա Մոտոմանսկա-Նագար (կրում է ծագումով հայ ամուսնու ազգանունը), Հենրիկ Շիլեր (հայտնի է նաեւ որպես առաջատար երաժշտագետ), Զբիգնեւ Ռուձինսկի եւ ուրիշներ: Կատարողների մեջ էին դիրիժորներ Եժի Վիսկովսկին, Անջեյ Մարկովսկին եւ Զդիսլավ Շուսակը, երգչուհի Անն Մալեւիչ-Մադեյը, ֆլեյտահարուհի Բարբարա Ավրոնսեկը, թմբկահար Եժի Զգոձինսկին, ինչպես նաեւ Լեհաստանի կոմպոզիտորների միության տնօրեն Ալինա Սավիցկան:

Տասնօրյակի ժամանակ կատարված երկերի ենթադրվող բոլոր հերոսները չէ, որ կարողացան գալ Հայաստան: Չեկավ նաեւ Քշիշտոֆ Պենդերեցկին, որի 35 տարին լրացավ այդ թվականին: Կոակովում 1958-ին Ա. Մայլավսկու եւ Ս. Վեխովիչի մոտ բարձրագույն երաժշտական դպրոցը (ավելի ուշ՝ երաժշտական ակադեմիա) ավարտելուց հետո կոմպոզիտորն անմիջապես մտավ Լեհաստանի, ուստով նաեւ ափարարի ամենաառաջադեմ կոմպոզիտորների կոհորտայի մեջ:

Լեհական երաժշտության տասնօրյակի ժամանակ Հայաստանի ռադիոյի ու հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը Զ. Շուսլեակի ղեկավարությամբ ԽՍՀՄ-ում առաջին անգամ կատարեց Պենդերեցկու Նվագախմբի եւ երկու մագնիտաժապվենի կանոնը (1962): Այդ ստեղծագործության վրա կատարված ազխատանքի, դրա կատարողական հաջողության մասին մինչեւ օրս հիշում է հայտնի տոմբոնահար, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի երաժիշտ Օմար Պապիկյանը... Ես այն ժամանակ երեւանի կոնսերվատորիայի ուսանողուհի էի, արդեն հասցրել էի լինել «Վարավյան աուն» փառատոնում (հետագայում ճանիցս ներկա եմ եղել այդ ավանգարդային համաժողովին), բայց հենց Լեհական երաժշտության տասնօրյակը մեկնարկ դարձավ համագործակցության եւ ժամանակակից լեհական մշակույթի ուսումնասիրության համար:

1974-ին «Վարավյան աուն» հերթական փառատոնում, Վարավյան Ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում համերգի ընդմիջման պահին ես բախտ ունեցա ներկայացվելու Քշիշտոֆ Պենդերեցկուն: Նա ինձ անմիջապես հայտնեց, որ իր «հոր մայրը հայուհի է», եւ որ ինքը «նման չէ հայի»: Տեսնելով ինձ հեռու կանգնած երգչուհի Քեթի Բերբերյանին, նա ասաց. «Իսկ նա իսկական հայուհի է», եւ ինձ տարավ ծանոթացնելու: Այդ բախտաորոշ հանդիպումից հետո ես ափվել եմ Բերբերյանի հետ, նամակագրություն ունեցել այդ մեծ արտիստուհու հետ մինչեւ 1983 թ. նրա հանկարծամահ լինելը:

Ներկայումս իմ ուխտվում նրա նամակներն են, որոնցում այնքան մեծ է համերգներով երեւան գալու նրա ցանկությունը (նրա մահացումը չի հրականացավ այն տարիների բյուրոկրատական խոչընդոտների պատճառով), ինչպես նաեւ հենց Բերբերյանի հոդվածները, որոնք իմ նախաբանով եւ լեհերենից թարգմանված լույս տեսան «Գարուն» ամսագրում:

Այն ժամանակ Վարավայում լինելով Աննա եւ Բոհուսլավ Մեդեյնների ընտանիքի հրավերով (վերջինս այն տարիներին Լոձի մեծ թատրոնի գլխավոր դիրիժորն էր), ես պայմանավորվեցի եւ նախաձեռնեցի Լենինգրադի փոքր օպերային թատրոնի (այժմ Միխայլովսկի թատրոն) բեմի վրա փայլուն կարիերա սկսած Բորիս Էյֆմանի բեմադրած Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետային ներկայացման տեղափոխումը Լոձ:

Մեդեյի ղեկավարությամբ պրեմիերան տեղի ունեցավ 1975-ի նոյեմբերին: Ցավոք, չհաջողվեց դրան ներկա գտնվել (նույն բյուրոկրատների մեղքով), բայց պրեմիերայից հետո իմ ստացած լեհական նյութերը, ինչպես նաեւ լենինգրադյան ներկայացման նյութերը հանձնեցի Արամ Խաչատրյանի տուն-թանգարանին: Իսկ հետագայում Վարավայի Ֆ. Շոպենի անվան երաժշտական ակադեմիայի ռեկտոր դարձած Բոհուսլավ Մադեյի հետ ես տարիներ անց իրականացրի երիտասարդ լեհ կոմպոզիտորների, այդ թվում Լեհաստանի կոմպոզիտորների միության ներկայիս նախագահ եմի կոռնուվիչի եւ «Վարավյան աուն» փառատոնի ներկայիս գեղարվեստական տնօրեն Տադեուշ Վիլիցկու այցելությունը հաժերգ (Հայաստանի կոմպոզիտորների տանը):

1980-ին ապրիլին Երեւանում անմոռանալի էին Վարավայի սիմֆոնիկ նվագախմբի հյուրախաղերը ի թիվս այս գործերի կատարեց 20-րդ դարի լեհական երաժշտության դասական Կարոլ Շիմանովսկու 3-րդ սիմֆոնիան: Նույն թվականին Վարավայի «Ռուխ մուզիչնի» («Երաժշտական շարժում») երաժշտական հանդեսի 15-րդ եւ 16-րդ համարներում հրապարակվեցին «Մեր ժամանակի հայ երաժշտությունը» վերնագրով իմ երկու հոդվածները: Տարիներ անց խմբագրության խնդրանքով նույն տեղում հրապարակեցի «Հայաստանի երիտասարդ կոմպոզիտորները» հոդվածը: Բայց դա 1987-ին էր:

1980-ի սեպտեմբերի սկզբներին Վարավայի երաժշտական ակադեմիայի հրավերով ես Բարանովում (զանազան մշակութային միջոցառումների անցկացմանը հարմարեցված 17-րդ դարի ազնվականական կալվածք) մասնակցեցի «Երաժշտություն եւ թատրոն» գիտաժողով-փառատոնին: Լեհերենով իմ կարդացած զեկուցման թեման էր «Ոճական համադրությունները Հայաստանի արդի երաժշտական թատրոնում»: Հենց այստեղ կայացավ իմ նոր հանդիպումը Քշիշտոֆ Պենդերեցկու հետ (այդ մասին կպատմեմ ստորեւ), ինչպես նաեւ ծանոթությունս խոշորագույն երգչուհի Ստեֆանիա Վոյտովիչի հետ, որը Սբ. Յակովի եկեղեցում սոպրանոյի դերասիան կատարեց Պենդերեցկու «Te Deum» ծավալուն օրատորիալ երկում:

1981-ին նշանակալի եղավ Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ իմ կազմակերպած՝ «TIS-MW2» երաժշտաթատերական ավանգարդային խմբի (ղեկավար՝ դաշնակահար Արամ Կալինսկի) այցելությունը երեւան: Հայ երաժիշտներին անծանոթ «գործիքային թատրոն» ժանրի փորձարարական համերգը (այստեղից էլ խմբի «Գործիքային թատրոն» անվանումը) մեծ արձագանք առաջացրեց հայ կոմպոզիտորների միջավայրում:

Վերջապես 1989-ին կայացան «Հայկական երաժշտության օրեր Լեհաստանում»: Երեւանի կոնսերվատորիայի ռեկտոր Ղազարոս Սարյանի գլխավորած պատվիրակության մեջ մտան կոմպոզիտորներ Եվանդ Երկանյանը, Հայկ Մանվելյանը, Երեւանի լարային քառյակը, երգչուհի Էլվիրա Ուզունյանը, դաշնակահարուհի Մարգարիտ Մելիք-Ստեփանյանը, իսկ ես վարում էի համերգները եւ հանդիպումները: Այցելությունը տեղի ունեցավ տարեսկզբին, եւ ամենուրեք, նույնիսկ եկեղեցիներում մեծ ներում էին Հայաստանի երկրաշարժի զոհերի օգնության արկդիկներ: Դա անհնար է մոռանալ...

Հայկական երաժշտությունն առաջացրեց մեծ հետաքրքրություն, հատկապես՝ մեր կոմպոզիտորների լարային կվարտետները եւ վոկալ երկերը: Ըստ էության, «Վարավյան աուն» ժամանակ եւս, թեեւ սակավադեմ, հնչում էին ժամանակակից հայ կոմպոզիտորների երկեր: Նույն 1989-ի մարտին կայացավ լեհ երաժիշտների պատասխան այցը Հայաստան. Երեւանի Կամերային երաժշտության տանը հաջողությամբ անցավ լեհական երաժշտության համերգը Ռաֆայել Սուգուրսինի անմոռանալի վոկալ զարով: Իսկ նա ինքը, Հայաստանի կոմպոզիտորների միությունում ունկնդրելով բազմաթիվ հայկական երաժշտություն, «Ռուխ մուզիչնիում» հրապարակեց հոդված «Հայկական հայդ-պարկ» վերնագրով:

Ցավոք, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո երաժշտական կապերը զգալիորեն թուլացան: Ուսի Մեծ Սարգսյանի հովանավորությամբ Հայաստանում անցկացվող «Պենդերեցկու օրերը» պատմական են. Պենդերեցկու երաժշտության գեղարվեստական բարձր արժեքից բացի, դա նաեւ իսկական մշակութային նշանակության փաստ է: Խորին հարգանք բոլոր կազմակերպիչներին եւ հովանավորներին, նախ եւ առաջ Հայաստանի մշակույթի նախարարությանը եւ «21-րդի հեռանկարներ» երաժշտական փառատոնի ղեկավարությանը, Պենդերեցկու օգնական Կասյա Ռիդլին:

Այժմ՝ Բարանովում Պենդերեցկու հետ 1980-ին ունեցածս հանդիպման մասին: Ես Լեհաստան էի եկել կազմակատարաս. պան Քշիշտոֆին բերել էի մեր դաշտերը եւ հայ նշանավոր կատարող Վայե Հովսեփյանի ձայնագրությունները, հուսալով Պենդերեցկու հոգում «արթնացնել» ազգային ազդակներ: Մասնորեն այն ժամանակ բարեկամություն էր անում հայերի երաժշտագետ, Կրակովի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Քշիշտոֆ Դորբայի հետ: Նրանից իմանալով, որ Պենդերեցկին մտադիր է տարբեր կոմպոզիտորների նոր երկեր պատվիրել Լուսավորչի (այստեղ է Լեհաստանում Պենդերեցկու բնակության հիմնական վայրը) փառատոնի համար, ես ասացի. «Իսկ ինչո՞ւ ոչ հայ կոմպոզիտորի»: Մենք մոտեցանք Պենդերեցկուն, որն առագորեն համաձայնեց, եւ ես անմիջապես նեցի Տիգրան Մանսուրյանի անունը, քանի որ փառատոնն անցկացվում էր «Ռոմանտիկ երգ» թեմայով:

Եվ Մանսուրյանը փառատոնի համար գրեց «Due Fanciulle» («Երկու աղջիկ») երգը՝ մադրիգալ ձայնի, դաշնամուրի, ֆլեյտայի եւ թավջութակի համար (ըստ Կոսսան Զարյանի իսալերեն տեքստի): Պրեմիերան կայացավ 1983-ի սեպտեմբերի 12-ին: Մանսուրյանի Մադրիգալը հնչեց ութ կոմպոզիտորների, այդ թվում Պենդերեցկու, գործերի հետ: Կատարողներն էին Օլգա Շվայգերը, Բարբարա Ավրոնսեկը, Իվան Մոնիգետտին, Հալինա Կոխանը: Հայտնի երաժշտական ճնշադաս Արամ Վալացինսկին «Պոլսկի դնեւնիկում» 1983-ի սեպտեմբերի 16-ին գրեց. «Հղկված, զուտ ճարերգությունը ծգվում է նուրբ թելի պես, որոշ տարբարիկ գունավորմամբ»:

Տիգրան Մանսուրյանին, ինչպես որ ինձ անձամբ հավատել էին էջբեսա եւ Քշիշտոֆ Պենդերեցկի ամուսինները: Բայց այցելությունը, բնականաբար, անհնար էր հաղթական պատճառներով. լեհական «Համերաշխություն» շարժումը սարսափեցնում էր ԽՍՀՄ-ի պարոններին: Բայց գլխավորը դա չէ: Ծնունդ առավ հայ կոմպոզիտորի հրաշալի երկը, որը գրվեց ի պատիվ կարկառուն կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկու եւ նրա պատվերով: ■

► Է էջից

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՁԱՅՆՆ ԻՐ ԱԶԳԻՆ

ՎԱՐՊԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Մարդային տանջաքանությունը չէ որ ինձ հետ է բերում ֆո երկիր: Քեզ ֆո հոգին է հետ բերում: ...(Ֆրանսիայում) վերանայեցի ինքս ինձ, ափարարիը: Այնտեղից տեսա մեր փոքր Հայրենիքը, վերասիրեցի այն: Տեսա ե՛ւ ափարարի թերությունները, ե՛ւ մեր թերությունները: Հասկացա, որ մարդն ստեղծվել է թերությունները վերացնելու համար...: ...Անկախ ազգությունից մարդիկ ունեն թերություններ, արատներ: Ինչ խոսք, կան նաեւ ազգային արատներ, որոնցից պետք է վայրկյան առաջ ազատվել: Թերությունները հետ է վերացնել: Արատները վերացնելու համար, իմ կարծիքով, պետք է ստեղծել այնպիսի բարյահոգեբանական մթնոլորտ, որ մարդ ամայի իրեն այլ կերպ դրսեւորելու համար: ...Մասավորական կամ չմասավորական՝ էական չէ. պետք է այնպես ապրել, որ լավը շատանա, եւրիրը բարգավաճի: Պատմությունից դասեր քաղվածի: Պատմությունից դասեր չկարելը նշանակում է այսօր ճիշտ չգնահատել իրավիճակը, ճիշտ չկանխատեսել վաղն սպասվող իրադարձությունները, չկողմնորոշվել իրականության մեջ: Մենք նման իրավիճակ չունենք: ...Մեր իմունության գիտությունը պատմական է, մեր մտածողությունը պատմական է, մեր մտածողության մեջ այդպես է դաջված: Եթե ամեն ինչ փորձել ենք տեսնել պատմության մեջ, ինչո՞ւ չենք խորանում պատմության մեջ, որպեսզի դասեր քաղենք հասկանալու համար, որ հենց երկրաբանությունն են մեր տունը քանդել, որ մենք ենք մեր տունը քանդել: ...Ցեղասպանությունը մեծ ցնցում է, իսկ ինչպես Նժդեհն է ասում, ցնցումները վերանորոգում են ժողովրդին, իսկ ժողովուրդների պատմությունը վերանորոգման պատմություն է: Եթե ժողովուրդը չի կարողանում վերանորոգվել, դադարում է զարգանալուց: Այդպիսի ցնցումներ էին Արցախյան շարժումը, երկրաշարժը: Այդպիսի միավոր ցնցում է եղել Հայոց ցեղասպանությունը: Չեմ ասում շահարկենք մեր ողբերգությունը: Ոչ: Բայց պետք է դասեր քաղել մարդկոց պատմությամբ: Եվ եթե տարիներ առաջ մեր անկախ պետականության իշխանավորները, որ մտավորականներ էին՝ դաստիարակված ոչ նյութական, այլ բարձր հոգեւոր արժեքներով, եթե ժամանակին դաստիարակված լինեին նաեւ ցեղասպանության պատմությամբ, կարծում եմ՝ հանրապետության լուսը չէին անջատի. ցեղասպանությունն ընթանող մարդ այդպես չի վարվի իր ժողովրդի հետ: Նրանք չէին կորցի ժողովրդի մեջքը, ժողովրդին ջարդված ողնաշարով կենդանի չէին դարձնի, որ միայն մի կետ հացի մասին մտածեր, որ հետ իշխվեր, որ ջարդվեր նրա հաղթաշրջական ակտիվությունը: ...Ժողովրդին պետք է զինել պատմությամբ: Պատմությունն ցնցող մարդ նման է անցյալ չունեցող, հիշողությունից զրկված արարածի: Ժողովրդին պետք է դաստիարակել: Մեր երկիրը մի այգի է, եւ այգեպանը պարտավոր է ժամանակ առ ժամանակ որոկել մոլախոտերը: Մեզանում ամենուրեք անտարբերություն է տիրում, եւ մեր մտակույթի այգին լցված է մոլախոտերով: Չի կարելի: Ժամանակ առ ժամանակ պարտավոր է մեր այգեպանը էտելու եւ պատվաստելու ուրիշ ճյուղեր: Այն տարվորությունն ունեմ, ասես միտումնավոր փնալ ճյուղեր են պատվաստում...: Ես նույնպես պահանջատեր եմ եւ վստահ եմ, որ մեր հողերը մի գեղեցիկ օր վերադարձնելու ենք: Վստահ եմ, որ Թուրքիայի դեմ մակաբույծ պետությունը, որ իր ամբողջ պատմության ընթացքում պատերազմներ զբաղվել է միայն ավազակությամբ, կտրվի ժամանակի ընթացքում եւ, այն հետո չէ, իսկ մենք պետք է պատրաստ լինենք պատերազմելու մեր Դասը: Ուսի անհրաժեշտ է խելք, խելք, խելք...: ...Վերելք դեռի հոգեւոր արժեքներ, դեռի մարդասիրություն, դեռի առաջընթաց»: ■

Առողջ սերնդափոխության ակնկալիքով

Վերջերս «Ազգ» օրաթերթում իրենց ուսանողական գործնական դարաշրջանները անցկացրեցին Երեւանի պետական մանկավարժական համալսարանի հեռուստայրագրության բաժնի 3-րդ կուրսի մի խումբ ուսանողներ: Անչափ կարեւորելով լրագրողական դաշտի սերնդափոխության հարցը, մենք ամենայն լրջությամբ եւ խստությամբ վերաբերվեցինք մեր առաջա գործընկերների առաջին քայլերին, հուսալով, որ գրելը նրանց համար ոչ միայն հաց վաստակելու միջոց, այլեւ նախնեաաց դարպասի խնդիր կլինի: Ուսանողների հետ գործնական դարաշրջանները անցկացրեց «Ազգ»-ի լրագրողներից Սուսաննա Մարգարյանը, որի խմբագրությամբ էլ լույս ենք ընծայում դրակտիկանտների գրությունները:

Ինչպես են սովորում ուսանողները եւ ինչու

Հայաստանում այսօր միջին աշխատավարձը 50-60 հազար դրամ է: Եթե համեմատենք բուհերում դասախոսվող ուսման վարձերի հետ, ապա կտեսնենք, որ ոչ բոլոր երիտասարդներն են կարողանում կրթություն ստանալ, հանի որ ծնողները վճարունակ չեն, թեեւ շատ հաճախ ուսանողները չեն գիտակցում, որ իրենց բախտը բերել է ֆինանսական բարեկեցության առումով եւ չեն գնահատում սովորելու իրենց հնարավորությունը:

Յուրաքանչյուր առավոտ ուսանողները շտապում են դասի: Նրանցից շատերը հանդերձարանի դռան մոտ են լինում ժամը 8.30-ին, բայց երբ ժամը 9-ին սկսվում է դասը, նոսրի լսարանից բացակայում են: Նույն բացակայությունները կարող ենք տեսնել դասերի վերջում ինստիտուտի մոտակա պարկում: Ուսանողների մի մասը դասի են հաճախում շաբաթը մեկ կամ երբեմն ամբողջ կիսամյակում երեք անգամ: Իսկ երբ գալիս է քննության շրջանը, կոտրի ափսոն իր դարտին է հանում զգուշացնել անհաստատ ուսանողներին, բայց ոմանք չեն էլ ներկայանում քննությանը: Ուսանողներից շատերը կարելի է ասել «ժամանակ չեն տալանում», որպիսեւ նրանք հաճախում են, որ «դիպլոմ» անհրաժեշտ է, սովորելը՝ ոչ:

Ոմանք ձգտող ուսանողներն էլ իրենց դժգոհությունն ունեն: ԵՊՄՀ-ում սովորող ուսանողուհի Հայարփի Վարդանյանը մտահոգություն ունի, որ կրեդիտային համակարգը չի արդարացնելու իրեն, հանի որ գրադարանը չի կարողանալու տրամադրել համապատասխան գրականություն: Իսկ արդեն ավարտած շատ ուսանողներ էլ չեն կարողանում աշխատանքի տեղավորվել իրենց մասնագիտությամբ: Լեւոն Օրբելու անվան բժշկական ֆակուլտետն ավարտած Սոֆյա Գրիգորյանն այժմ աշխատում է խանութում որպես վաճառողուհի: Ըստ նրա, այժմ գոնար է անհրաժեշտ աշխատանքի ընդունվելու համար եւ, բացի այդ, աշխատանքի առաջարկողները դժգոհություն են, որ դիպլոմը պետական չէ:

Այսօր կրթական համակարգը չի կարողանում արդարացնել իրեն, հանի որ չեն իխում հաճախ դասընթացներ, կոնտրացիան համատարած է, եւ համալսարանները չեն կարողանում տրամադրել բազմակողմանի գիտելիքներ եւ հմտություն անհրաժեշտ տարեվորումների բացակայության դժգոհությամբ:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ես դանդուխս եմ, տուն չունեմ...

Գնալով ավելի ու ավելի են թանկանում վարձակալության տվող տների գները: Դրանից ավելի շատ տուժում են մարզերից եկած ուսանողները, որոնք ընդունվելով Երեւանի բուհեր, բնակվում են վարձով տվող բնակարաններում կամ սենյակներում: Գները շատ բարձր են՝ 45000 դրամ արժե մեկ սենյականոցը, որը մոտավորապես 10 քառակուսի մետր է կազմում: Դրանից բացի սենյակում ոչ մի հարմարություն չկա, ինչ կարողանում հայրական տնից վարձակալներն են բերում: Տանտերերին ոչինչ չի հետաքրքրում, նրանք միայն մտածում են իրենց տան մյուս սենյակներն էլ վարձով տալու մասին, չէ՞ որ փողը երբեմ ավելորդ չի լինում:

Տիկին Առուսը, որն արդեն 10 տարուց ավելի իր տան 2 սենյակը տրամադրել է ուսանողուհիներին, ասում է. «Եթե ապրելու այլ եկամուտ չունես, ապա տան սենյակները վարձով տալը շատ եկամտաբեր գործ է: Երկու թոռ ունեմ եւ նրանց ապրուստն այդ գումարով եմ ապահովում»: Տանտերերը կարող են տարվա կեսից բարձրացնել տան վարձը, իսկ ուսանողները սիրողված պետք է վճարեն, որ դրսում չմնան: Մանկավարժական համալսարանի ուսանողուհիներից մեկը, որն ապրում է Այգեստան թաղամասում, պատմում է. «Ես երեք տարի առաջով եմ նույն սենյակում: Առաջին տարում նույն սենյակի վարձն արժեր 25 000 դրամ, երկրորդ տարում՝ 35 000, իսկ հիմա 45 000 դրամ է, բայց շարունակում եմ այդտեղ ապրել, որովհետեւ համալսարանին մոտ է եւ երթուղայիններից չեմ օգտվում: Միայն դա է ինձ սիրողում ապրել այդ սենյակում»:

Չնայած նկարագրվածին կան տան տերեր, որոնք հասկանում են ուսանողներին, շատ լավ են վերաբերվում նրանց, որ ուսանողը, տնից հեռու լինելով, մենություն, տխրություն չզգա: Այնուամենայնիվ, շատ ուսանողների համար հետաքրքրական է՝ երբեւէ տանտերերի մեջ կարթնանա՞ խիղճը, որ իջեցնեն տան վարձերը, թե՞ դա միայն ուսանողների անիրականանալի երազանքն է:

ԻՐԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեր ժամանակի «հերոսները»

Հայ ժողովրդի պատմությունը հարուստ է տարբեր ժամանակների հերոսներով:

Ուստիեւ, պետք չէ անտարբեր գտնվել եւ պատմության այդ էջերում չգտնել այն «հերոսներին», ովքեր ոչ մի քայլ ու երանգ չխնայեցին 2008-ի մարտի 1-ը հայ ժողովրդի համար առավել հիշարժան եւ անմոռանալի դարձնելու համար:

2008-ի նախագահական ընտրություններում պարտություն կրած նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ իր համախոհների կողմից օրեր շարունակ օրերայի բակում անցկացվող հանրահավաքները տվեցին իրենց պտուղները:

Զայրացած եւ անկառավարելի դարձած ցուցարարների կողմից իշխանափոխության ու իշխանության հափից գալու նպատակով Երեւանի փողոցներում իրականացվեցին զանգվածային անկարգություններ, այրվեցին ավտոմեքենաներ, ավերվեցին ու թալանվեցին խանութներ, երբան մոտավորապես 200-ից ավելի վիրավորներ եւ ութ մարդկային զոհեր: Անկարգություններին ոչ պրոֆեսիոնալ, բռնություններով հակադարձեցին անվտանգության ուժերը, այլապես չէիր ուզենա նման քանակով զոհեր եւ տուժածներ:

Եվ մի՞թե «հերոսներ» չի կարելի անվանել զավակին ծնողի դեմ կռվի հանողին, նրանց, ում հաջողվում է հրահրել դարեր շարունակ իր հրեշներով հաց վաստակող ու արարող հային ինքնել ու ավերել իր իսկ ծնողով սարքածը:

ԼՈՒԻԶ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Խրոնիկ խցանումներ Եր. Քոչար փողոցում

Երբեմն հասարակությունը բողոքում է. չգիտակցելով էլ, որ իր բողոքի գլխավոր մեղավորը հենց ինքն է:

Արդեն մի հանի տարի է, զարգացող իրավիճակ է տիրում Եր. Քոչար փողոցում, որն առանց այն էլ նեղ լինելու պատճառով ավելի է հակված խցանումների: Իսկ խցանումներն այստեղ ծեսական բնույթ են կրում, հանի որ խցանման մասնակիցները «փայլում» են իրենց հանդիսավոր գործելաձով, որովհետեւ սարատեսակ օբյեկտներ՝ արտրիճի գալիքած մայթով եւ հարակից արտրիճի ավտոկայանատեղիներով, ու խցանումն իր գագաթնակետին հասցնող հարակացիները, ովքեր «տրամում են հասարակական տրանսպորտին փողոցի յուրաքանչյուր հատվածում, եւ իհարկե, նրանց հուսախաբ չանող երթուղայինի վարորդները, որոնք իրենց դժգոհությունը հասցես չեն կիրառում «տրտնջոց ուզեմ՝ կնստեմ» սկզբունքով առաջնորդվող ուղեւորների նկատմամբ, հանի որ տրանսպորտի բոլոր կանոնների հաճախայն, յուրաքանչյուր ուղեւոր ինչ-որ պահի հասցես վճարելու է եւ իջնելու: Եվ այսպես, չխախտելով պատճառահետեւանքային շղթան՝ երթուղային տախիները շարերի անընդհատ վերադասավորումներով հավատարիմ նեղոցների նման հայտնվում են իրենց սպասող ուղեւորների առաջ՝ կարծես ասելով. «Հանգցնե՛ միանալու, մեծ խցանման փոքր մասնակիցներ»:

Այլ կերպ ասած՝ ազգային խթանում են խցանումը: Մինչդեռ երբեւեկն ավելի հաղթահարք բնույթ կկրեր, եթե այնպես, ինչպես որ ենում են անկողնում եւ ոչ թե աթոռներին, ճաշում են ճաշասենյակում՝ ոչ թե լոգարանում եւ այդպես շարունակ, նույն կերպ էլ հասարակական տրանսպորտին սպասեինք դրա համար նախատեսված ձիշտ վայրում՝ կանգառում: Այդ դեպքում Ալեք Մանուկյան եւ Երվանդ Քոչար փողոցով երթեւեկող հայրուտավոր ուսանողները ժամանակին կհասնեն լսարան, նրանց դասախոսները՝ նույնպես եւ առանց անհրեշու հայտնի «ոսկու շուկայի» ճանապարհը, կգրաղվեն մասնագիտական գիտելիքներ տալ-առնելով:

ՏԱՅԿ ԲԱԲՄԵՂՅԱՆ

Ասա հեռախոսիդ մակնիշը, ասեմ ով ես դու

Գիտության մեծ ձեռքբերումներից է հեռախոսը, որը բավականին դյուրացրել է կյանքը: Բայց բջջային հեռախոսը գլխիվայր շրջեց վերջինիս մասին մեր մինչ այդ ունեցած պատկերացումները: Եթե մինչ բջջայինների ի հայտ գալը հեռախոսը նախատեսված էր միայն հաղորդակցվելու համար, ապա հիմա այդ գործառույթը երկրորդ պլան է մղվել: Ոմանց համար բջջայինը պարզապես տեսախցիկ է, լուսանկարչական ապարատ, մեկ ուրիշի համար՝ երաժշտական կենտրոն, երրորդի համար էլ՝ լավ տպայի կամ աղջկա իմիջը լրացնող տարր: Ոմանք էլ հեռախոս ունեն ուղղակի շրջապատից հետ չմնալու համար: «Հեռախոսային մրցարշավում» պահանջները խիստ են, որոնք չբավարարելու դեպքում շատերը պարզապես դուրս են մնում «խաղից»: Ինչպիսի՞ ամոթ:

Մրցույթին մասնակցելու առաջին պայմանը հեռախոսի գինն է: Եթե մեկ-երկու տարի առաջ այս հարցում կարող էիր մեղմ ասած՝ սել, ապա հիմա հնարավոր չէ: Ուստի ամեն գնով պետք է ձեռք բերել թանկարժեք հեռախոս: Երկրորդ պայմանը արտաքին տեսքն է, գույնը, չափը: Երրորդ տեղում տեսախցիկի հնարավորությունները են եւ, իհարկե, նկարների ու երգերի խելացույց բազմազանությունը: Եթե բջջայինդ համապատասխանում է ընդունված չափորոշիչներին, ուրեմն ազատ, ինքնավստահ մտնում ես բոլոր ու մասնակցում մրցույթին: Առաջինը բջջայինդ գնահատում են «լավ» տպները: Երկրորդ փուլում ներկայացնում ես տեսախցիկի հնարավորությունները եւ ձայնագրված երգերը: Եթե պատվով ես անցնում այս փուլերը, արդեն իրավունք ունես բարձրացնել հեռախոսիդ ձայնը, «թույն» երաժշտության միացնել ու լինել ուշադրության կենտրոնում: Այո, ինչքան լավ բան է հեռախոսը, մարդիկ նկատում են քեզ, եւ դու հաստատում տեղ ես գրաղեցնում «լավերի» շրջապատում:

ԷՄԻԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ուղեղանություն՝ աբորտ

«Ոչ ոք իրավունք չունի կյանք պնելու», սահմանված է օրենսդրությամբ: Սաղմնային վիճակում օրամանիզը նույնպես ապրում է: Ինչը կարող է սպանել մորը սպանել զավակին: Թերեւս դրան ոչ մի բացատրություն կա: Տիկինը, որին ոչ մի երդ չսազցնեց հանդել խնայել դու կյանքը, ասում է. «Ես 21 տարեկան եմ, ունեմ 7 ամսական որդի, այժմ էլ կրծքիս տակ նոր էակ է ձեւավորվում: Շատ դեղեր եմ օգտագործել՝ յիրհանալու համար եւ վախենում եմ, որ զավակս թերություններով ծնվի: Գիտեմ, որ մեղք եմ գործում, բայց այլ կերպ վարվել չեմ կարող: Թերություններով երեխայի խնամքը շատ դժվար է, եւ վստահ չեմ, որ կարող եմ լավ մայր լինել: Չգիտեմ: Եթե ֆիզիկական թերություն ունենա, ամբողջ կյանքում իրեն կաղկանդված, ոչ լիարժեք կզգա»: Նա այդպես էլ չի պատասխանում մեր հարցին, թե ո՞վ է լավ մայրը՝ նա, ով սպանում է դեռ չծնված զավակին, թե՞ նա, ով դժվարություններով մեծացնում է նրան: Թերեւս, նա պատասխանում է այդ հարցին սեփական որոշմամբ:

Հանրապետական հիվանդանոցի պաթոլոգիայի բաժնի բուժաշխատողուհին ասում է, որ հիմա թերություններով երեխաներ միշ են ծնվում 100-ից 1-ը: Իսկ հղիության ընդհատման հիմնական պատճառ է համարում հետեւյալը. «Հայ ընտանիքներում տղա երեխայի ներկայությունը պարտադիր է, այդ պատճառով հղիությունը հաճախ ընդհատվում է, երբ պտուղն իգական սեռ է ունենում: Երկրորդ պատճառը ֆինանսական վիճակն է, երրորդը՝ մոր առողջական վիճակը: Ի վերջո, հղիանում են սեռական վարակներով: Շատ տեսնելու պատճառով: Շատ միջոցներ կան յիրհանալու, ավելի լավ է օգտվել պահպանակներից, քան սպանել նոր ձեւավորվող էակին: Լինում են դեպքեր, երբ պտուղը շատ մեծ է լինում (23 շաբաթական) եւ չի կարելի հեռացնել: Ինչ է սպասվում այդ երեխային: Կամ նա մեծանում է առանց մայրական սիրո՝ մանկատանը, կամ էլ որդեսպան մայրը նրա դեռ չսկսած կյանքին վերջակետ դնելու որոշում է կայացնում:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Փողոցային առեւտրի հետեւանքները

Երեւանի փողոցներում դեռ շարունակվում է փողոցային առեւտուրը: Ամեն վայրկյան տրանսպորտի արտանետած թունավոր գազերով ու ամենուր տարկող շինարարական աշխատանքների հետեւանքի փոշով հագեցված սննդամթերքը, բանջարեղենն ու հացաբուլկեղենը վաճառվում է գետնին՝ ձնհալի ջրերի մեջ դրված տարաներով: Իսկ նման պայմաններում աշխատող առեւտրականի մտքով չի էլ անցնում, որ մարդկանց կեղտոտ սննդամթերք է հրամցնում: Գնորդն էլ, խանութներից գնումներ կատարելու փոխարեն, չի հրաժարվում «գին գցելով» «ձեռի վրայից» առեւտուր անելուց եւ մի հանի մեսաղադրամ խնայելուց: Չմտածելով անգամ, որ նման սննդամթերք օգտագործելը կարող է շատ հիվանդությունների առաջացման պատճառ դառնալ, որոնց բուժման համար իր խնայած գումարներն էլ չեն օգնի:

ԼՈՒԻԶ ԱՂԱԲԵԿՅԱՆ

2008-ի նորաձեւությունը

2008-ի նորաձեւության գարունամառ հավաքածուն ներկայանում է իր նորոմ գունաշրջանակով: Այս տարի նորաձեւ են համարվում մոխրագույն, կաթնային, վառ դեղին գույները:

Նոր ամառային դասական հավաքածուն կազմում է մոխրագույնը եւ բոլոր նրբագեղ գույները, մինչեւ իսկ մարգարտ փայլ ունեցող երանգները: Նորաձեւ են նաեւ փափուկ եւ մեսախյա գործվածքները: Մրգային եւ ոսկանման երանգները տալիս են թթության, հաղթ եւ զովացուցիչ տեսք: Ցկա ավելի բնական գույն, քան կոկոս դեղինը, որը տալիս է կիսիշ անատոմային հանգստություն: Գունային նախապատվությունը տվող է զարմանալի եւ կուրացնող նրբերանգներին: 2008-ին նախընտրելի վառ գույները լցված են թթվածնով եւ էներգիայով: Ամառային հավաքածուն կարտահայտվի միատոն, հարմարվեց գունային նրբերանգներով:

Այս տարի նորաձեւ են լաստաբաս կոշիկները, պայուսակները ու գոտիները:

ՆԱՐԻՊ ՄԱՔՈՒՄՅԱՆ

Բուխարեստում ավարտվեց ՆԱՏՕ-ի գագաթաժողովը

Աշխատանքները եղել են արդյունավետ, իսկ առաջադրանքները՝ մեծապես կատարվել են

Երեկ Բուխարեստում ավարտվեցին Հյուսիսատլանտյան խորհրդի գագաթաժողովի աշխատանքները, որոնց մասնակցում էին ՆԱՏՕ-ի անդամ 26 երկրների պետության կամ կառավարության ղեկավարներ: «Ազգը» նախորդ համարում անդրադարձել էր այս հարցին: Պարզապես ասենք, որ գագաթաժողովում ՆԱՏՕ-ն առաջնորդվում էր դաշինքի ընդլայնման, հակահրթիռային համակարգի ամերիկյան ծրագրի իրականացման եւ Աֆղանստանում տեղակայված ուժերի համալրման առաջադրանքով: Միաժամանակ քննարկվել է ահաբեկչության դեմ համաշխարհային պայքարը շարունակելու հարցը: Քննարկման արդյունքները բավարարել են Թուրքիայի պահանջները, որին գագաթաժողովում ներկայացնում էր նախագահ Աբդուլլահ Գյուլը:

Թեեւ ՆԱՏՕ-ի բուխարեստյան գագաթաժողովն իր զորու չի եղել հաղթահարելու ԱՄՆ-Ռուսաստան լարվածությունը, սակայն դա չի խանգարում, որ դրա աշխատանքները միանգամայն արդյունավետ համարվեն: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ գագաթաժողովում ՆԱՏՕ-ն մեծաթիվ կատարել է իր առջեւ դրված գլխավոր առաջադրանքները:

Գագաթաժողովի մանրամասները, ինչ խոսք, հայտնի չեն, սակայն դրա աշխատանքների արդյունավետության մասին հստակ պատկերացում է տալիս գագաթաժողովում ընդունված հռչակագիրը, որը միաժամանակ արացոլում է նաեւ ՆԱՏՕ-ի առաջադրանքների կատարումը:

Հռչակագրով վերահաստատվել է ՆԱՏՕ-ի ընդարձակման պատասխանատվությունը, ընդգծելով, որ դա մյուս երկրների համար որեւէ սպառնալիք չի պարունակում, մասնագույց է արվել հակամարտությունների կարգավորմանն ուղղված ռազմական գործողությունները տնտեսական զարգացման ծրագրերով համադրելու անհրաժեշտությունը: Միաժամանակ արձանագրվել է Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկրների ներգրավվածությունը հակահրթիռային համակարգի ստեղծմանը, ինչի մասին վերջիններիս պարտավորությունը հաստատել են նրանց ղեկավարները: Ենթադրվում է, որ հակահրթիռային համակարգի ստեղծմանը ՆԱՏՕ-ի անդամ երկրների մասնակցության մասին առաջարկը կներկայացվի հաջորդ գագաթաժողովի քննարկմանը: Համենայն դեպս բուխարեստյան գագաթաժողովում արդեն ձեւ է բերվել Բուլղարիայում, Հունգարիայում եւ Թուրքիայում միջին հեռահարության հակահրթիռների համակարգ տեղակայելու համաձայնությունը:

Թեեւ գագաթաժողովում Ալբանիային եւ Խորվաթիային անդամակցության թեկնածու դարձրած ՆԱՏՕ-ն ձեռնպահ է մնացել Ուկրաինային ու Վրաստանին եւս հրավիրելու գայթակղությունից, սակայն այս երկրների հեռագա անդամակցության հարցում հանգել է ընդհանուր եզրակացության: Ավելին, որոշվել է Ուկրաինայի եւ Վրաստանի անդամակցության հարցը քննարկել ՆԱՏՕ-ի երկրների արտգործնախարարների հանդիպմանը, որը նախատեսվում է առաջիկա դեկտեմբերին:

Գագաթաժողովի մասնակիցները պարտավորվել են համալրել Աֆղանստանում տեղակայված ՆԱՏՕ-ի ուժերը, ըստ այդմ առաջիկա երկու տարում նրանց թվաքանակը 47-ից կհասնի 80 հազարի: Հռչակագրի դրույթներն ամփոփելու դեպքում ակնհայտ կդառնա, որ Ուկրաինային եւ Վրաստանին ՆԱՏՕ-ի անդամակցության թեկնածու դարձնելու կարգախոսով սկսված գագաթաժողովն այս հանդիպումների կարգավիճակի հարցը ժամանակավորապես հետաձգել է, որովհետեւ արդեն ամերիկյան ԱՄՆ-ի հակահրթիռային ծրագրում Հյուսիսատլանտյան դաշինքի անդամների ներգրավվածությունը: Ավելին, Ուկրաինայի եւ Վրաստանի պարագայում «զիջելով», ՆԱՏՕ-ն միաժամանակ թուլացրել է Ռուսաստանի ենթադրվող հակազդեցությունն այդ ներգրավվածությանը: Այսինքն՝ այս երկու երկրները դարձել են սակարկության առարկա:

< ՉԵՐԵՄԻՆ

Թուրքիան քաղաքական եւ տնտեսական անորոշությունների շեմին

Անգլիական հեղինակավոր «Ֆայնենշլ թայմս» թերթի թղթակից Վինսենթ Բուլանդը թերթի ապրիլի 1-ի համարում անդրադառնում է Թուրքիայի վերջին իրադարձություններին:

Թուրքիան դիմակայում է քաղաքական եւ տնտեսական անորոշությունների մի շարք, այն բանից հետո, երբ երկրի բարձրագույն դատարանը համաձայնեց ընդունել տալ երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության (ԱԲԿ) գործունեությունն արգելելու հայցին: ԱԲԿ-ին, որն իր արմատներով քաղաքական մահմեդականությունն է հարում, մեղադրում են աշխարհիկ Թուրքիայում շարիաթի օրենքներ մտցնելու մեջ: Գործը ցնցել եւ բաժանել է երկիրը, բացասաբար անդրադարձել ֆինանսական շուկայի գործունեության վրա: Մեկնաբանները կանխատեսում են անորոշությունների մի քանի ամիսներ, մինչեւ երկու կողմերը օրինական լուծում կգտնեն հարցին: «Հակասաշխարհիկ գործունեություն ծավալելու» մեղադրանքներ են հարուցվել գործող վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանի, գործող նախագահ Աբդուլլահ Գյուլի եւ կուսակցության մի շարք այլ առաջնորդների դեմ: Եթե մեղավոր ճանաչվեն, հինգ տարի ժամկետով կզրկվեն քաղաքական գործունեությունից:

Թուրքիայի աշխարհիկ էլիտան, որի մաս են կազմում զինվորականությունը, դատավարական կոմորդացիան եւ քաղաքական ընդդիմության որոշ հատվածներ, վաղուց էր մեղադրում այդ կուսակցությանը Թուրքիան իսլամիստական երկրի վերածելու «թաքուն ծրագիր» ունենալու մեջ: Կուսակցությունը կտրականապես մերժում է այդ մեղադրանքները: Կուսակցության կողմնակիցների կարծիքով, ԱԲԿ-ին թեւաթափ անելու փորձերը «անարդար են եւ անժողովրդավարական»: Դատարանի որոշումը լուրջ արձագանքներ է ունենալու երկրում, որն աշխատում է միջին ճանապարհ որոնելով աշխարհիկների եւ իսլամիստների միջեւ, որպեսզի կարողանա անդամակցել Եվրոմիությանը, կիրառել լայնածավալ կառուցվածքային բարեփոխումներ տնտեսության եւ կրթության համակարգերում: Այդ աշխատանքները ժողովրդավարության եւ աշխարհիկության միջեւ ընթացող ավելի հին եւ սուր պայքարի մասն են կազմում: ԱԲԿ-ն, որն անցյալ հուլիսին կայացած ընտրություններում տիրացավ էլեներների 47 տոկոսին, ժողովրդավարական լեգիտիմություն է պահանջում, որպեսզի կարողանա իրագործել իր ծրագիրը: Աշխարհիկները սահմանադրությունն են մեջբերում, որը պարտադրում է պետությանը անջատել կրոնը քաղաքականությունից եւ վերահսկել կրոնական գործունեությունը երկրում:

Որոշ մեկնաբաններ դատարանի որոշումը ԱԲԿ-ի դեմ համեմատում են պետական հեղաշրջման հետ: Ուրիշները գտնում են, որ սուր քննադատական արձագանք կունենա այն հարցի վրա, թե Թուրքիան երբեւէ կկարողանա՞ արդյոք դառնալ Եվրոմիության անդամ երկրներին, ինչպիսիք են Գերմանիան, Բրիտանիան եւ Ֆրանսիան, որոնց հետ այլ բնագավառներում նա միշտ ձգտում է համեմատվել:

Ըստ Թուրքիայի առաջնակարգ փիբեռալ մեկնաբանների Օմեր Թասպինարի՝ եվրոմիությունը այս ամենից կարող է եզրակացնել, որ Թուրքիան բավականաչափ ժողովրդավարական չէ, որպեսզի անդամակցի եվրոդրական այդ ընտանիքին:

Տնտեսական առումով Սեպտեմբերի բորսաներում բաժնետոմսերի (որոնց 72 տոկոսը պատկանում է օտարներին) գինը նվազել է 3 տոկոսով, մահճոգություն պատճառելով օտարազգի ներդրողներին: Թուրքիան մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից, որպեսզի կարողանա փոխհատուցել որոշ հաշվարկներով մինչեւ 46 միլիարդ դոլարի հասնող տնտեսության իր դեֆիցիտը, որը հավասար է համախառն ներքին արտադրանքի մոտ 5,5 տոկոսին:

Կուսակցությանը մեկ ամիս է տրված իրեն պատասխանելու համար, բայց շատ մեկնաբանների կարծիքով՝ հարցի վերջնական լուծում կարելի է ակնկալել միայն այս տարվա վերջին՝ չորրորդ եռամսյակում: «Մի բան պարզ է, քաղաքական անորոշությունը գնահատելու է տարվա մնացած ամիսներին», ասում է Սեպտեմբերում տեղակայված «Ռեյմոնդ Ջեյմս սեկյուրիթիզ» խումբ Օզգյուր Աքուզը: Անցած 50 տարիների ընթացքում դատարանի որոշումով Թուրքիայում փակվել է 26 քաղաքական կուսակցություն: 1998-ին փակվել է այդ ժամանակվա խորհրդարանում ամենամեծ «Բարություն» իսլամիստ կուսակցությունը, իսկ 2004-ին՝ ընդդիմադիր «Առաքինություն» կուսակցությունը:

Հարգ. < Օ.

Ապրիլի 8-ին՝ հոգուս Զեկի Քանչելյան-Սփիեռի

Փետրվարի 11-ին ութսուն տարեկանում վախճանված ծնունդով հունգարացի հրեա Թոմ Լանթոսին փոխարինելու համար ապրիլի 8-ին ԱՄՆ-ում կայանալիք ընտրություններում իր թեկնածությունն է առաջադրել Զեկի Քանչելյան-Սփիեռը, տեղեկացնում է այդ առթիվ հայ դատի հանձնախմբի հեն: Ըստ Կալիֆորնիայի պետական օրենսդիր մարմնի անդամ, հեղինակել է 15-ից ավելի բանաձեւեր հոգուս հայկական դատի: 1989-ին պատասխանել է այն օրինագիծը, որ պահանջում է հայոց ցեղասպանության թեման ընդգրկել դպրոցական ծրագրերում:

«Որոշ մարդիկ մեզ թելադրում են մոռանալ հայոց ցեղասպանությունը: Ուրիշները՝ մեր պետարտուղարի նմանները, հորդորում են ազատվել այդ բարդույթից: Բայց մենք չենք մոռանալու եւ չենք ազատվելու դրանից: Մենք արդարություն ենք պահանջում, որովհետեւ որպես պատմության ուսանողներ գիտենք, որ աշխարհն ավելի վտանգավոր է դառնում բոլորի համար, եթե նրան թույլատրվում է մոռանալ հայոց եւ այլոց ցեղասպանությունները», ասել է նա:

< Օ.

Զեկի Քանչելյան-Սփիեռը մոր՝ 92-ամյա Լենսի Քանչելյանի եւ հայ դատի հանձնախմբի ղեկավարներից Ռոքսանա Մախասջյանի հետ:

Զեկ Գեւորգյանը «ասասեր չունի»

Միլիգանում (ԱՄՆ) հրատարակվող «Վինձոր Սբար» թերթում տպագրված Ռեյն համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս Զեկ Լեսենբերիի հոդվածը անդրադառնում է այն լուրերին, որ ամերիկահայ հայտնի բժիշկ Զեկ Գեւորգյանը մտադիր է դառնալ կոնգրեսական: Նա մտադրությունը Լեսենբերին բնորոշում է որպես «դարձյալ ուշադրության կենտրոնում լինելու կոչ»:

«Բանից ազատ արձակվելուց ի վեր նա մոռացված ճգնավորի կյանք է վարում: Նրան երբեմն կարելի է տեսնել գյուղացիների շուկայում՝ խնձոր գնելիս», գրում է լրագրողը, ավելացնելով, որ մի ժամանակ թերթերի սյունակներում գրեթե ամենօրյա հիշատակումների եւ «Դոկտոր Մահ» հորջորջմանը արժանացած Գեւորգյանն այժմ, ուքսունամյա հասակում, ամբողջովին մեկուսացված կյանքով է ապրում: Նրան շատ էլ չեն ճանաչում:

Կյանքում ընդամենը 2 անգամ ընտրություններին մասնակցած բժիշկը, ըստ լրագրողի, կոնգրեսական է ցանկանում դառնալ, որպեսզի կարողանա սահմանադրության մեջ մտցնել որոշ փոփոխություններ, առավել ազատական մոտեցումներ:

«Բայց դա նրան չի հաջողվի», եզրակացնում է Լեսենբերին: «3000 ստորագրություն հավաքելը հետաքրքիր չէ, նրա ժամանակներն անցել են: Մարդ պիտի պատշաճ, վայելուչ կերպով հեռանա ասպարեզից», գրում է նա:

< Օ.

Լոնդոնում դատում են ութ ահաբեկիչների

Լոնդոնի արվարձաններից մեկում հինգշաբթի օրն սկսվել է ութ անձանց դատավարությունը, որոնց կասկածում են Լոնդոնից Հյուսիսային Ամերիկա թռչող օդանավերի պայթեցման փորձերի մեջ:

BBC-ն հիշեցնում է, որ 2006-ին Լոնդոնում եւ բրիտանական մի շարք ուրիշ քաղաքներում կանխվեց խոշոր ահաբեկչություն, որի նպատակը տասնյակ օդանավերի պայթեցումն էր:

Ամբաստանյալների մեծ մասը Լոնդոնի բնակիչներ են: Նրանք փորձել էին օդանավեր մտցնել հեղուկ պայթուցիկներ եւ օդանավերը պայթեցնել Ատլանտյան օվկիանոսի վրա: Դատախազ Պիտեր Ռայթի խոսքերով, կասկածյալների նպատակը եղել է հնարավորինս մեծ թվով զոհեր պատճառել «հանուն իսլամի»:

2006-ի օգոստոսին ահաբեկչությունների կանխումից հետո Մեծ Բրիտանիայի օդանավակայաններում սահմանվել էր անվտանգության խիստ միջոցներ, արգելվել էր օդանավ մտցնել որեւէ հեղուկ կամ ածուկ, որոշ ժամանակով արգելվեց առհասարակ ձեռի ուղեբեռ տանելը:

Ահաբեկիչները որոշ պայթուցիկ սարքի գլխավոր տարր պետք է օգտագործեին ջրածնի պերօքսիդը, օդանավում այն խառնելով օրգանական նյութերի հետ:

Ամբաստանյալները 23-29 տարեկան անձինք են: Ենթադրվում է, որ դատավարությունը կտեւի ութ ամիս:

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Չեռամտածողության ժառանգության հեսքերով-ցուցահանդեսային իրականությամբ

Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանում արդեն 5-30-ը կայանալիք ցուցահանդեսը ուսագրավ է լինելու արվեստի հիմնախնդիրների առաջադրման տեսանկյունից. հարցադրումը սկսվում է 70-ականների «գիտական մեւեթից եւ նոր զարգացումներից»: Նախագիծը մասնագետ եւ իրավանացնող գեղանկարիչ Լեւոն Հայթայանը ցուցահանդեսային կտաւերում գրում է. «Արդի հայ կերտաղեսը կանգնած է սեփական արվեստային խնամքների ընկալման խորին բանաձեւի առջեւ. – Հետահայաց ոճ-դումներ» հայատանյան արվեստային դիմագիծը ըմբռնելու մի ժամանակավոր փորձ է»:

Ցուցահանդեսին (գեղանկար, կոլաժ, ռելիեֆ) մասնակցում են տարբեր սերունդների 5 արվեստագետներ՝ Միհրթ Հովհաննիսյան, Ռաֆֆի Անալյան (ծնված 1938, 1940), Լեւոն Հովհաննիսյան, Լեւոն Հայթայան (1966, 1965) եւ Տիգրան Սահակյան (ծնվ. 1975): Ցուցահանդեսն ընդգրկում է մեւեթի, ոճակերների, կոմպոզիցիաների զարգացման մի ընդարձակ 70-ականներից մինչեւ 2008 թվականը: Մեր զրույցը՝ ցուցահանդեսը հսկողություն Լեւոն Հայթայանի հետ:

- Լեւոն, որոնք են այդ իմնանաելման միջոցները, որոնց շնորհիվ ակնկալվում է մշակութային իմաստակարգի վերստեղծման ճանապարհին նոր տարբերակի մշակում:

- Անցած 70 տարիներին արվեստային ոլորտի որոշակի միջավայրի առկայությունից հետո, ծաղեցնելիորեն արդի զրաղումներ, զարգացնում են այդ ոլորտանում տարիների մասնագիտությունների, որոնք ունեն իրենց իմնանանալման սանդղակը:

- Անցած դարավերջին ձեւավորվել էր արվեստի մթնոլորտ, մասնագիտական որոշակի մեթոդ՝ իր տարբեր դրսեւորումներով, հասակ խնդիրներով: Դիմա քաոսային վիճակ է, կարծես:

- Այսօր արվեստագետների մի բանակ է առաջացել, որ կարելի է ասել ձեւական է արդում այստեղ եւ իր զրույցը դրսի հետ է:

- Ցուցադրությունը նկատի ունեմ:

- Դա առաջին դրվանն է նկարի հաճար եւ այդ մեծությամբ տեսանք կա: Երիտասարդ նկարի կայանալու դրամները բացակայում են, մարդը դրսու է գալիս արվեստային միջավայր եւ բախվում հաճարաստական դոնորի, կառույցների կարծ դիտոնոմանը: Ուստի նա դեռեւ է փնտրի դիալոգի այլ ճանապարհ, թե վիրտուալ աշխարհում, թե արտաքին կարգերի միջոցով: Արձանագրվում է սեղծագործողի եւ այս հոգի հետ կարի խաթարման ցավալի փաստ:

- Լավ, նման դարագայում, որքանով է դրսին իր կայացումն արտաքին (օտար) աշխարհում:

- Ամենու է դժվար: Իհարկե, խոսքն արվեստի կենսունների մասին է: Բայց չէ՞ որ նման երկրներում արվեստին տրված է որոշակի առաջնություն, որից եւ տրամաբանորեն ունեն՝ արվեստին տրված է մի դեր, որ իմը դիտի բացահայտի եւ հանրությանը մատուցի: Հայ արվեստագետը փորձում է մնալ իմֆորմացիայի այդ դաշտ: Այստեղ արվեստից արդիսի ակնկալիք չկա, թե ինչ-որ բան կարող է բացահայտել, կանխորոշումներ անել:

- Չկա՞ արվեստի հասարակական դահանջ, կամ եթե կա՝ բնագրային մակարդակներում է:

- Հասարակությունը միշտ տրամաբանի ունի: Այդ տրամաբանի որոշակի է դարգացնում, նա փնտրում է վայելք, հանգիստ ու բախտավորություն եւ ոչ՝ հարց, գաղտնիք, կանխագուշակում. այսինքն՝ այն հարցերը, որ չեն լուծվում կյանքում, փորձում տեսնել արվեստում: Արվեստը, ի վերջո, կանխատեսում է:

- Արդի արվեստը «նշանային կանխատեսումների» այդ ուժը կորցրել է, թե՞ զանգվածային մշակույթի ոլորտ հեղեղատում չի երեւում արվեստի իրական դեմքը (եթե կա), այն արվեստի, որը կարող է ազդեցություն ունենալ հանրային նոր մտածողության ձեւավորման վրա:

- Արվեստի մեջ ձեւերի փոփոխները երբեմն կարող են հանդիպել օրերի դրամատիզմին, բայց երբեմն էլ կարող են: Մեր խնդիրն է ամբողջացնել՝ տեսնելու, թե դարձնում է դա նկարագիր: Սա մի հսկայական գործի առաջին քայլն է, որ փորձում եմ անել այս ցուցահանդեսով: Եթե այս ծրագիրը արձագանքներ ունենա եւ ուրիշները եւս փորձեն վերանայել, այսինքն՝ անձնականից հասարակական դահանջի վերածվի, ես կիամոզվեմ այս իրողության անհրաժեշտության մեջ:

Ցուցահանդեսը խնդիր է առաջադրում առարկայական, ֆիգուրատիվ արվեստի վերջին սպեցիֆիկ դրսեւորումների ներկայացումը այս նկարիչների գործերով եւ անցումը ոչ առարկայական արվեստի՝ սա ոչ թե հակադրելու, այլ զուտ նկարչական լեզվամտածողության իմաստով: Անցման կետը 70-ականներն է՝ այդ փասը գրանցելու միտումով:

- Ներկայացվող անունները շատ հայտնի չեն...

- Այսքիսի ցուցահանդես հնարավոր էր անել մարդկանց հետ, ովքեր ավելի լայն ճանաչում ունեն, բայց այս արժեքը չէր ունենա: Ուզում եմ իմ թեռահավատությունն արտահայտել այդ թվականների նկատմամբ: Իսկ ինչո՞ւ հենց դրանք մեզ ճանաչեցնի այդ թվերին: Սրանից բացի, ներկայացվող նկարիչների գործերը դրսու են տարվում, սա գոնե մեկ անգամ նրանց այստեղ ցույց տալու փորձ է այսքիսի հարաբերության մեջ:

- Կան արդյոք այլ անակնկալներ կազմակերպչական, ներկայացման առումով:

- Հեռերիկ Իշխանյանի ցանկությունը ժամանակակից արվեստի թանգարանում նոր մոնտաժներ տեսնելու եւ իմ նախագծի մեկնաբանը հանդիսանում: Ըստ էության, նա աջակցեց, որպեսզի մարմնավորեմ արդի ցուցահանդեսի ներկայացման իմ պատկերացումները:

- Եվ ինչպե՞ս:

- Կիրառելու եմ այն, ինչ ընդունված է եւ տեսել եմ աշխարհում, ինչպես, օրինակ, մարդն կարդ ժամանակով կտրես առօրյայից եւ մոտեցնես պատկերին: Ինչպես է առնում այդ դրամատուրգիան, երբ մեկ միջավայրից տեղափոխվում են միանգամայն այլ միջավայր: Էքսպոզիցիայի կարեւոր հանգամանքներից է բոլոր նկարների հավասարապես հնչելու հնարավորությունը: Այսպես կոչված խորանային տարբերակը բացառել, որը հակառակ է նկարչական էթիկային, թույլ տալ, որ յուրաքանչյուր նկար ազատ լինի եւ դիտելի. կենսունական նկարի տարբերակը մերժել:

Դիտողը պետք է հնարավորինս տեղեկացված լինի ցուցահանդեսից: Մեր գովազդային ակցիան՝ եղած միջոցների հնարավորությամբ, ընտրեց ժողովրդական տարբերակը՝ առաջին անգամ Երեւանի մետրոներում կարելի է հանդիպել նկարչական ցուցահանդեսի գովազդային ափիշների: Կլինեն անվճար հրավիրատոմսեր, բուկլետներ, բացման օրը տեղեկատվական կտավոգը ավելի մասնագիտական կլինեն: Ցուցահանդեսի ավարտին՝ արդիսի 30-ին տեղի կունենա քննարկում: Եվ կարեւոր՝ հետաքրքրասիրությունը ցուցահանդեսին մասնակիցների թիվը կմեծացնի:

Զրուցավարը՝
ՄԵԼԻՏԱ ՊԵՊԵԼՅԱՆԻ

ԱՊԱԳԵՂԵՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՐՁ

Մարզերում էլ համերգներ ... միշ, բայց լինում են

Թաթուլ Ալթունյանը հենց գյուղերից հայկական բեմական մշակույթ բերեց երգի-պարի անսամբլի երգացանկն ու պարերը: Այսօր մշակույթի նախարարությունը տարեկան ծրագրեր է կազմում եւ մարզերում տարբեր անսամբլների համերգներ, ցուցահանդեսներ, թատերախմբերի ելույթներ կազմակերպում: Սակայն դեռեւս վերստեղծված չէ հետադարձ կապը՝ մարզերում առկա մշակութային դրսեւորումները հասու չեն մայրաքաղաքում: Սա որոշ մտահոգություն եւ հետազա ծրագրեր, երեկ «Ուրբաթ» ակումբում ներկայացրեց ՀՀ մշակույթի նախարարության մշակութային քաղաքականության վարչության պետ **Կարո Վարդանյանը:** Նախորդ տարի 17 մլն դրամի շրջանակներում համերգներ են կազմակերպվել մարզերում: Այս տարի նույն նպատակով կծախսվի մոտ 28 մլն դրամ: Սակայն, Կարո Վարդանյանի վստահեցմամբ էլ խնդիրները շատ են ու խորհային. «Գյուղերում անգամ լավագույն համերգի տոմսեր վաճառելու մասին խոսելն ավելորդ է: Բոլոր համերգների, ցուցահանդեսների մուտքն ազատ է: Կան գյուղեր, որտեղ երեխաները չգիտեն ինչ է տիկնիկային թատրոնը, համերգը եւ այլն»: Եվ դա չնայած այն բանին, որ «Մարզերում մշակութային կյանքի զարգացման ծրագիր» հաստատել եւ իրագործվում է: Ի դեմ, այդ ծրագիրը մշակութային քաղաքականության եզակի օրինակ չէ նախարարության համար՝ «Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանման ու զարգացման» ծրագիր էլ է մշակվում:

Գործունեության ծիրից դուրս թողնելով մշակույթի դատում ցածարժեք՝ նախարարությունը փորձում է բարձրարժեք արվեստը հասու դարձնել հայաստանաբնակներին. «Գալիս դիտել են բոլոր հեռուստաընկերությունների տնօրեններին՝ ներկայացնել մշակութային ուղղվածության հաղորդումների ծրագրեր, որոնք հավանության արժանանալու դեպքում կֆինանսավորվեն: Պատասխաններ, առաջարկներ չկան», տեղեկացրեց Կարո Վարդանյանն, ընդգծելով, որ մշակութային միջոցառումների լուսաբանման պատճառ հեռարձակություն նույնպես չեն դրսեւորում զանգվածային լրատվամիջոցներն ու, հատկապես, հեռուստաընկերությունները: Մինչդեռ, ըստ բանախոսի, նախարարությունը դեմ չէ եւ անգամ զորու է արժեքավոր մշակութային ծրագրեր ֆինանսավորել, ինչպես արել է «Ժողովրդական երգիչ» նախագծի դեպքում, որը ուշադրության է արժանացել նաեւ տեսակով միակը լինելու պատճառով:

Այնուամենայնիվ, հիմնական խնդիրը մնում է միջոցների պակասը. «Գադարանին ֆոնդի համալրման համար տարեկան 2-3 հարյուր հազար դրամ է տրամադրվում, որը բնականաբար չի բավարարում հասկանալի հեռավոր մարզերի գրադարաններին: Չէ՞ որ 1991-ից հետո համարյա սաստկապես պակասած գրախանութները գործում են հիմնականում երեւանում», այս տվյալը ներկայացնելով՝ Կարո Վարդանյանն ընդգծեց, որ առավել առաջնային խնդիր է գրադարանների տարածային բարելավումը՝ նորոգումն ու հիմնանորոգումը եւ տեղեկացրեց, որ այս տարի նորոգվելու է Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանը, հիմնանորոգվելու՝ Ազգային գրադարանը: Անմխիթար վիճակում գտնվող երաժշտագիտական գրադարանի նորոգման հարցը հետաձգվել է ԵԵՄի պատկանելության չպարզված խնդրի պատճառով, բայց ներառված է նախարարության եռամյա ծրագրում: Նախարարությունը ծեռնարկել է գրադարանների (նաեւ մարզային), ֆոնդերի ավտոմատացումը: Մարզերում առավել արդյունավետ աշխատելու նպատակով մարզպետարաններում մշակույթի բաժիններն առանձնացվելու եւ ունենալու են հատակ գործառույթներ ու պատասխանատվություն:

ԼՈՒՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայկական ջազ-70

Հայկական ջազը նշում է հիմնադրման 70-ամյակը: Հոբելյանական միջոցառումների շրջանակում մինչեւ դեկտեմբեր կկազմակերպվեն համերգներ տեղի եւ արտերկրի (թե՛ սփյուռքահայ, թե՛ օտար) ջազային նվագախմբերի, երաժիշտների մասնակցությամբ: Ամենայն հավանականությամբ հնարավոր կլինի կազմակերպել համաշխարհային այնպիսի լեգենդար ջազմենների հավաք, ինչպիսիք են Ջորջ Բենսընը, Ալ Ջերիոն, Հենրի Հենկոքը:

Հայկական ջազի 70-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը մեկնարկեց երեկ՝ Ա. Խաչատրյան համերգասրահում՝ Մարտին Վարդազարյանի 70-ամյակին նվիրված համերգով: Հինգերորդ Արեմի Արվազյանի «Հայկական ռապսոդիան», ամերիկյան ավանդական եւ ժամանակակից եւ այլ ջազ-երաժշտություն:

Մինչ երեկոյան համերգը համերգասրահի նախասրահում տեղի ունեցավ կազմկոմիտեի մամուլի առաջին ասուլիսը՝ մասնակցությամբ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի, Մարտին Վարդազարյանի, երվանդ Երզնկյանի, Լեւոն Մալխասյանի եւ այլոց: Մշակույթի նախարարը հոբելյանին պարգեւատրեց «Ոսկե մեդալով»:

Ի դեմ, կազմակերպիչները մոռացել էին, որ ոտի վրա գտառումներ աճելը լրագրողների համար այնքան էլ հարմար չէր, հետո տեսնեցին դրությունը:

Մ. Բ.

Քարեկամ երկրների նկարչական ցուցադրություն Ազգային պատկերասրահում

Հայաստանի Հանրապետության եւ Ռումինիայի մշակույթի նախարարության, Հայաստանում Ռումինիայի դեսպանության համատեղ նախաձեռնությամբ երեկ Ազգային պատկերասրահում տեղի ունեցավ «Հայաստան-Ռումինիա մշակութային կապեր» միջոցառական ցուցահանդեսի բացումը: Հայ հանդիսատեսը հնարավորություն ունի ծանոթանալու արվեստաբան Գրիգոր Զամբարյանի՝ հայրենիքին նվիրաբերած 12 գեղանկարին եւ Վարդան Բարաֆյանի հավաքածուի ընտրանուն: Վերջինիս հավաքածուում ընդգրկված են ռումինացի եւ եվրոպացի վարպետների գեղանկարչական եւ գրաֆիկական գործեր: Բացի նկարչական ստեղծագործություններից, Վ. Բարաֆյանը հայ արվեստասերների դատին է հրամցնում նաեւ եվրոպական եւ արեւելյան երկրների դեկորատիվ-կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ, նաեւ ռումինական խեցեգործական, մետաղյա, ապակյա եւ ոսկյա բազմազան իրեր: Բացման խոսքում Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանն ասաց. «Պատմական նշանակություն ունեցող ցուցադրություն է: Կես դար առաջ մեր հայրենակիցների նվիրած աշխատանքները հատուկ տեղ են գրավել Ազգային պատկերասրահի ցուցադրություններում: Եվ այսօր՝ 50 տարի անց բացում ենք այդ ստեղծագործությունների ընդհանուր ցուցադրությունը, ինչը շատ կարեւոր իրադարձություն է երկու երկրների արվեստի ու մշակույթի էլ ավելի մերձեցման գործում»:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն էլ 2 տարի առաջ Բուխարեստում այցելել է Զամբարյանի թանգարան եւ հիացել համաշխարհային արվեստի բարձրարժեք ստեղծագործություններով: Ազգային պատկերասրահի երեք սրահում եվրոպական ստեղծագործությունների կողքին իրենց փայլը չէին կորցրել նաեւ ռումինահայ նկարիչների աշխատանքները: Արվեստագետներ, որոնք ստեղծագործելով Ռումինիայում, հարգաս են մնացել երկու երկրների մշակույթին: Ցուցահանդեսի ընդարձակում տեղի ունեցավ նաեւ գեղանկարչական կտավոգի բնորհանդեսը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեւոն Արոնյանի վարկանիշը ռեկորդային ցուցանիշի հասավ

Ընթացիկ մրցաշրջանում Լեւոն Արոնյանի վսահ ելույթներն իրենց արացությունն են գտել ՖԻՖԱ-ի վարկանիշային ցուցակում հայ գոռմայստերի ցուցանիշներում: «Ազգը» չէր բացառել, որ Լեւոն Արոնյանի վարկանիշը հնարավոր է գեռաշանցի նոր ռեկորդային ցուցանիշը: Եվ ահա, ՖԻՖԱ-ի դասակարգման նոր ցուցակում Լեւոն Արոնյանը հասել է իր համար ռեկորդային վարկանիշի (2763)՝ զբաղեցնելով 6-րդ հորիզոնականը: Շախմատասերներին հիշեցնենք, որ մարզական իր կարիերայի ընթացքում ամենաբարձր վարկանիշը (2761) Լեւոն ունեցել է 2006-ի հուլիսի 1-ին:

Դասակարգման նախորդ ցուցակի (հունվարի 1-ի դրությամբ) հանձնաս Արոնյանը վարկանիշը բարձրացրել է 24-ով եւ չորս հորիզոնականով առաջադիմել է: Եթե Արոնյանը շարունակի իր վսահ ելույթները նաեւ առաջիկա մրցաշրջանում, ապա ընդհուպ կմոտենա 2800-ի սահմանագծին, որն առայժմ հաջողվել է հասել միայն աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդին (2803): Իսկ ահա մյուս երկու շախմատիստները զգալի հեռընթաց են ունեցել: Վլադիմիր Յակոբյանը 27-ով նվազեցրել է վարկանիշը (2673) ու 23-րդ տեղից նահանջել է 49-րդ հորիզոնական: Գաբրիել Սարգսյանն էլ 33-ով իջեցրել է վարկանիշը (2643) ու 43-րդ տեղից նահանջել է 77-րդ հորիզոնական: Իսկ ահա Կարեն Ասրյանը կրկին տեղ է զբաղեցրել 100 լավագույնների շարքում: Նա 2630 վարկանիշով 92-րդ տեղում է: Յակոբյանն ու Սարգսյանն ամենազգալի հեռընթացն ունեցած շախմատիստներն են:

Նախորդ ցուցակի համեմատ ամենամեծ առաջընթացն ունեցել է Նորվեգացի Մագնուս Կառլսենը: Նա իր վարկանիշն ավելացրել է 32-ով (2765) եւ 13-րդ տեղից տեղափոխվել է 5-րդ հորիզոնական: Լավագույն հնգյակում տեղ զբաղեցրած շախմատիստներից Կրամնիկը (-11) եւ Թոփալովը (-13) նվազեցրել են վարկանիշները, իսկ Անանդը (+4) եւ Մորոզեւիչը (+9)՝ ավելացրել:

Կանանց դասակարգման ցուցակում 50 լավագույնների ցանկում էլինա Դանիելյանը 2479 վարկանիշով 17-րդ տեղում է, իսկ Լիլիթ Մկրտչյանը 2413 վարկանիշով բաժանում է 50-53-րդ տեղերը: Ցուցակը նախկինի պես գլխավորում է հունգարուհի Հուդիթ Պոլգարը: Մինչեւ 20 տարեկան երիտասարդների ու աղջիկների 20 լավագույնների թվում Հայաստանը կրկին ներկայացուցիչ չունի: Երիտասարդների ցուցակը 2765 վարկանիշով գլխավորում է Մագնուս Կառլսենը, աղջիկներինը՝ Հոու Յիֆանը (2549):

Երկրների մեջ Հայաստանը 2625 վարկանիշով 6-րդ տեղում է: Ցուցակը նախկինի պես գլխավորում է Ռուսաստանը (2719), ուրն հաջորդում են Ուկրաինան (2684), Իսրայելը (2635), Չինաստանը (2635) եւ ԱՄՆ-ն (2634):

Ներկայացնում ենք տղամարդկանց եւ կանանց դասակարգման ցուցակների լավագույն տասնյակները:

Տղամարդիկ

1. Վիշվանաթան Անանդ	Հնդկաստան	2803
2. Վլադիմիր Կրամնիկ	Ռուսաստան	2788
3. Ալեքսանդր Մորոզեւիչ	Ռուսաստան	2774
4. Վեսելին Թոփալով	Բուլղարիա	2767
5. Մագնուս Կառլսեն	Նորվեգիա	2765
6. Լեւոն Արոնյան	Հայաստան	2763
7. Շահրիյար Մամեդյարով	Ադրբեջան	2752
8. Թեյմուր Ռաջաբով	Ադրբեջան	2751
9. Պյոտր Սվիդլեր	Ռուսաստան	2746
10. Պետեր Լեկո	Հունգարիա	2741

Կանայք

1. Հուդիթ Պոլգար	Հունգարիա	2709
2. Համպի Կոներու	Հնդկաստան	2603
3. Հոու Յիֆան	Չինաստան	2549
4. Պիա Կրամլինգ	Շվեդիա	2539
5. Անտոանետա Ստեֆանովա	Բուլղարիա	2538
6. Ցիան Հուե	Չինաստան	2523
7. Ալեքսանդրա Կոստենյուկ	Ռուսաստան	2523
8. Մարիա Սեբաղ	Ֆրանսիա	2521
9. Ցզու Ցեն	Քաթար	2521
10. Մոնիկա Սոչկո	Լեհաստան	2505

Անգլիական թիմերն առաջադիմել են

Ֆուտբոլի պատժության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի 350 ուժեղագույն ակումբների դասակարգման հերթական ցուցակը: Երկրորդ անգամ անընդմեջ ցուցակը գլխավորում է Լոնդոնի «Չելսին», որը նախորդ անգամ ընդհատեց իտալական «Սեւիլիայի» գերիշխանությունը: Վերջինս պանական «Սեւիլիայի» գերիշխանությունը: Վերջինս 17 ամիս շարունակ գլխավորում էր դասակարգման ցուցակը:

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել անգլիական չորս ակումբներ: 4-րդ տեղից 2-րդ հորիզոնական է տեղափոխվել «Մանչեսթր Յունայթեդը»՝ շրջանցելով «Սեւիլիային» ու «Միլանին»: «Լիվերպուլն» էլ 9-րդ տեղից բարձրացել է 5-րդ հորիզոնական, իսկ տասնյակը եզրափակում է «Արսենալը»: Նախորդ ամսվա համեմատ ոչխակում է ընդգրկվել է գերմանական «Համբուրգը»՝ փոխարինելով իտալական «Ինտերին»:

Հայաստանը կրկին ներկայացնում են 3 թիմեր: Ավելի բարձր դիրք է գրավում «Միկան», որը 252-րդ տեղից նաբարձր դիրք է գրավում «Միկան», որը 252-րդ տեղից նահանջել է 270-րդ հորիզոնական: «Գյունիկը» եւս նահանջել է՝ 283-րդ տեղից 301-րդ հորիզոնական: «Բանանցն» էլ 335-րդ հորիզոնականից նահանջել է 350-րդ տեղը:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից ամենաբարձր վարկանիշն ունի Սանկտ Պետերբուրգի «Զենիթը», որը 41-րդ տեղում է: Դոնեցկի «Շախտյորը», որ նախորդ ցուցակում լավագույնն էր նախկին ԽՍՀՄ թիմերի խորդ ցուցակում լավագույնն էր նախկին ԽՍՀՄ թիմերի մեջ, 37-րդ տեղից տեղափոխվել է 43-րդ հորիզոնական: 100 ուժեղագույն ակումբների շարքում տեղ են զբաղեցրել նաեւ Մոսկվայի «Սպարտակը» (56-րդ տեղ) եւ Կիեւի «Դինամոն» (67-րդ):

Ներկայացնում ենք լավագույն տասնյակի ցուցանիշները.

1. «Չելսի»	Անգլիա	277
2. «Մանչեսթր Յունայթեդ»	Անգլիա	274
3. «Միլան»	Իտալիա	266
4. «Սեւիլիա»	Իսպանիա	260
5. «Լիվերպուլ»	Անգլիա	257
6. «Բոկա Խունիորս»	Արգենտինա	254
7. «Ռոմա»	Իտալիա	250
8. «Համբուրգ»	Գերմանիա	236
9. «Բարսելոն»	Իսպանիա	234
10. «Արսենալ»	Անգլիա	232

Նավրատիլովային կրկին չեխական անձնագիր հանձնվեց

Համաշխարհային թենիսի լեգենդներից մեկը՝ Մարտինա Նավրատիլովան կրկին Չեխիայի հաղաքացիություն է ստացել: Նա 30 տարի առաջ հեռացել էր երկրից՝ մեկնելով ԱՄՆ, որտեղ ամերիկյան հաղաքացիություն էր ստացել: Հունվարի 9-ին լեգենդար թենիսիստուհին Չեխիայի անձնագիր է ստացել: 51-ամյա Նավրատիլովան ներկայում երկքաղաքացիություն ունի:

Պրահայում ծնված Նավրատիլովան ԱՄՆ էր փախել 1975-ին: Կոմունիստական իշխանությունները նրան անմիջապես զրկել էին հաղաքացիությունից: 6 տարի անց Նավրատիլովան ԱՄՆ-ի հաղաքացիություն էր ստացել: Անցած տարի թենիսիստուհին հայտարարել էր, որ եթե նախկինում ամաչում էր Չեխոսլովակիայի իշխանություններից վառած հաղաքականության եւ դրի վառած հաղաքականության եւ երկրում տիրող վարչակարգի համար, ապա այժմ նույնիսկ զգաում ունի ԱՄՆ-ի եւ նրա նախագահ Ջորջ Բուշի հանդեպ: Նա նաեւ նշել է, որ ԱՄՆ մեկնելու հիմնական պատճառն այն էր, որ Չեխոսլովակիայի իշխանությունները իրեն արգելում էին մրցաշարերի մեկնել ամերիկյան մայրցամաք:

ԱՄՆ մեկնելը վճռորոշ դեր խաղաց Մարտինա Նավրատիլովայի մարզական կենսագրությունում: Նա դարձավ թենիսի «գերաստղերից» մեկը: Իր երկարատեւ մարզական կարիերայի ընթացքում անվանի թենիսիստուհին հաղթող է ճանաչվել «Մեծ սաղավարտի» շարքին դասվող 18 մրցաշարերում՝ Ուիմբլդոնում (9 անգամ), ԱՄՆ-ի բաց առաջնությունում (4), Ավստրալիայի բաց առաջնությունում (3) եւ «Ռոլան Գարոսում» (2):

Նավրատիլովան 1994-ին հրաժեշտ էր տվել թենիսին, սակայն 2000-ին կրկին կոռտ վերադարձավ՝ հանդես գալով զուգախաղում ու նույնիսկ մի քանի մրցաշարերի հաղթող ճանաչվեց: Միայն 2006-ի դեկտեմբերին նա վերջնականապես ավարտեց ելույթները մեծ թենիսում: Ընդհանուր առմամբ Նավրատիլովան հաղթող է ճանաչվել 354 մրցաշարում, ինչը յուրօրինակ ռեկորդ է: Ներկայում նա մշակիր է Չեխիայում պատանի թենիսիստների համար թենիսի ակադեմիա հիմնել:

ՇԱԽՄԱՏ

Չորս հայ շախմատիստներ ՌԴ ակումբային առաջնությունում

Չորս հայ շախմատիստներ տարբեր թիմերի կազմերում մասնակցում են Դագոմիսում ընթացող շախմատի Ռուսաստանի ակումբային առաջնությանը: Չեմպիոնի տիտղոսը վիճարկում են 12 թիմեր, որոնք մրցում են շրջանաձեւ մրցակարգով: Բացի այդ, առաջին չորս տեղերը զբաղեցրած թիմերը կմասնակցեն Եվրոպայի ակումբային առաջնությանը: Այս տարի լեգեոնականների սահմանափակում է մտցվել: Յուրաքանչյուր թիմում նրանց թիվը չպետք է գերազանցի երեքը:

Կարեն Ասրյանը հանդես է գալիս Մոսկվայի ՀԱՄ թիմում, որտեղ խաղում է 2-րդ խաղատախտակի վրա, իսկ 4-րդ խաղատախտակի վրա հանդես է գալիս Սերգեյ Գրիգորյանը: Սերգեյ Մովսիսյանը Սանկտ Պետերբուրգի ՖԻՆԷԿ-ի կազմում է, իսկ Վլադիմիր Յակոբյանն ընդգրկված է Եկատերինբուրգի «Ուրալի» կազմում:

Առաջին տուրում ՀԱՄ-ն ոչ-ոքի (3-3) խաղաց «64-ի» հետ, ՖԻՆԷԿ-ը 2,5-3,5 հաշվով պարտվեց «Շատարին», ընդ որում Սերգեյ Մովսիսյանը հաղթեց Տրեգուբովին, «Ուրալը» հաղթեց «Սպասիոյին» (4-2, Յակոբյանը չմասնակցեց խաղին): 2-րդ տուրում մեր բոլոր շախմատիստներն էլ հաջողություն կունենան: Ընդ որում, Յակոբյան-Շարոբոնիկով պարտիայում ընդամենը 13 քայլ կատարվեց: 20 քայլ կատարվեց Սակաեւ-Ասրյան պարտիայում: Մովսիսյանն ու Կոտոնսովը հաջողություն կունենան 29-րդ քայլում, իսկ Գրիգորյանց-Վոլոկիտինն պարտիայում ոչ-ոքի գրանցվեց 33-րդ քայլին:

ՀԱՄ-ն 4-2 հաշվով հաղթեց ՏՊՍ-ին, «Ուրալը» մեծ առավելության հասավ «Էկոնոմիս-2»-ի նկատմամբ (4,5-1,5), ՖԻՆԷԿ-ը հաղթեց «Յուժնի Ուրալին» (3,5-2,5): 2 տուրից հետո 4-ական միավորով առաջատար գլխավորում են «Ուրալը» եւ «Էկոնոմիս-1»-ը:

Գաբրիել Սարգսյանը ութ մասնակիցների թվում է

Իսպանական Մերիդա խաղաքաղաքում այսօր մեկնարկում է շախմատի միջազգային մրցաշար 8 շախմատիստների մասնակցությամբ: Ռուկ Լոմբեի անվան միջազգային 2-րդ մրցաշարին կմասնակցի Գաբրիել Սարգսյանը: Նրա մրցակիցները կլինեն չին շախմատիստներ Ցիանց Պենգսիանգը եւ Հոու Յիֆանը, հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուն, անգլիացի Մայլզ Արամսը, պերուացի Զուլիո Գռանդան, իսպանացի Մանուել Պերես Կանդելարիոն եւ մրցաշարի ամենակրտսեր մասնակից, 15-ամյա իտալացի Ֆաբիանո Կարուանան: Մրցաշարը կանցկացվի շրջանաձեւ մրցակարգով, մեկ շրջանով:

Կրաշը շահեց մրցախաղը

Չիկագոյում ավարտվեց չորս պարտիայից բաղկացած շախմատային մրցախաղը Լիլիթ Մկրտչյանի եւ Իրինա Կրաշի միջեւ: Ավարտական պարտիայում սպիտակներով խաղացող Կրաշին հաջողվեց պարտության մատնել մրցակցին եւ շահել մրցախաղը 2,5-1,5 հաշվով:

«Զենիթը» ջախջախեց մրցակցին

Ռուսաստանի Դաշնության չեմպիոն «Զենիթը» ՈւԵՖԱ-ի գավաթի խառնոց եզրափակիչ առաջին խաղում խոշոր անակնկալ մատուցեց՝ հյուրընկալվելիս ջախջախելով գերմանական «Բայերին» (4-1): Հաշիվը 20-րդ րոպեին բացեց Արշավինը, իսկ մինչեւ ընդմիջում Կիսլինգը վերականգնեց հավասարակշռությունը: Ընդմիջումից հետո Պոդրեբնյակը, Անյուկովն ու Դենիսովը 3 անգամ գրավեցին դաշտի տերերի դարպասը՝ ավարտելով «Բայերի» ջախջախումը:

Գերմանական մյուս ակումբը՝ Մյունխենի «Բավարիան», որին էստեղ ՈւԵՖԱ-ի գավաթի մրցաշարում հաղթողի գլխավոր հավակնորդ են համարում, սեփական հարկի տակ «Խետաֆեի» հետ խաղում ձեռքից բաց թողեց հաղթանակը: 26-րդ րոպեին Տոնին առաջ մղեց «Բավարիային»: Սակայն վերջին րոպեին Կոնտրան խրոնանացիներին փրկեց պարտությունից: Ոչ ոքի ավարտ ունեցան նաեւ «Գլազգո Ռեյնջերս»-«Սպորտինգ» (0-0) եւ «Ֆիորենտինա»-«Էյնդհովեն» (1-1) մրցախաղերը:

Թոփմելերը պատշտոնանկ արվեց

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պատշտոնանկ է արել երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, գերմանացի մասնագետ Կլաուս Թոփմելերին: Ըստ ֆեդերացիայի նախագահ Նոդար Ախալկացու, պատճառը եվրո-2008-ի ընտրական մրցաշրջանում հավաքականի ցույց տված անբավարար արդյունքներն են: Վրաստանի հավաքականն ընտրական խմբում գրավել էր նախավերջին տեղը՝ առաջ անցնելով միայն Ֆարերների ընտրանուց: Ախալկացին նաեւ հայտարարել է, որ ֆինանսական հարցերը եւս լուծված են: Բանն այն է, որ Թոփմելերը հինգ ամիս աշխատավարձ չէր ստացել: Մոտ ժամանակներս կլուծվի նոր գլխավոր մարզչի հարցը:

Թոփմելերը անցած դարի 70-ական թվականների հայտնի հարձակվողներից էր: Իսկ ահա մարզական գործունեություն ծավալելով, առայժմ նրա գլխավորած թիմերը ոչ մի հաջողության չեն հասել:

Բոլիդը վաճառվել է աճուրդով

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի «Ռեդ Բուլ» թիմի մարզիկ Դեյվիդ Կուլթարդի բոլիդը, որով նա հանդես է եկել 2007-ին Սիլվերստոունում, աճուրդում վաճառվել է 210.050 եվրոյով: Ստացված ողջ հասույթը փոխանցվել է Wings of Life բարեգործական հիմնադրամին, որը նախատեսված է նյարդային համակարգի հիվանդությամբ տառապող հիվանդներին օգնելու համար: Մինչ այդ, 2007-ի ընթացքում «Ռեդ Բուլ» թիմի բոլիդների վրա 20 դոլարով ցանկացողները հնարավորություն ունեին տեղադրելու իրենց լուսանկարները: Այդ գումարները եւս փոխանցվել են հիմնադրամին:

Բոլիվիացիները դժգոհ են ՖԻՖԱ-ի որոշումից

Բոլիվիայի ֆուտբոլի ֆեդերացիան ՖԻՖԱ-ի դեմ դատական հայց է ներկայացրել մարզական վճռաբեկ դատարան: Ինչպես հայտնի է, ՖԻՖԱ-ի որոշմամբ արգելվում է ծովի մակերեւույթից 3000 մետրից բարձր տարածություններում ֆուտբոլային հանդիպումների անցկացումը: Իսկ Բոլիվիայի գլխավոր մարզադաշտը, որ գտնվում է Լա Պասում, 3577 մետր բարձրության վրա է: Հենց այդտեղ է երկրի հավաքականն անցկացնում իր հանդիպումները: ՖԻՖԱ-ի արգելքը դժվարին կացության մեջ է դրել բոլիվիացիներին: Իսկ Բոլիվիայում հիմնախնդիրներ են ծագում արդեն մրցակիցների մոտ:

Ըստ պատասխանի ԱՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ժողովրդին են ծառայում, թե՞ իրենց

Ամերիկյան «Ֆորբս» ամսագիրը ուղղակի սիրահարված է Ռուսաստանին: Այս երկիրն իր անսպառ ռեսուրսներով ամենայնս բավարարում է հրապարակության յուրահատուկ պահանջները: Որ մեծահարուստի գրպանն, ասես, չի մտնում ամսագիրը՝ օլիգարխների, գազխաներների, բանկիրների, ձեռնարկատերերի... Սակայն վերջին հարի ոլորումները շատ ավելի նրբանկյա են՝ խոսքը վերաբերում է ռուսաստանցի պառլամենտականներին, այսպես կոչված, ժողովրդի ծառաներին:

Ռուսաստանի պառլամենտն ունի երկու պալատ՝ վերին, որ կոչվում է Դաշնային խորհուրդ, եւ ներքին՝ Պետական դումա: Ահա եւ, ըստ «Ֆորբսի», միայն վերին օրենսդիր մարմնում բուն են դրել 12 միլիարդատերեր, ընդ որում, ինչ մակարդակի...

Դաղստանի ներկայացուցիչ Սուլեյման Քերիմովն, օրինակ, սեփականում է 17,5 միլիարդ դոլար (համեմատեք Հայաստանի բյուջեի հետ): Մյուսներն, իհարկե, համեմատաբար «աղքատ» են՝ 3,9, 3,3, 3,2 միլիարդ եւ այլն: «Ամենաչափավորն» ունի սոսկ մեկ միլիարդ: Պառլամենտի անդամների ընդհանուր կարողությունը հասնում է 41 միլիարդի:

Անշուշտ հայտնի է, որ իշխանությունն ու հարստությունը շաղկապված են ի սկզբանե: Բայց արտաքոց է դա մի երկրում, որտեղ բնակչության մեծ մասը սոսկ գոյատեւում է:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

2007-ին ինտերնետում ամերիկացիներից կորզվել է 239 մլն դոլար

Անցյալ տարի համացանցում խարդախների զոհը դարձած ամերիկացիների թիվը կրճատվել է, բայց կորզված ընդհանուր գումարը հասել է ռեկորդային 239 մլն դոլարի: Այդ մասին հաղորդում է Ֆրանսայես գործակալությունը, վկայակոչելով ՀԴԲ-ի հրապարակած հաշվետվությունը:

2007-ին ինտերնետային խարդախություններից տուժած ամերիկացիները ներկայացրել են 207 հազար դիմում, ինչը 492-ով պակաս է նախորդ տարվանից: Միեւնույն ժամանակ նրանց կրած վնասների գումարն ավելացել է 198 մլն-ով:

Համացանցում առավել տարածված հանցագործությունը կամ ածուռից գնված ապրանքը տեղ չհասցնելն է, կամ էլ՝ ցածրորակ ապրանք առաքելը: ՀԴԲ գործակալ Ջոն Հեմբրիկի խոսքերով, վերջերս խարդախները լայնորեն օգտագործում են տնային աշխատանքի առաջարկները, ֆինանսական բուրգերը, ծանոթությունների կայքերում դրած կորզելը, ինչպես նաեւ կարծեցյալ բարեգործության նպատակով միջոցների հանգանակումը:

Ինտերնետում խարդախություններից տուժածների 3/4-ը տղամարդիկ են: Հեմբրիկի խոսքերով, դա բնավ չի նշանակում, թե նրանք ավելի դյուրահավատ են. ապարդյուն նրանք ավելի շատ են հակված գնումներ կատարելու եւ համացանցում գումար ծախսելու: Ամերիկացի տղամարդկանցից կորզված միջին գումարը 765 դոլար է, կանանցից կորզվածը՝ 552: 5-100 հազար դոլարանոց կորուստները կազմում են դեպքերի 12 տոկոսը:

Ինտերնետում հանցավոր գործունեության կազմակերպիչների մեծ մասը տղամարդիկ են: Վիճակագրության համաձայն, խարդախներն առավել մեծ թիվ են կազմում ԱՄՆ զարգացած նահանգներում (Կալիֆորնիա, Ֆլորիդա եւ Նյու Յորք), ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Իտալիայում, Նիգերիայում եւ Ռումինիայում:

armentel

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Արմենտել» ՓԲԸ դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ Արագածոտնի մարզում (Բյուրական, Ներքին Բազմաբերդ, Ակունք), Արարատի մարզում (Արարատ, Ուրցալանջ), Արմավիրի մարզում (Փարահար, Գայ, Բագարան), Գեղարքունիքի մարզում (Ջորավանք, Թթուջուր, Նորաբեղ, Արեւիկ հանգստյան տուն, Ծովինար, Մադինա, Վարդենիս), Շիրակի մարզում (Գյումրիի Անի թաղամաս), Տավուշի մարզում (Բարեկամավան, Վերին Կարմիր աղբյուր, Իծահար, Իջեւան), Լոռու մարզում (Սարչապետ, Պուշկինո, Օձուն, Լոռուս), Վայոց Ձորի մարզում (Եղեգնաձոր, Ելփին, Արենի), Սյունիքի մարզում (Սիսիան, Սառնակունք, Շուռնուխ, Անդոկավան, Շիկահող), եւ CDMA ցանցի միջոցով ֆիքսված հեռախոսակայանի կազմակերպման նպատակով Tx/Rx 463,975/453,975; 465,225/455,225; 466,475/456,475 ՄՀց (3 հաղորդման/ 3 ընդունման) ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար:

Արմենիա Տելեֆոն Կոմպանի

Council of Europe

800 million Europeans 47 member States

The Council of Europe, based in Strasbourg, France, is a political organisation founded in 1949 to promote greater unity among its member States. Today its membership numbers 47 States across Europe, working together to promote democracy, human rights and the rule of law and to develop common responses to political, social, cultural and legal challenges.

Competitive examination open to nationals of member States of the Council of Europe

Assistant Lawyer - Armenia

for the Registry of the European Court of Human Rights, Strasbourg, France

Fixed-term position (initial one year contract)

Vacancy Reference: e23/2008

The European Court of Human Rights was set up in 1959 by the Council of Europe as one of its principal mechanisms for enforcing the obligations entered into by contracting states under the European Convention of Human Rights which protects the civil and political rights and freedoms of Europe's 800 million citizens.

The Young Lawyers' Scheme. This opportunity opens the doors of the European Court of Human Rights to legal professionals at the start of their career. Dealing with individual applications and assisting senior colleagues in handling more complex applications, you will benefit from the Registry's in-house training programme. You will also have regular working contact with experienced case lawyers, senior managers and judges.

The candidate. With professional training or studies in a relevant field, you will ideally hold a university degree in law and have legal experience, preferably acquired in the judicial service. A good understanding of the Armenian legal system is also essential. You should have an excellent knowledge of the Armenian language, a very good knowledge of one of the official languages of the Council of Europe (English or French) and a basic knowledge of the other.

To apply. Applications must be made **in English or French** using the Council of Europe on-line application system only. By connecting to our website **www.coe-recruitment.com** you can consult the detailed vacancy notice and create and submit your on-line application.

Closing date for receipt of applications: 23 April 2008 (midnight French time)

Under its equal opportunity policy, the Council of Europe is aiming to achieve parity in the number of women and men employed in each category and grade.

The Council of Europe welcomes applications from all suitably qualified candidates, irrespective of gender, disability, marital or parental status, racial, ethnic or social origin, colour, religion, belief or sexual orientation.

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Building & Reconstruction

EXPO 2008

Շինարարություն եվ վերանորոգում

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հրավիրում ենք այցելել
Շինարարություն եւ վերանորոգում EXPO 2008
հինգերորդ միջազգային մասնագիտացված ցուցահանդես-տոնավաճառը

Ապրիլի **11-14** April

Երևան / Yerevan

Վարդանանց փող. **69** Vardanants Str.

Մարզահամալիր "Դինամո" / "Dinamo" Sportcomplex

Աշխատանքային ժամերը / Working hours

11.00 - 18.00

Պաշտոնական բացման արարողությունը՝ ապրիլի 11-ին ժամը 12:00
Official opening ceremony 11 of April 12:00

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

LOGOS EXPO Center

3, Hakob Hakobyan str.,
Yerevan 0033, Republic of Armenia

Tel./Fax: (+374 10) 23 5775, 26 5635, 27 1330
Mob.: (+374 91) 42 0982
E-mail: expo@expo.am
URL: www.expo.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պաշտամունքային առքուց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՍԱԿ-ը (պատվիրատու) «ՊՍԱԹ ՊԱՊ ԳՀԱՊՁԲ-08/02» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ «Պաշտամունքային առքուց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՍԱԿ-ի հանձնարարի առքուց-թանգարանների նուրբ տոնների տպագրման աշխատանքներ իրականացնելու համար: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ»-ի «Պաշտամունքային առքուց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈՍԱԿ-ի N 16300140325 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ Երեւան, Ռիպրով 15, հեռ.՝ 58 74 25, Վ. Իսահակյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12-ը:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 04.04.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	308.31
EUR	1	ԵՎՐՈ	484.45
RUR	1	Ռուս. ռուբլի	13.08
GEL	1	Վրաց. լարի	212.04

Գրանցվել է բանկի նոր մասնաճյուղ

Կենտրոնական բանկի նախագահի ապրիլի 1-ի թիվ 1/296 Ա որոշման համաձայն, գրանցվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» «Գարեգին Նժդեհ» մասնաճյուղը, որը գործելու է ք. Երեւան, Բագրատունյաց 14, շինություն 110:

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երեւանյան միջոցառումների կազմակերպման կենտրոն» ոչպետական ոչ առեւտրային կազմակերպությունը **գրենական պիտույքներ ձեռք բերելու հանձնարարությամբ կազմակերպում է մրցակցային բանակցություններ:**

Մրցակցային բանակցությունների հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 ՀՀ դրամ փոխանցել «Երեւանյան միջոցառումների կազմակերպման կենտրոն» ոչպետական ոչ առեւտրային կազմակերպության «Հայէկոնոմբանկ» 16300810013 հաշվեհամարին եւ սույն հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել «Երեւանյան միջոցառումների կազմակերպման կենտրոն» ոչպետական ոչ առեւտրային կազմակերպությանը հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Սարյան 22 (հեռ.՝ 53-11-41), հանձնաժողովի քարտուղար Շ. Սահակյանին:

Մրցակցության բանակցության հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 15-ը:

«Երեւանյան միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈՍԱԿ

ՁՈՒԱԿՅԱՏ ՀԱՄԱՐ ՅԱՏԵԳՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Հրատարակման պատասխանատու, գլխ. խմբ. Նելլի Սեդրակեան: Տիրաժը՝ 3000, առողջության է տպագրության՝ 4.04.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արեւելյան 2: